

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ԼԵԶՈՒԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՅԱԿՈՒԲ ԶՈԼԱՔԵԱՆ

ԱՐԵՒՄ ՏԱՀԱՅԵՐԷՆ

(կանոնակարգ եւ խնդիրներ)

Բ. Գիրք

ԵՐԵՒԱՆ - 2019

**ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ԼԵԶՈՒԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՅԱԿՈՒԲ ՉՈԼԱՔԵԱՆ

**ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

(Կանոնակարգ եւ խնդիրներ)

Բ. Գիրք

Երեւան 2019

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Չ 730

Կը տպագրուի ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի գիտական խորհուրդի որոշումով

ՉՈՒԱՔԵԱՆ ՅԱԿՈՒՐ
Չ 730 ԱՐԵՒՄՏՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
(կանոնակարգ եւ խնդիրներ)/ ՅԱԿՈՒՐ ՉՈՒԱՔԵԱՆ.- Եր.:
Աստղիկ, 2019. Բ. գիրք.- 152 էջ:

Բ. գիրքը շարունակութիւնն է հեղինակի *Արեւմտահայերէնի քերականութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ)* Ա. գիրքին (Երեւան, Աստղիկ, 2017) ու կը ներկայացնէ արեւմտահայերէնի բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական եւ ձայնարկութիւն խօսքի մասերուն ձեւաբանութիւնն ու շարահիւսական իրայատկութիւնները, լայնօրէն կը քննէ կանոնակարգման հարցերը՝ անդրադառնալով գոյութիւն ունեցող տարաբնոյթ տարբերակներուն ու բազմաձեւութիւններուն, որոնցմէ ոմանք կու գան արեւմտահայերէնի ակունքներէն, իսկ ուրիշներ թափանցած են խօսակցական լեզուէն:

Նախատեսուած է լեզուաբաններուն եւ հայերէնի տարրական քերականութեան ծանօթ բոլոր հետաքրքրուողներուն համար:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-9939-50-440-7

© Յ.ՉՈՒԱՔԵԱՆ, 2019

Ե.- ԲԱՅ

5.1.- Բայը իբրև խօսքի մաս

Բայը հայերէնի հիմնական խօսքի մասերէն մէկն է:

Իմաստաբանօրէն՝ բայ կոչուող բառերը կ'արտայայտեն գործողութիւն, շարժում, ընթացք՝ *խաղալ, երթալ, սահիլ, խօսիլ, բաժնել, սպասել*: Բայը այս յատկանիշներով կը զատորոշուի բայանունէն, որ բայի հիմքով կազմուած գոյական է, գործողութեան առարկայացուած անուն, շարժումի անուն, որ ընթացք չ'արտայայտեր, ինչպէս՝ *խաղ, երթ, սահք, խօսք, բաժանում, սպասում* եւ այլն:

Ձեւաբանօրէն՝ բայը թեքուող խօսքի մաս է. գոյական խօսքի մասի թեքումը հոլովում կը կոչուի, իսկ բայի թեքումը՝ խոնարհում: Բայի խոնարհուած ձեւերը կը կոչուին դիմաւոր բայեր, իսկ անդէմ ձեւերը՝ դերբայներ: Բայի խոնարհումը նոյն բայը կ'օժտէ բազմաթիւ ձեւերով՝ անոնց տալով դէմքի, թիւի, եղանակի եւ ժամանակի կարգերը (*գրէ՛* – հրամայական եղանակ, ներկայ ժամանակ, եզակի, Բ. դէմք): Բայի թէ՛ անդէմ եւ թէ՛ դիմաւոր ձեւերուն յատուկ յատկանիշ է նաեւ սեռը (*սիրել՝* ներգործական, *սիրուիլ՝* կրաւորական, *քնանալ՝* չէզոք, *քնացնել՝* պատճառական):

Շարահիւսօրէն՝ դիմաւոր բայը նախադասութեան ստորոգիչն է (Ծառը **ծաղկեցաւ**: Ծառը **ծաղկած է**) կամ ստորոգիչի բաղադրիչ (Ծառը *բերքառատ է*): Անկախ գործածութիւն ունեցող դերբայները կը կատարեն գոյականի եւ ածականի շարահիւսական պաշտօններ:

5.2.- Բայական սկզբնածեւ, լծորդութիւն եւ խոնարհիչ

Բառակազմական տեսակէտէն բայի դերբայական եւ դիմաւոր բոլոր ձեւերուն սկզբնածեւը կը վերջանայ *ել, իլ* եւ *ալ* բայական ածանց-վերջաւորութիւններէն մէկով՝ *գրել, խօսիլ, կարդալ*: Բայի սկզբնածեւը արեւմտահայ քերականութեան մէջ կը կոչուի *աներեւոյթ* կամ *անորոշ դերբայ*: Բայերը բառա-

րաններուն մէջ կը ներկայանան իրենց աներեւոյթով: Օրինակ՝ *գրեցի, կը գրէի, գրեցէք, գրած, գրելու, գրեր, գրած եմ, չեմ գրեր* եւ այլ բայական դիմաւոր կամ անդէմ ձեւերը բառարանին մէջ չենք գտներ, կը գտնենք միայն *գրել* աներեւոյթը:

Միայն պակասաւոր բայերը չունին աներեւոյթ. զանոնք կը ճանչնանք ներկայ ժամանակի եզակի Ա. դէմքով՝ *եմ, կամ, ունիմ, գիրեմ*:

Բայերուն ուղիղ ձեւը կամ աներեւոյթը կազմող *ել, իլ, ալ* ածանց-վերջաւորութիւնները կը կոչուին լծորդութիւններ, իսկ անոնց ձայնաւոր բաղադրիչները՝ *ե, ի, ա* ձայնաւորները, խոնարհիչներ, որովհետեւ անոնցմով պայմանաւորուած են տուեալ բայի դիմաւոր ձեւերուն վերջաւորութիւնները: Այսպէս՝

– *Վազել՝ կը վազեմ, վազեցի, կը վազէի, վազեցէք, վազէ. ե* խոնարհիչը անցեալ անկատար ժամանակներուն մէջ եւ բայավերջին կը փոխակերպուի *է-ի*.

– *Խօսիլ՝ կը խօսիմ, կը խօսէի, խօսեցայ, խօսեցէք, խօսիր/խօսէ. ի* խոնարհիչը անցեալ անկատար ժամանակներուն եւ հրամայականին մէջ կը փոխակերպուի *է-ի* եւ *ե-ի*. Եզակի հրամայականին մէջ կը մնայ անփոփոխ կամ կը փոխակերպուի *է-ի*:

– *Կարդալ՝ կը կարդամ, կը կարդայի, կարդացի, կարդացէք, կարդա՛: Ա* խոնարհիչը փոխակերպումի պարագայ չունի:

Նկարի ունենալ, որ

– Արեւմտահայերէնի մէջ կայ նաեւ *ուլ* լծորդութեամբ բայերու շարք մը՝ *երդնուլ, զեղուլ, զենուլ, հեղուլ, յենուլ, զգենուլ, զքօսնուլ*: Ասոնք զուգաձեւաբար կրնան հանդէս գալ նոր ձեւերով՝ *զեղել, զենել, հեղել, յենիլ, զգենալ, զքօսնիլ*, իսկ *երդնուլ* բայը փոխարինուած է *երդուիլ* տարբերակով, բայց ասելի շատ՝ *երդում ընել* դարձուածքով: *Ուլ* լծորդութեան ամենէն կենդանի ձեւերը ներկայ ժամանակներուն կը պատկանին, ուր առկայ է *ու* խոնարհիչը՝ *կ'երդնում, մատաղ կը զենուն*,

արհուն կը հեղուն, համազգեստ կը զգենուն, կը զբոսնուն եւ այլն. այդպէս նաեւ պիտի երդնում, կ'երդնում...: Ասոնք հնածեութիւն կը նկատուին. ունին ոճական արժէք: Միւս ժամանակները կը փոխարինուին նոր ձեւերով միայն՝ երդում ըրի, զեղեցի, զենեցի, հեղեցի, յենեցէք, զգեցայ, զբոսնեցէք:

Նոյնպիսի գործածութիւն եւ արժէք ունի նաեւ թողուլ բայը՝ կը թողում, թողում, պիտի թողում. ու խոնարհիչը կը պահպանուի նաեւ անցեալ կատարեալի եւ յոգնակի հրամայականին մէջ՝ թողուցի, թողուցիր, թողուց, թողուցէք: Հրամայականի եզակին արմատական է՝ թո՛ղ: Ու խոնարհիչը կը պահպանուի նաեւ ժխտական դերբայի պարագային՝ չեմ թողուր: Օրինակներ՝ Հանգիստ **թողուցէք** մեզի (ՋԵ): **Թողուցէք** զիս ճամբորդութեանս մէջ մինակ (ԴՎ): **Թողուցէք** ձեր կնամեծար մարդու փաղաքշանքը (ԳՁ): Պերճուհի **թողուց**, որ ձեռքը բռնէ (ԳՁ): Կեանքի նաւակն հետք **չթողուց** իր ետին (ՌՌ): Այդ հարցին պատասխանը **կը թողում** ձեզի (ՍԱ):

Թողուլ բայը ներկայիս առօրեայ խօսակցականին ու գրականին մէջ յաճախ կը փոխարինուի ձգել բայով՝ աւանդ ձգել, պատգամ ձգել, ժառանգ ձգել, ձգէ գնա՛, ձգէ եկո՛ւր: Վերի բոլոր օրինակները ներկայիս փոխանակելի են ձգել-ով՝ **Ձգեցէք** զիս ճամբորդութեանս մէջ մինակ: **Ձգեցէք** ձեր կնամեծար մարդու փաղաքշանքը: Այդ հարցին պատասխանը **կը ձգեմ** ձեզի: Այլ օրինակներ՝ **Ձգեցէք** որ մանուկները ինձի գան: Հարցը պատմաբաններուն **ձգեցէք**: Զիս հանգիստ **ձգեցէք**: Կօշիկներս Պոլիս **ձգեցի**:

Թո՛ղ նախկին հրամայականը իբրեւ վերաբերական բառ կը գործածուի ըզձական եղանակի բայածեւերուն հետ, մանաւանդ Գ. դէմքին՝ արտայայտելով մաղթանք, փափաք, թոյլտուութիւն ու հրաման: Արեւմտեան կողմն աշխարհի / Բերրիութիւն **թող ըլլայ** (ԴՎ): Ո՛վ **մարդկային** արդարութիւն, **թո՛ղ ես թքնեմ քու ճակատիդ...** (Ս): **Թող** պալատներ **վայելեն** մեծահարուստն ու արքան (ՄԻ): Բացօդեայ շար պառկեցաւ, / **Թող** քիչ մըն ալ հողին տակ **քնանայ** (Ջ): Ով որ քաջ է՛ ինչ կը սպասէ, / Արդէն ժամանակն է՛ **թող գայ**, / Մահ պատե-

րազմի օրհաս է, / Ազգայութիւն սիրողը **թող գայ**: Սովորական շարադասութեամբ կը դրուի բայէն առաջ, կրնայ ընդմիջուիլ այլ անդամներով եւ ըլլալ յետադաս:

Նոյնը **թող որ** կապակցութեամբ ալ կ'երեւի. *Թող որ մեր զաւակները պատերազմ չտեսնեն, այլ ապրին խաղաղ պայմաններու մէջ (Թ)*: Այսպիսի գործածութիւնը արեւելահայերէնին աւելի յատուկ է:

5.3.- Աններածանց եւ ներածանցաւոր բայեր

Բայերու ուղիղ ձեւերը կազմուած կ'ըլլան հիմքէ, ներածանցէ եւ վերջաւորութիւններէ: Հիմքէ եւ վերջաւորութենէ կազմուած բայերը կ'ըլլան *աններածանց* (վազ-ել, սահ-իլ, խաղ-ալ), իսկ հիմքէ, ներածանցէ եւ վերջաւորութենէ կազմուածները՝ *ներածանցաւոր* (փախ-չ-իլ, մօտ-են-ալ, գոհանալ, խաղ-ցն-ել, ներկ-եցն-ել, հեռ-ացն-ել, քեր-ու-իլ):

Սա կը նշանակէ, որ բոլոր բայերը ածանցաւոր կազմութիւններ են¹:

Բային հիմքը կրնայ ըլլալ պարզ արմատ մը (վազ-ել, խօս-իլ, խաղ-ալ), ածանցաւոր բառ մը (թագաւոր-ել, անտես-ել), բարդ բառ մը (շրջապատ-ել, վազվզ-ել): Բայահիմքերը կրնան ըլլալ անկախ գործածութիւն ունեցող (շրջապատ-ել, ներկ-ել, հիմնաւոր-ել, շփոթ-ել, լող-ալ) եւ անկախ գործածութիւն չունեցող բառեր (հի-անալ, ընկրկ-իլ, սկս-իլ, խօս-իլ): Բնական է, հիմքերուն յատուկ է շեշտափոխական հնչիւնափոխութիւնը (կռուիլ<կռիւ, ջրել<ջուր, լերդանալ<լեարդ, սուրալ<սոյր), կամ պատմական հնչիւնափոխութեան զանազան երեւոյթներ (բռնել<բռուն>բռռ, սորվիլ<սովոր>սորվ):

Բայի խոնարհումի ատեն բայական այս հիմքերը փոփո-

¹ Բացի կրաւորական (-ուիլ), պատճառական (-ացնել/եցնել/ցնել) եւ սոսկածանցաւոր (-անիլ, -անալ, -ենալ, -նել, -նիլ, -նալ, -չիլ, -լել, -լալ) եւ բազմապատկական ածանցերով կազմուած բայերէն՝ հայերէնի միւս բայերը մեր քերականութեան մէջ պայմանականօրէն կը կոչուին *պարզ բայեր*: Իսկութեան մէջ պարզ բայեր կրնանք նկատել կարգ մը զարտուղի բայերու եզակի հրամայականները միայն՝ *բեր, տես, ել, խած* եւ այլն, թէեւ ասոնց սուր շեշտ կրելը յաւելում մըն է պարզութեան վրայ:

խութիւններու չեն ենթարկուիր (պատ-ել՝ պատեմ, պատեցի, պատէ. սորվիլ՝ պիտի սորվիմ, սորվեցայ, սորվեցէք):

Հայերէնի մէջ բայական ներածանցները չորս տեսակ են.

– սուկածանցներ՝ *ան, են, ն, ւ, չ*.

– բազմապատկական ածանցներ՝ *դ, ադ, ոդ, կդ, ոդ, ուրդ*.

– պատճառական ածանցներ՝ *ացն, եցն, ցն*.

– կրաւորական ածանց՝ *ու*:

Հետեւաբար՝ ներածանցաւոր բայերը կ'ըլլան սուկածանցաւոր, բազմապատկական, պատճառական եւ կրաւորական բայեր:

5.4.– Սուկածանցներ

Սուկածանցները բայի սկզբնաձեւի բաղադրիչներ են. ասոնցմով կազմուած բայերը կ'ունենան *նել, նիլ, անիլ, նալ, անալ, ենալ լալ, լել, չիլ* վերջաւորութիւնները՝ *գդ-նել, հաս-նիլ, գիդ-նալ, հեռ-անալ, մօդ-ենալ, ըլ-լալ, ել-լել, թռ-չիլ, փախ-չիլ*: Առանց սուկածանցի՝ տուեալ բայը գոյութիւն չի կրնար ունենալ, գոյութիւն չունի: Օրինակ՝ *մօդ-են-ալ* բայը չի կրնար ըլլալ *մօդալ*:

Սուկածանցները քերականական ձեւոյթներ են. անոնցմով կ'որոշուի խոնարհման անցեալ կատարեալի հիմքը: Որոշելու համար, թէ բայը պարզ է, թէ սուկածանցաւոր, կը գտնենք այդ բային անցեալ կատարեալ ժամանակի կամ հրամայական եղանակի ձեւերը. եթէ *ել* եւ *իլ* խումբերու պարագային *ն, լ* եւ *չ* հնչիւնները իյնան, իսկ *ալ* խումբի պարագային՝ *ց*-ի հերթագայութիւն՝ ուրեմն այդ բայերը սուկածանցաւոր են: Օրինակ՝ *կը գտնեմ-գտայ, գտի՛ր, կ'ելլեմ-ելայ, ելէ՛ք, կ'անցնիմ-անցայ, անցէ՛ք, կը թռչիմ-թռայ, թռէ՛ք, կը թեթեւնամ-թեթեւցայ, թեթեւցի՛ր, կը մօտենամ՝ մօտեցայ, մօտեցէ՛ք* եւ այլն: Այս փոփոխութեան պարագային *են* եւ *ան* սուկածանցներու ձայնաւորները կը մնան՝ *հեռանալ՝ հեռացայ, հեռացէ՛ք, մօտենալ՝ մօտեցայ, մօտեցէ՛ք*:

Արդի արեւմտահայերէնի մէջ սոսկածանցները իրարմէ կը տարբերին իրենց կենսունակութեամբ ու կիրառական դաշտերով. այսպէս՝

1) Մեծ թիւ կը կազմեն *ան* սոսկածանցով *ալ* լծորդութեան բայերը: Անոնցմէ ոմանք փոխանցուած են հին լեզուէն, իսկ միւսերը նոր կազմութիւններ են: Անալ-ը կենսունակ վերջաւորութիւն մըն է, ինչպէս՝ *բարկանալ*, *հեռանալ*, *գոհանալ*, *սպանալ*, *իմանալ*, *զարմանալ*, *քարանալ*, *փայտանալ*, *կարծրանալ*, *օտարանալ*, *մտերմանալ*, *բարեկամանալ*, *ընկերանալ*, *ծանրանալ*, *շնանալ*, *գռեհկանալ*, *ծերանալ*, *բրտանալ*, *կայանալ*, *հայանալ* եւ այլն:

Ան սոսկածանցի մասին պէտք է գիտնալ, որ

– Գրաբարի *ուցանել* վերջաւորութեամբ բայերը շրջան մը նոյնութեամբ կը պահուէին արեւմտահայերէնի մէջ: Արդի հայերէնը գրեթէ հրաժարած է գրաբարեան ձեւերէն. *ապացուցանել-ապացուցել*, *զեկուցանել-զեկուցել*, *ծանուցանել-ծանուցել*, *հատուցանել-հատուցել*, *մատուցանել-մատուցել*, *յարուցանել-յարուցել*, *կառուցանել-կառուցել*, *ուսուցանել-ուսուցել*, *սնուցանել-սնուցել*: Ամբողջապէս մերժել ու գործածել միայն պարզ ձեւերը: Ասոնք կը խոնարհուին *ել* խումբի պարզ բայերուն պէս. ինչպէս *վազել*՝ *վազեցի*, *վազէ*, այդպէս ալ *ապացուցել*՝ *ապացուցեցի*, *ապացուցէ*, *զեկուցել*՝ *զեկուցեցի*, *զեկուցէ*՝ *ծանուցել*՝ *ծանուցեցի*, *ծանուցէ* եւ այլն:

– Գրաբարի *անել* վերջաւորութեամբ բայերէն ոմանք շրջան մը նոյնութեամբ կը պահուէին արեւմտահայերէնի մէջ: Արդի հայերէնը գրեթէ հրաժարած է գրաբարեան ձեւերէն՝ *բուծանել-բուծել*, *լուծանել-լուծել*, *մուծանել-մուծել*, *տարածանել-տարածել*, *օծանել-օծել*, *թքանել-թքնել-թքել*: Ամբողջապէս մերժել հին ձեւերը. ներկայիս ասոնք պարզ աններածանց կանոնաւոր բայեր են արդէն (բուծել, լուծել, մուծել, տարածել, օծել, թքել) ու կը խոնարհուին պարզ բայերուն պէս, ինչպէս *վազել*՝ *վազեցի*, *վազեցիր*, *վազեց*, այդպէս ալ *թքել*՝ *թքեցի*, *թքեցիր*, *թքեց*: Այս շարքէն միայն *բեկանել* բայը պա-

հաճ է *ան* սոսկածանցը ու կը գիտակցուի իբրեւ պարզ բայ, այսինքն՝ չի գիտակցուիր իբրեւ սոսկածանցաւոր՝ *բեկանելի՝ բեկանեցի*:

– *Գրաբարի անիլ* վերջաւորութեամբ բայերէն ոմանք նոր հայերէնի մէջ *ան* սոսկածանցը կորսնցնելով պարզ բայերու վերածուած են՝ *փրթանիլ-փրթիլ, պրծանիլ-պրծիլ, սկսանիլ-սկսիլ*: Ասոնք կատարելի մէջ զարտուղի կը մնան՝ *սկսայ, սկսար, սկսաւ, սկսէք*: Մերժուած կը մնան խօսակցական *սկսեցայ, սկսեցար, սկսեցաւ, սկսեցէք ձեւերը*:

– *Ուսանիլ* բայը նոր հայերէնի մէջ կը գիտակցուի իբրեւ պարզ բայ: Հետեւաբար արդի արեւմտահայերէնի մէջ սխալ է *ուսայ, ուսար, ուսաւ ըսելը ուսանեցայ, ուսանեցար, ուսանեցաւ* ձեւերուն փոխարէն:

– *Ծնանիլ-ծնանեցաւ* նոյնպէս կը գիտակցուի իբրեւ պարզ բայ: Ունի ներգործական եւ չէզոք կիրառութիւն: Օրինակ՝ *եղը կամ էգ եղջերուն Մայիսին մէջ կամ Յունիսին սկիզբը մէկ կամ երկու եղնորթ կը ծնանի*: Հարուստին եզն ալ *կը ծնանի (ժ)*: *Դուն հիմա ամուլ ես ու չես ծնանիր (ՄԳ)*: *Նոր ծնանած կովը շիտակ տուն կու գայ (ժ)*: *Ես երկունքի ցաւ քաշած չեմ եւ ծնանած չեմ (ՄԳ)*: *Քու աղամանդեայ արգանդէդ, ո՛վ Դիցուիի, ահեղ Աստուած մը ծնանէ՛ մեզ... (Ս)*: Պէտք է գիտնալ, որ *ծնանիլ* բայը արդի հայերէնի մէջ ունի սահմանափակ գործածութիւն, կը գործածուի գլխաւորաբար կենդանիներու պարագային: Անոր փոխարէն լայնօրէն կը գործածուի *ծնիլ* բայը:

2) *Են* սոսկածանց կայ քիչ բառերու մէջ՝ *մօտենալ, մերձենալ, յագենալ, կարենալ, կամենալ*:

3) *Ն* սոսկածանցը արեւմտահայերէնի մէջ ներկայ է մեծ թիւով բայերու մէջ. գոյացած է *ան* եւ *են* սոսկածանցներու *ա* եւ *ե* ձայնաւորներու սղումով. այսպէս, ան-ի դիմաց՝ *գտանել-գտնել, մրանել-մրնել, իջանել-իջնել, տեսանել-տեսնել, զարկանել-զարնել, հաւանիլ՝ հաւնիլ, հասանել-հասնիլ, հազանել-հազնիլ, մոռանալ-մոռնալ, հնանալ-հիննալ, գողանալ՝ գողնալ, մեծանալ-մեծնալ, խոշորանալ-խոշորնալ, գիրանալ՝ գէր-*

նալ, հասկանալ-հասկնալ, սեանալ-սեւնալ, թուանալ-թոււնալ, կանաչանալ-կանաչնալ եւ այլն. են-ի դիմաց՝ գիտենալ-գիտնալ, վախենալ-վախնալ եւ այլն: Ճանաչել-ճանչնալ ածանցումը նոր գոյացութիւն է:

- Լն>լլ. լրիւ առնմանութեամբ գոյացած է Լ սոսկածանցը. *ելլել* բայը ն սոսկածանցաւոր բայ է՝ գրաբարի *ելանել* նախատիպէն, ուր ա-ի սղումէն ետք պատահած է լն>լլ առնմանութիւն՝ *ելլել*: Անցեալ կատարեալի եւ հրամայականի մէջ Լ-ն իբրեւ սոսկածանց կը կորսուի՝ *ելայ*, *ել/ելիր*: Նոյնը պատահած է նաեւ *լինել* բային՝ *ըլլալ*, որ լծորդութիւնն ալ փոխած է (*լինել*>*լինել*>*ըլլել*>*ըլլալ*):

- Ծալլել եւ կլլել բայերը կ'արտասանուին Լ-ի, իսկ *սպաննել* բայը ն-ի կրկնութեամբ: Ոմանք կը գրեն մէկ, իսկ ուրիշներ կրկնակ բաղաձայնով: Ծալլել հին հայերէնի մէջ պարզ բայ է, կատարեալը՝ *ծալեաց*: Նոր հայերէնի մէջ պարզ բայերու պէս անցեալ կատարեալը կ'ըլլայ ցոյական հիմքի վրայ՝ *-եցի*, *-եցիր*, *-եց*, բայց բոլոր բայաձեւերուն մէջ ունի Լ-ի կրկնութիւն՝ *ծալլել*, *կը ծալլեմ*, *ծալլեցի*, *ծալլէ՛*, *ծալլած*, *ծալլելիք*: Երկրորդ Լ-ն ուրեմն սոսկածանց չի կրնար ըլլալ, ինչպէս *ելլել* բային մէջ: Կը համարուի բաղաձայնի սոսկական կրկնութիւն: Հայկազեան բառարանը բառին ռամկօրէնը գրած է կրկնակ Լ-ով՝ *ծալլել*: Ներկայիս բառը գրեթէ նոյն յաճախականութեամբ երկծեւ է, թէւ բառարանները աւելի հակամէտ են *ծալել* ձեւին: Հին հայերէնի *կլանել* կամ *կլնուլ* բայը կատարեալի մէջ ունի *կլի* կամ *կլայ*: Բայը արեւմտահայերէնին անցած է *ելանել*>*ելլել* բային պէս լն/լլ լրիւ առնմանութեամբ՝ *կլանել*>*կլնել*>*կլլել*. Բայց անցեալ կատարեալին մէջ ոչ թէ գրաբարի պէս արմատական է, այլ պարզ բայերու նման ցոյական հիմք ունի, ու Լ-ն կը կրկնուի բայական բոլոր ձեւերուն մէջ՝ *կլլեցի*, *կլլեցիր*, *կլլեց*: Հայկազեան բառարանը գրաբար գլխաբառին դիմաց կու տայ *կուլ տալ* ռամկօրէնը. արեւելահայերը կը գործածեն *կուլ տալ* յարադրութիւնը: *Սպանանել* գրաբարի մէջ սոսկածանցաւոր բայ է, կատարեալը՝ *սպանի*. հրամայականը՝ *սպան*: Կը թուի, թէ նոյնն է նոր հայերէնի մէջ՝

սպաննել, բայց արեւմտահայերէնի մէջ անցեալ կատարեալը ոչ թէ գրաբարի պէս արմատական է, այլ պարզ բայերու նման ցոյական հիմք ունի, ն-ն կը կրկնուի բայական բոլոր ձեւերուն մէջ: Բառակազմական մակարդակի վրայ կը կրկնուի առաջին բաղադրիչի պարագային՝ *սպաննութիւն*, *սպաննիչ*: Արեւելահայերէնը բոլոր ձեւերուն հիմքը կը նկատէ մէկ ն-ն՝ *սպաննել*, *սպանութիւն*: Ներկայիս մենք երեք ձեւ կ'օգտագործենք. ա) կը պահենք ն-ի կրկնութիւնը ներկայ ձեւերուն մէջ, իսկ կատարեալի հիմքին մէջ կը թափենք՝ *կը սպաննեմ*, *կը սպաննէի*, *սպաննող*, բայց՝ *սպանեցի*, *սպանէ՛*, *սպանած*, *սպաներ*. բ) բոլոր ձեւերուն մէջ ալ կրկնակ ն-ն կը պահենք. *կը սպաննեմ*, *սպաննեցի*. նաեւ *սպաննիչ*. գ) բոլոր ձեւերուն մէջ կը պահենք մէկ ն՝ *կը սպանեմ*, *սպանեցի*:

Լաւագոյնն է համարել սոսկական կրկնութիւն, որ չենք գրեր²: Այս փորձը յաջողած է ոմանց քով: Ուրեմն *սպանել*, *սպանող*, *սպանած*, *կը սպանեմ*, *սպանեցի*, *սպանէ՛* եւ բնականաբար՝ *սպանութիւն*, *սպանիչ*: Նոյնպէս՝ *ծալել*, *կը ծալեմ*, *ծալեցի*, *ծալած*, *ծալելիք*. *կլել*, *կը կլեմ*, *կլեցի*, *կլած*, *կլելիք*, *կլեցնել*: Ուրեմն՝ *ծալել*, *կլել*, *սպանել*:

– Հայերէնի սոսկածանցաւոր բայերը բարդութիւններու մէջ մտնելով կը կորսնցնեն իրենց սոսկածանցը ու կը վերածուին պարզ կանոնաւոր բայերու. այսպէս՝ *առնել* սոսկածանցաւոր բայէն ունինք *ներառել*, *բացառել*, *զանցառել*, *հաշուառել*. *անցնիլ* բայէն՝ *չափազանցել*, *փոխանցել*, *դնել* բայէն *ներդրել*, *դիմադրել*, *հակադրել*, *համադրել*, *փոխադրել*, *յուսադրել*, *մղնել* բայէն՝ *հեղամղիլ*, *միջամղել*, *պագնել* բայէն՝ *երկրպագել*, *տեսնել* բայէն՝ *անտեսել*, *նախատեսել*, *կանխատեսել*, *համտեսել* եւ այլն: Ասոնք պարզ բայերու վերածուելով՝ կատարեալը կը կազմեն ցոյական հիմքով. *առնել՝ առի*, բայց *հաշուառել՝ հաշուառեցի*, *անցնիլ՝ անցայ*, բայց՝ *չափազանցել՝*

² Նաեւ անոր համար, որ եթէ սա ոչ-արմատական բաղաձայնի կրկնութիւնը գրելու ըլլանք՝ դուռ կը բանանք նորանոր հարցերու: Շատ ու շատ բառեր ունին բաղաձայնի կրկնութիւն, ինչպէս՝ *փոփոփիլ*, *հասսիիլ*, *հրամմէ*, *աննուշ* եւ այն: Մերժել:

չափազանցեցի, դնել՝ դրի, բայց համադրել՝ համադրեցի, մտնել՝ մտայ, բայց միջամտել՝ միջամտեցի:

Ախալ է ըսել ներառնել, ներառնեցի. պետք է ըսել ներառել, ներառեցի: Ձեռնել բայը կատարելի մէջ սոսկաձանցը կը պահէ եւ ունի ցոյական հիմք՝ ձեռնեցի, նոյնն է նախաձեռնել՝ նախաձեռնեցի: Կռանեան կու գայ ընձեռել, հետեւաբար՝ ընձեռեցի, բայց կայ նաեւ ընձեռնել՝ ընձեռնեցի:

Քեռնալ (արեւելահայերէն՝ բեռնել-բեռնեցի) բային կատարելալը օրինաչափօրէն ունի բեռցայ: Բարդութեան մէջ պետք է ունենար ծանրաբեռել, ներբեռել, բայց ահա՛ կը գործածուին ներբեռնել եւ ծանրաբեռնել բայերը, ուր սոսկաձանցը կը մնայ նաեւ կատարելի հիմքին մէջ. Փոփոխութիւններու նախագիծը **ներբեռնեցի** համացանցէն: Խօսքը **ծանրաբեռնեց** թիւերով:

– Խօսակցականին մէջ սոսկաձանցաւոր ել լծորդութեան սոսկաձանցավոր բայեր փոխաձ են իրենց լծորդութիւնը ալի. գտնել-գտնալ, ելլել-ելլալ, իջնել-իջնալ, հեծնել-հեծնալ, մտնել-մտնալ, տեսնել-տեսնալ եւ այլն: Լիովին մերժել:

4) Չ սոսկաձանցը արդի արեւմտահայերէնէն վերնալու միտումներ ունի. թռչիլ եւ փախչիլ բայերը կրնան հաւասարապէս հանդէս գալ թռիլ եւ փախիլ պարզ ձեւերով, բայց կատարելալը սոսկաձանցաւոր բայերուն պէս կը կազմեն արմատական հիմքով (թռայ, փախայ):

Նախկին չ սոսկաձանցաւոր միւս բայերը արդի արեւմտահայերէնի մէջ հանդէս կու գան հետեւեալ առանձնայատկութիւններով.

Դպչիլ/դպնալ (կատարելալը՝ դպայ, դպար, դպալ). դպնալ տարբերակը ունի լայն կիրառութիւն, բայց կատարելի խոնարհումը կը կատարուի չ սոսկաձանցաւոր բայերու հետեւութեամբ:

Հալչի, սառչի, ուռչի նախկին ձևերէն ունինք *հալի, սառի, ուռի*: Ասոնք իլ խումբի պարզ կանոնաւոր բայեր են արդէն (*հալեցայ, հալեցար, հալեցաւ, հալեցէք*):

Փակչի եւ *փլչի* նախկին ձևերուն դիմաց ունինք *փակիլ, փլիլ*: Ասոնք եւս վերածուած են պարզ բայերու, բայց կատարեալին մէջ կը խոնարհուին զարտուղի ձեւով՝ *փակաւ, փլաւ*: Նոյնն է նաեւ *կպչիլ/կպիլ*, կատարեալը՝ *կպայ*. արեւմտահայերէնի մէջ ունի ոճական գործածութիւն:

– *Հանգչի* (հանգստանալ) եւ *խրպչիլ* բայերուն մէջ չ-ն կը գիտակցուի իբրեւ հիմքի բաղադրիչ, որ կը մնայ կատարեալի հիմքին մէջ՝ *հանգչեցայ, հանգչեցար, հանգչեցաւ... հանգչիր*: Ուրեմն՝ *հանգչիլ* եւ *խրպչիլ* պարզ կանոնաւոր բայեր են: Ունինք *հանգիլ*՝ (մարիլ), որ աններածանց կանոնաւոր բայ է՝ *հանգեցաւ*, իսկ *մեռնիլ* իմաստով այս բայը կատարեալի մէջ ունի *հանգաւ*. *Աստի հանգչի*: *Հանգաւ ի Տէր* (գրաբար՝ *հանգեաւ*):

Մարտնչիլ, երկնչիլ բայերը կը գիտակցուին իբրեւ պարզ բայեր. ունին սահմանափակ կիրառութիւն. *Իմ քրոջս հետ մեծ ըմբշամարտութիւնով մարտնչեցայ եւ յաղթեցի* (ՍԳ): *Մի երկնչիր*, բայց միայն *հաւապա* (ՍԳ): *Հերոսի պէս մինչեւ վերջ մարտնչեցաւ*: *Անոնցմէ պէտք չէ երկնչիլ*, այլ քրտնաջան աշխատանքով յաղթահարել այդ դժուարութիւնները: *Մարտչիլ* բայը գրաբարածեւ արտայայտութիւններու մէջ տակաւին կը գործէ. *Որդիական խոնարհութեամբ մարտչիմ ի համբոյր Ձերդ Սրբութեան Օծեալ Սուրբ Աշոյն*, բայց կրնայ գործածուիլ նաեւ սահմանափակ կերպով. *Անոնք անհապապէս չեն մարտչիր* *հայաստանեան համագումարներու մասնակցութեան՝ անընդունելի գործելով պետական հովանաւորութեամբ լրագրողներու համագումար կազմակերպելու հանգամանքը*:

Թաքչիլ-թաքնուլ երկձեւ բայը ունի սահմանափակ գործածութիւն, կատարեալը նոյնպէս գրաբարածեւ է՝ *թաքուցի, թաքուցիր, թաքոյց, թաքցու՛ր*: *Թաքնուիլ* անդրադարձ բայը

ունի կանոնաւոր խոնարհում. *Թալէաթը ստիպուած էր փախչիլ ու թաքնուիլ կեղծ անուան փակ: Ամբողջ օր մը թաքնուեցայ այն տեղերը (<):*

Կորչիլ/կորնչիլ հին ձեւերը ունին սամանափակ գործածութիւն. *Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ (ՊԴ). Կորչի բռնապետութիւնը:* Այժմ արեւմտահայերէնի մէջ կայ *կորսուիլ* կրաւորակերպ չէզոք պարզ կանոնաւոր բայը՝ *կորսուեցաւ:* Խօսակցականը ունի *կորսնուիլ* մերժուած տարբերակն ալ, թէւեւ անոր *կորսն-* հիմքէն կազմուած է պատճառակերպ ներգործականը՝ *կորսնցնել:* Բուն պատճառականը կը կազմուի յարադրաւոր ձեւով՝ *կորսնցնել փայ:* Հիներուն քով կը հանդիպինք նաեւ *կորիլ* բային, յատկապէս հրամայական ձեւով՝ *Օրիորդը առանձին ըլլալ կը փափաքի եւ դուն եկեր իր հանգստութիւնը կը վրդովես. կորի՛ր... կորի՛ր... կ'ըսեմ (ՅՊ):*

5.5.– Կրկնաձեւ աներեւոյթներ

Բացի *թոչիլ/թոիլ, փախչիլ/փախիլ, դպնալ/ դպչիլ* եւ վերը նկատել տրուած զուգաձեւութիւններէն՝ արեւմտահայերէնի մէջ նկատելի են նաեւ ուրիշ զուտ ձեւական զուգաձեւութիւններ, որոնցմէ մէկէն թելադրելի է ձերբագատիլ: Այսպէս՝

– *Կարմրիլ/կարմրնալ, ճերմկիլ/ճերմկնալ, դեղնիլ/ դեղիննալ, սղիլ/սուղնալ.* երկրորդ ձեւը խօսակցականէն կու գայ եւ մերժելի է: Կայ նաեւ *սղել՝* կրճատել, յապաւել:

– *Խենթանալ/խենթանալ.* բառարանները երկուքն ալ կու տան. *խենթանալ* ձեւը ավելի տարածուած է:

– *Հոփոտել/հոփոտալ.* բառարանները մեծ մասով առաջինը կու տան. խուսափիլ երկրորդէն:

Նման պարագայ ունի *երելիլ/երելնալ/երելալ* բայը: Անցեալ կատարեալի ամենէն ընթացիկ ձեւերն են *երելցաւ, երելցան,* հրամայականը՝ *երելցի՛ր.* ասոնք կը յուշեն, որ աներեւոյթը *երելնալ* տարբերակն է: Երելիլ ձեւը ունի *կ'ենթադրուի, կը կարծուի* իմաստային երանգը՝ *կ'երելի թէ գոհ չէ: Երելի/ կ'երելի* բայաձեւերը նաեւ վերաբերական արտայայտութիւններ են, ինչպէս՝ *կարծես, կը կարծուի. Երելի շուտով կու գան:*

Թուիլ/թուալ զուգաձեռութիւնը կ'երեւի նաեւ խոնարհման բոլոր ձեւերուն մէջ. *թուիլ՝ թուեցայ, թուեցար, թուեցա...* *թուալ՝ թուացի, թուացիր, թուաց:* Ունի *կարծուիլ, երեւիլ* իմաստը: Գաբամաճեան *թուաց* ձեւը նկատած է ոամկօրէն: Ուրեմն՝ թելադրելի է *թուիլ*: Կայ նաեւ *թուել* ներգործականը՝ *հաշուել, համրել* իմաստով՝ *թուեցի, թուեցիր, թուեց, թուէ*:

Ժպտիլ/ժպտալ զուգաձեռութիւնը կ'երեւի խոնարհման բոլոր ձեւերուն մէջ. *ժպտիլ՝ ժպտեցայ, ժպտեցար, ժպտեցա, ժպտիր/ժպտէ*. *ժպտալ՝ ժպտացի, ժպտացիր, ժպտաց, ժպտալ*: Արեւմտահայերէնի մէջ տիրական է *ժպտիլ*, իսկ արեւելահայերէնի մէջ՝ *ժպտալ*:

Բնաձայնական բայերը գլխաւորաբար երկու խումբի մէջ կը մտնեն. *ել՝ կարկաչել, հառաչել, խոխոջել...* եւ *ալ՝ մոլտալ, մոմոալ, պոպոալ...*: Կարգ մը բայեր հանդէս կու գան երկու ձեւով. ասիկա հինէն եկող երեւոյթ մըն է անկասկած. Հայկազեան բառարան կու տայ *տրտնջամ-տրտնջեմ, մոնջամ-մոնջեմ*, բայց՝ *շշնջեմ, քրթմնջեմ, մրմնջեմ, վրնջեմ, խրխնջեմ*: Արեւելահայ բառարանները այս բոլորը կու տան *ալ* լծորդութեամբ, երկրորդաբար կամ իբրեւ հին ձեւեր՝ նաեւ *ել* լծորդութեամբ. արեւմտահայ գործնական բառարաններն ալ հարցը չեն լուծեր. տեղ մը *շշնջել, տրտնջել*, այլ տեղ՝ *շշնջալ, տրտնջալ*, թէեւ գերազանցապէս կը տրուի *ել-ով* տարբերակը (Գաբամաճեան, *Գայայեան*): Անկախ բառարաններէն՝ խօսակցականին մէջ թեքում կայ դէպի *ալ-ը*: Կրկնաւոր բնաձայնները միշտ եղած են *ալ* լծորդութեան բայեր՝ *մոմոալ, պոպոալ, խշխշալ, գոռգոռալ, պոռպոալ, սլվլալ, ճոճոալ* եւ այլն:

Կան նաեւ բայահիմքի հնչիւնափոխուած եւ անհնչիւնափոխ բայական ձեւեր, որոնք իմաստի տարբերութիւն մըն ալ ստեղծելով գոյութեան իրաւունք ձեռք բերած են. այսպէս՝

ապշիլ – *զարմանալ*

ապուշնալ – *ապուշ դառնալ*.

աւերել – *կործանել*.

աւրել – *ջնջել, խանգարել, գէշ դարձնել*.

կոտրել – կտրել՝ դիրաբեկ իրեր.

կտրել – անջատել, բաժնել.

համարել – սեպել, նկատել.

համրել – հաշուել, թուել.

միզել – շռել.

մզիլ – բարակ-բարակ հոսիլ.

վերանալ – բարձրանալ, համբառնալ.

վերնալ – վերցուիլ, դադրիլ.

վերացնել – վերցնել, բարձրացնել՝ հոգեպէս.

վերցնել – շալկել, ջնջել:

5.6.– Բազմապատկական ածանցներ

Աւելնալով բայահիմքերու վրայ՝ բազմապատկական միջաձանցները բայերէ կը կազմեն նոր բայեր, անոնց տալով գործողութեան կրկնութեան կամ բազմապատկութեան իմաստ՝ *թերթել-թերթալ, կտրել-կտրալ, քաշել-քաշկոտել, թռչիլ-թռչկոտիլ*: Բազմապատկական ածանցը կը դրուի չ սոսկաձանցէն ետք՝ *թռչիլ-թռչկոտիլ, կայիլ-կայչոտիլ*, իսկ ն սոսկաձանցը կ'իյնայ՝ *խածնել-խածոտել*:

Բազմապատկական ածանցներն են.

ատ՝ *թերթել-թերթալ, փեպրել-փեպրալ, կտրել-կտրալ*.

ըտ՝ *կռուիլ-կռուլ, պահուիլ-պահուլ*.

ուլոտ՝ *կանչել-կանչուլ, վազել-վազուլ, լիզել-լզուլ*.

կլտ՝ *հեծկլալ, բոցկլալ, կայծկլալ*.

կոտ՝ *թռչիլ-թռչկոտիլ, խոցկոտիլ*.

կոտ՝ *քաշել-քաշկոտել, կոխել-կոխկոտել, ծեծուիլ-ծեծկոտիլ*.

շտկ՝ *արել-արշտկել, ծոմուել-ծոմշտկել, պաղիլ-պաղշտկիլ*.

ոտ՝ *կրծել-կրծոտել, խածնել-խածոտել, խոցել-խոցոտել, մորթել-մորթոտել*.

ուլոտ՝ *հոտուլ*.

ոս՝ ցարկել-ցարկոտել, ճանկել-ճանկոտել, ճեղքել-ճեղքոտել, սեղմել-սեղմոտել, շտկել՝ շտկոտել, ժողվել-ժողվոտել:

տ՝ կոտրել-կոտրոտել, կտրել-կտրոտել, փշրել-փշրոտել, պատռել-պատռոտել, ժողվել-ժողվոտել:

տկ՝ տապալիլ-տապալկիլ:

Նկատի ունենալ, որ

– Հայերէնը ունեցած է *ճմռել* բայէն ստեղծուած *ճմռտել* եւ *ճմռտկել* ձեւերը, ուր կան *տ* եւ *տկ* բազմապատկական ածանցները: Արեւմտահայերէնը ունի *ճմռթել* ձեւը, տկ–ի փոխարէն թկ–ով:

– Կարգ մը բազմապատկական բայեր չունին պարզ ձեւեր, այսինքն՝ անոնք կազմուած են անկախ հիմքերէ. *բզիկ՝ բզկտել, հոտ՝ հոտոտալ, հոտուրտալ, պոռչ՝ պոռչտալ*:

– Կարգ մը բայեր ունին մէկէ աւելի բազմապատկական ածանցներով ձեւեր՝ *կոխտտել/կոխկոտել, թռչկոտիլ/թռչոտիլ, կտրտել/կտրատել, ժողվտել/ժողվոտել, հոտոտել/հոտուրտալ*:

– Հայերէնի հարազատ է նաեւ արմատի կրկնութեամբ կազմուած բազմապատկական բայը՝ *վազվզել, ծոմոել, մարմրիլ, կապկպել, փայլփլիլ, հուրհրալ, սարսոալ, բարբառիլ, մանաւանդ բնածայնականները՝ պոռպոռալ, գոռգոռալ, ճւճալ, հոհոալ, մոմոալ*: Արմատի կրկնութեամբ կազմապատկական բայերը կրնան նաեւ բազմապատկական ածանցներ ալ ստանալ՝ *ծոմոել-ծոմշտել, վազվզել վազվոտել*:

5.7. – Պատճառական ածանցներ

Ացն, եցն, ցն միջաճանցները չէզոք ու ներգործական բայերէ կը կազմեն պատճառական բայեր, ունին քերականական ձեւոյթի արժէք՝ *երգել-երգեցնել, գրել-գրեցնել, խօսիլ-խօսեցնել, հոսիլ-հոսեցնել, դողալ-դողացնել, եռալ-եռացնել*: Պատճառական ածանցներու յաւելման պարագային սոսկաճանցները կը չքանան՝ *հեռանալ-հեռացնել, քնանալ-քնացնել*,

մօտենալ-մօտեցնել, ճանչնալ-ճանչցնել, մոռնալ-մոռցնել, վերնալ-վերցնել, թռչիլ-թռցնել, փախչիլ-փախցնել:

Եցն ածանցով պատճառական բայերը կը կազմուին *ել եւ իլ* խումբերու պարզ եւ *ալ* խումբի *են* սոսկածանցաւոր բայերէն՝ *ներկել-ներկեցնել, քալել-քալեցնել, խօսիլ-խօսեցնել, նա-յիլ-նայեցնել, ուռիլ-ուռեցնել, սառիլ-սառեցնել, սորվիլ-սորվեցնել, մօտենալ-մօտեցնել, յագենալ-յագեցնել:*

Եցն-ի փոխարէն *ցն* ունի *խմել-խմցնել*: Խօսակցականին մէջ ասոր միտումը աւելի մեծ է, օրինակ՝ *վազել-վազեցնել, կարմրիլ-կարմրեցնել, դեղնիլ-դեղնեցնել ձեւերուն փոխարէն կը լսուին վազցնել, կարմիրցնել, դեղինցնել* եւ այլն: Խուսափիլ այդ ձեւերէն:

Ացն ածանցով պատճառական բայեր կը կազմեն *ալ* խումբի պարզ եւ *ան* սոսկածանցաւոր բայերը՝ *կարդալ-կարդացնել, դողալ-դաղացնել, գոռալ-գոռացնել, բարկանալ-բարկացնել, մտերմանալ-մտերմացնել, հեռանալ-հեռացնել, գոհանալ-գոհացնել:*

Ացն-ի փոխարէն *ցն* ունի *խաղալ* բայը՝ *խաղցնել*:

Յն ածանցով պատճառական բայեր կը կազմեն *ել, իլ* եւ *ալ* խումբերու ն-ով սոսկածանցաւոր եւ *իլ* խոնարհման չ-ով սոսկածանցաւոր բայերը՝ *մտնել-մտցնել, հասնիլ-հասցնել, հագնիլ-հագցնել, ճանչնալ-ճանչցնել, վախնալ-վախցնել, փախչիլ-փախցնել:*

Յն-ի փոխարէն *եցն* ունի *իջնել* բայը՝ *իջեցնել*:

Պատճառական ածանցները կ'որոշեն բայերու անցեալ կատարեալի հիմքն ու վերջաւորութիւնները. *հեռացնել՝ հեռացուցի, հեռացուցիր, հեռացուց, հեռացուցի՛ր, հեռացուցէ՛ք*: Ն բաղադրիչը կատարեալի հիմքով ժամանակներու մէջ կը կորսուի:

Պատճառական բայեր կը կազմուին նաեւ *տալ* բայի յարադրութեամբ. *մաքրել՝ մաքրեցնել-մաքրել տալ, սիրել՝ սիրցնել-սիրել տալ*: Ուցել վերջաւորութեամբ բայերու պատճառականը կ'ըլլայ միայն տալ-ով՝ *կառուցել տալ, մատուցել*

տալ, ապացուցել տալ, զեկուցել տալ, ծանուցել տալ, հաստատել տալ եւ այլն:

5.8.– Կրաւորական ածանց

Կրաւորականի ու ածանցը ել եւ իլ խումբի բայերու ներկայի հիմքէն կը կազմէ ուիլ, իսկ ալ լծորդութեան բայերու ցոյական հիմքէն՝ ցուիլ վերջաւորութեամբ բայեր՝ գրել-գրուիլ, սիրել-սիրուիլ, տեսնել-տեսնուիլ, գտնել-գտնուիլ, խօսիլ-խօսուիլ, հաւնիլ-հաւնուիլ, աղալ-աղցուիլ, խաղալ-խաղցուիլ, կարդալ-կարդացուիլ, մոռնալ-մոռցուիլ, հասկնալ-հասկցուիլ եւ այլն:

Ու կրաւորական ածանցին հետ պէտք չէ շփոթել հիմքային ու-ն՝ կոռիլ-կռուիլ, թիլ-թուիլ եւ թուել, հովիլ-հովուել:

5.9.– Բային սեռերը

Բային կայուն ձեւերը երկու սեռի մէջ կը մտնեն՝ ներգործական եւ չէզոք, որոնք չունին ձեւաբանական յատուկ ձեւոյթ, ինչպէս՝ սիրել, տեսնել, խօսիլ, հաւնիլ, զգալ, մոռնալ ներգործական բայեր են, իսկ վազել, մտնել, կռուիլ, հասնիլ, լողալ, գիրնալ բայերը՝ չէզոք: Այս երկու խումբ բայերու տարբերութիւնը հայցական հոլովով ուղիղ խնդիր ունենալն ու չունենալն է: Ներգործական բայերը իբրեւ օրէնք կը պահանջեն հայցական հոլովով ուղիղ խնդիր՝ **Քեզ**, **հայ լեզու**, **կը սիրեմ մրգաստրանի մը նման** (ՄԻ): **Կիկո աչքերուն ակնոց է դրեր**, / **Հիմա կապոյտը կապոյտ կը տեսնէ** (Զ.): **Եղեգնեայ գրչով երգեցի փառքեր** (Զ.): **Քու յիշատակդ այս գիշեր զիս լալու չափ կը յուզէ** (ՎԹ): **Ես Մասիսը չտեսայ** (ՄԻ):

Երրորդ սեռը կրաւորականն է, որ կը կազմուի ներգործական բայերէն ու արեւմտահայերէնի մէջ կ'արտայայտուի ուիլ վերջաւորութեամբ՝ սիրել-սիրուիլ, տեսնել-տեսնուիլ եւ գրաբարաձեւութեամբ, այսինքն՝ ել խումբի բայերը իլ խումբի վերածելով՝ վառել-վառիլ, մարել-մարիլ, եփել-եփիլ: Կրաւորական բայերը չէզոք բայերու նման կամ անուղղակի խնդիր կը պահանջեն, կամ առհասարակ խնդիր չեն առներ: Այդ

պատճառով ալ, ըստ ոմանց, ան պարզապէս չէզոք բայերու մէջ ձեւաբանաօրէն առանձին խումբ մը կը կազմէ:

Արեւմտահայ քերականութեան մէջ ասանդականօրէն ընդունուած է նաեւ չորրորդ սեռը՝ պատճառական կամ անցողական, որ ներգործական եւ չէզոք բայերէն կը կազմուի ացնել/եցնել/ցնել ածանցով, բայց ներգործական բայերու նման կը ստանայ հայցական հոլովով ուղիղ խնդիր ու այդ պատճառով ալ առանձին սեռ չի նկատուիր. ան պարզապէս ներգործական բայերուն մէջ ձեւաբանօրէն առանձին խումբ մը կը կազմէ:

Մենք բայական սեռերը կը քննենք ըստ մեր ասանդական քերականութեան մէջ ընդունուած չորս խումբերուն՝ ներգործական եւ կրաւորական, չէզոք եւ պատճառական:

5.10.– Ներգործական սեռի բայեր

Ներգործական բայերու ենթական գործողութիւնը կը կատարէ ուրիշի մը վրան, այսինքն կը պահանջէ հայցական հոլովով դրուած ուղիղ խնդիր³, որ կը պատասանէ *ի՞նչ* եւ *զո՞վ* հարցումին. *հաց ուտել* – *ի՞նչ* ուտել – *հաց*. տուն շինել – *ի՞նչ* շինել – տուն. *հիւանդը բուժել* – *զո՞վ* բուժել – *հիւանդը*. *աշակերտը գնահատել* – *զո՞վ* գնահատել – *աշակերտը*:

Ուղիղ խնդիրը նախադասութեան այն անդամն է, որ ուղղակիօրէն իր վրայ կը կրէ ենթակային գործողութիւնը, որուն հետեւանքով կը փոխուի, կը ստեղծուի կամ կը յայտնուի ան: Այլ խօսքով՝ ենթական գործողութիւնը ուղղակի կը կատարէ ուղիղ խնդիրին վրայ: Այս տեսակ նախադասութեան ստորո-

³ Սեռի խնդիր եզրոյթը արեւմտահայ քերականութեան մէջ տարբեր ընդգրկումներ ունեցած է. տրուած է ներգործական եւ կրաւորական բայերու խնդիրներուն, երբեմն՝ միայն ներգործական բայի խնդիրին: Վերջինը այժմ կը կոչուի ուղիղ խնդիր, ի հակադրութիւն անուղղակի խնդիրներուն (բնութեան խնդիր), որոնք կ'արտայայտուին թեք հոլովածուերով: Ուղիղ խնդիր եզրոյթը նկատի ունի բառին ուղիղ ձեւը, որ կը յարմարի գոյականի հայցականին, բայց ոչ դերանունին, որ ուղղականէն տարբեր ձեւ ունի հայցականին մէջ ու թեք ձեւ է՝ *ես-զիս*, *դուն-քեզ*, *մենք-մեզ*, *դուք-ձեզ*, *ինք-զինք*, *իրենք՝ զիրենք*: Մենք եւս կը գործածենք սփիւռքահայ վերջին քերականութիւններուն մէջ *ուղիղ խնդիր* ընդհանրացած անուանումը:

գիչը միշտ արտայայտուած է ներգործական (եւ պատճառական) սեռի բայով:

Արեւելահայերէնի մէջ ներգործական բայերը անձ ցոյց տուող գոյականներէն կը պահանջեն տրական հոլովով ուղիղ խնդիր, իսկ ոչ-անձ ցոյց տուող գոյականներէն հայցական հոլովով ուղիղ խնդիր՝ *գնահատեց աշակերտին, գնահատեց աշխատանքը*: Առաջինը կը կոչեն տրականաձեւ ուղիղ խնդիր, իսկ երկրորդը՝ հայցական հոլովով ուղիղ խնդիր: Արեւմտահայ գրական լեզուն չի հակադրեր անձի ու իրի անունները եւ ուղիղ խնդիրը միշտ հայցական հոլովով կ'արտայայտէ՝ *գնահատեց աշակերտը, գնահատեց աշխատանքը*: Սակայն խօսակցական լեզուին մէջ տրականաձեւ խնդիրը կը գործէ՝ *գնահատեց աշակերտին*: Խօսակցական լեզուի այդ տարրը ոմանք կը վերագրեն արեւելահայերէնի ազդեցութեան: Բայց ատիկա կար ի սկզբանէ. Այտընեան անձնական դերանունի Ա. դէմքի եզակի հայցականի *գիս* ձեւին քով փակագծի մէջ կը դնէ *իս* եւ *ինձի* ձեւերը ու աստղանիշով տողատակ բացատրութեան մէջ կը նշէ անոնց «ռամիկ» երեւոյթը⁴: Այս ալ ցոյց կու տայ, որ տրականաձեւ ուղիղ խնդիրը կար նաեւ արեւմտահայերէնի մէջ, ինչպէս որ տակաւին կը գոյատեւէ: Ներկայիս անոր գործածութիւնը անցած է նաեւ գրականին: Մամուլի եւ գրականութեան մէջ յաճախ այս խախտումը կը կատարուի անվերահսկելի կերպով: Կան գրողներ, որոնք ոչ թէ պատահաբար, այլ օրինաչափօրէն ներգործական բայի խնդիրը կը դնեն տրական հոլովով. «Ռումբի ձայները կը վախճնէին իրեն»: *Չարածճի տղաներու քարերը կը նեղացնէին կատուներուն*: *Խումբի դասախօսը կ'ուզէ «ձեռ առնել» իրեն*: *Սիրվարդ հորաքոյրս կը սիրէր ինձի (Անուշ Նազգաշեան)*:

Ներգործական բայերը չունին ձեւաբանական ընդհանուր յատկանիշ:

⁴ Հ. Արսէն վ. Այտընեան, *Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Բ. տպագրութիւն, Վիէննա, 1883, յօդուած 144:

Ներգործական բայերը մեծ մասով ել խումբի բայեր են. այսպէս՝ *առնել, արհամարհել, բաժնել, բաշխել, բերել, գնահատել, գտնել, գրաւել, դիմաւորել, դիտել, դրդել, երազել, երգել, զոհել, զենել, ըսել, կանչել, կառուցել, կատարել, կրել, հաւաքել, հարթել, մատնել, մարսել, յարգել, շինել, շտկել, պատժել, պատուել, սիրել, վարարել, վռնտել, վրանգել, տեսնել, ցանել, փոխել, փորել, քաղել, քսել, քրքրել* եւ այլն:

Իլ լծորդութեան ներգործական բայեր՝ *դաւանիլ, խոստովանիլ, խորհիլ, խօսիլ, հաւնիլ, շահիլ, պարտիլ, սորվիլ, վաստկիլ, տանիլ* եւ այլն:

Ալ լծորդութեան ներգործական բայեր՝ *բանալ, գիտնալ, գողնալ, զգալ, իմանալ, կարդալ, մոռնալ, տալ, ունենալ* եւ այլն:

Նկատի ունենալ, որ

ա) Ներգործական բայի խնդիրը երբեմն կրնայ արտայայտուիլ բացառական հոլովով, երբ խնդիրը արտայայտուած ըլլայ ոչ թէ ամբողջութեամբ, այլ մասնակի կերպով.

*Բոլորս այդ **ջուրէն** խմեցինք:*

*Այդ **հացէն** հրամցուցինք բոլորին:*

*Այդ **գիրքէն** ես ալ գնեցի:*

Ասիկա կը կոչուի **մասնական ուղիղ խնդիր:**

Մասնական ուղիղ խնդիր կրնան ունենալ շատ մը բայեր, ինչպէս՝ *առնել, բերել, գնել, գտնել, կրել, տալ, տեսնել, ուրել, խմել, հրամցնել* եւ այլն: Օրինակ՝ *Այդ ապրանքէն գնեցի: Ատկէ շար կը գտնես: Այս պտուղէն կեր: Ես անոնցմէ տեսայ:*

բ) Շարք մը ներգործական բայեր լայնօրէն կրնան գործածուիլ առանց ուղիղ խնդիրի, այսինքն՝ հանդէս կրնան գալ չէզոք բայերու դերով եւս, ինչպէս՝ *խօսիլ, գրել, երգել* եւ այլն:

Մանուկը արդէն կը խօսի: – Վարչապետը ճառ մը խօսեցաւ:

Գրիչը սահուն չի գրեր: – Յ. Թումանեան քառեակներ գրած է:

Երգչախումբը առանց խմբավարի երգեց: – Աշակերտ մը շարական երգեց:

գ) Շատ ներգործական բայեր ուղիղ խնդիրէն բացի՝ կրնան ունենալ նաեւ

– Միջոցի անուղղակի խնդիրներ՝ գործիական հոլովով.
Եղեգնեայ **գրչով** երգեցի փառքեր:

Հունձք կը ժողվեմ **մանգաղով**:

Ան **աղօթքով** գրաւեց մարդոց սիրտերը:

– Տրական հոլովով մատուցման անուղղակի խնդիր, որ յատուկ է *յանձնել, հաղորդել, նուիրել, ուղղել, փոխանցել, պարտադրել, ըսել, փայլ, մատուցել, վերագրել* եւ նման բայերուն.

Տղան իր կամքը պարտադրեց **հօրը**:

Հիւրը իր խօսքը ուղղեց **երիտասարդներուն**:

Երգահանը այս երգը նուիրեց **մօրը**:

Տղան իր սէրը կը խոստովանի **աղջկան**:

Ու **գրգանքիս** կանչէի ուղետրներ պարտասուն (ՄՄ):

Անոր նախանձոտ **բնատրութեան** կը վերագրէին այս փարօրինակ մենակեցութիւնը (ՅՊ*):

դ) Ասացական եւ մտածական ներգործական բայերը՝ ըսել, խօսիլ, պատմել, բամբասել, դատել, մտածել, կարդալ եւ այլն, ուղիղ խնդիրի կողքին կամ անոր բացակայութեան՝ կրնան ունենալ տարբեր հոլովներով եւ կապական դարձուածքներով արտայայտուած վերաբերութեան անուղղակի խնդիրներ.

Ան դասախօսութիւն մը կարդաց **իրապաշտութեան մասին**:

Ան զեկոյց մը ներկայացուց վերջին **իրադարձութեանց վրայ**:

Պատմէ՛ մեզի **հայրենիքէն**:

Քաղաքագէտը խօսեցաւ **պատանդներուն մասին**:

ե) Ներգործական բայերու ձեւաբանական յատկանիշներէն մէկն ալ այն է, որ անոնք կրնան վերածուիլ կրատրակա-

նի՝ սիրել-սիրուիլ, գնահատել-գնահատուիլ, տեսնել-տեսնուիլ, զգալ-զգացուիլ կամ գրաբարածեւ կրաւորականի՝ թափել-թափիլ, կոտորել-կոտորիլ, մաշել-մաշիլ, մարել-մարիլ, շարժել-շարժիլ, վառել-վառիլ, փլել-փլիլ եւ այլն: Այսուհանդերձ կան ներգործական բայեր, որոնք կամ սեռափոխութեան չեն ենթարկուիր, կամ ալ կրկնասեռ են՝ ունենալ, ընել, ծնիլ եւ այլն:

5.11.- Կրաւորական սեռի բայեր

Կրաւորական սեռի բայերը կը կազմուին ներգործական բայերէ, *ել, իլ, ալ* վերջաւորութիւնները փոխարինելով ուիլ-ով՝ *սիրել-սիրուիլ, յարգել-յարգուիլ, արհամարհել-արհամարհուիլ, խօսիլ-խօսուիլ, հաւնիլ-հաւնուիլ, տանիլ-տարուիլ*: *Ել եւ իլ* լծորդութեան սոսկածանցաւոր բայերու պարագային կրաւորականը կը կազմուի ներկայի հիմքին վրայ՝ *տեսնել-տեսնուիլ, գտնել-գտնուիլ*, ուր սոսկածանցը կը մնայ, իսկ *ալ* լծորդութեան բոլոր բայերը կրաւորական *ուիլ* վերջաւորութիւնը կ'առնեն ցոյական հիմքին վրայ՝ *կարդալ-կարդացուիլ, հոգալ-հոգացուիլ*: Ասոնք կը կորսնցնեն սոսկածանցը՝ *գողնալ-գողցուիլ, գիտնալ-գիտցուիլ, ճանչնալ-ճանչցուիլ*:

Եթէ ներգործական բայի ենթական գործողութիւնը կը կատարէ ուրիշի մը վրան՝ կրաւորական բայի ենթական ինք իր վրայ կ'ընդունի ուրիշին կատարած գործողութիւնը: Այդ պատճառով ալ նախադասութիւնը շրջելով՝ ներգործական բայը կը վերածուի կրաւորականի, իսկ ներգործական նախադասութեան ենթական՝ ներգործման անուղղակի խնդիրի.

Դուք գործս կը կատարէք: > Գործս կը կատարուի ձեր կողմէ:

Անոնք տուն մը կը կառուցեն: > Տուն մը կը կառուցուի անոնց կողմէ:

Մայրը կը սնուցէ զաւակը: > Զաւակը կը սնուցուի մօրմէն:

Ուսուցիչը կը գնահատէ աշակերտը: > Աշակերտը կը գնահատուի ուսուցիչէն:

Կրաւորականի վերածուիլը ներգործական բայը ճանչնալու միջոց մըն է:

Մինչ արեւելահայերէնի մէջ ներգործական գրեթէ բոլոր բայերը ու ածանցով (ուել>վել վերջաւորութեամբ) փոխակերպելի են կրաւորականի, արեւմտահայերէնի մէջ փոխանցումը իր աւարտին չէ հասած: Կան մեծ թիւով բայեր, որոնք կրաւորական-չէզոքի կը վերածուին միայն խոնարհիչը ի-ի վերածելով, ինչպէս գրաբարի մէջ՝ սիրեմ-սիրիմ: Մեծ թիւով բայեր կը պահեն գրաբարի կերպը՝ ազատել-ազատիլ, այլայլել-այլայլիլ, այրել-այրիլ, արածել-արածիլ, արիւնել-արիւնիլ, բախել-բախիլ, բարեշրջել-բարեշրջիլ, բորբոքել-բորբոքիլ, դատարկել-դատարկիլ, երկարել-երկարիլ, եփել-եփիլ, ընդհատել-ընդհատիլ, ընդլայնել-ընդլայնիլ, ընկղմել-ընկղմիլ, թափել-թափիլ, թեքել-թեքիլ, խաշել-խաշիլ, խախտել-խախտիլ, խարխլել-խարխլիլ, խոնարհել-խոնարհիլ, խոռվել-խոռվիլ, ծակել-ծակիլ, ծիրել-ծիրիլ, ծոել-ծոիլ, կանգնել-կանգնիլ, կոտորել-կոտորիլ, կործանել-կործանիլ, կտրել-կտրիլ, հակել-հակիլ, հիւծել-հիւծիլ, ճկել-ճկիլ, մաշել-մաշիլ, մարել-մարիլ, մթագնել-մթագնիլ, մրկել-մրկիլ, յենել-յենիլ, շարժել-շարժիլ, շեղել-շեղիլ, շրջել-շրջիլ, շփոթել-շփոթիլ, պատռել-պատռիլ, պարտել-պարտիլ, սպառել-սպառիլ, վառել-վառիլ, փապալել-փապալիլ, փարտղնել-փարտղնիլ, փոշորել-փոշորիլ, ցրուել-ցրուիլ, փարատել-փարատիլ, փլել-փլիլ եւ այլն: Օրինակներ՝

Նէ կը վառի, միշտ կը վառի, չի հատնիր (ՊԴ):

Աստուած ըզնէ զոյգ մ'աչերով կը վառէ (ՊԴ):

Մոմս փակաւ կը մարի (ՄԶ):

Ակնթարթի մը մէջ կը մարէ ծխախոտը (Ե):

Ձեռք կը շարժեմ բոլորին, ձեռք կը շարժեն ինծի (Զ):

Աստուած կը շարժի, երբ մեր սրտերը կը շարժին:

Հաճի աղան ինչպէս օձիքը պիտի ազատէ (ԵՕ):

Ամեն ով որ Տէրոջը անունը կը կանչէ՝ պիտի ազատի:

Ան իր պահեստի գումարները **կը սպառէ** (Ազդ):

ԱՄՆ-ի համբերությունը **կը սպառի** (Ազդ):

Ոստիկանությունը **կը ցրուէ** ցուցարարները (Ազդ):

Եւ նայուածքն ի զուր **կը ցրուի** հեռուն (ԱՅ):

Աստուածային լոյսը **կը փարափէ** խաւարը:

Բայց վերջապէս մշուշը **կը փարափի** (ՄՄ):

Այս բայերէն ոմանք արդէն ունին ուիլ-ով տարբերակներ եւս՝ ազատիլ-ազատուիլ, եփիլ-եփուիլ, թափիլ-թափուիլ, կտորիլ-կտորուիլ, կտրիլ-կտրուիլ, կործանիլ-կործանուիլ, մաշիլ-մաշուիլ, յենիլ-յենուիլ, շրջիլ-շրջուիլ, պատռիլ-պատռուիլ, տարտղնիլ-տարտղնուիլ եւ այլն. Պրոմէթէսն **ազատուեցաւ** գերութենէ: Այս պահուն **կ'եփուի 100** կաթսայ հերիսա: Դժբախտաբար հայու արիւն **թափուեցաւ**: Փիէռ **պատռուած** նամակին կտորները քով քովի դրաւ եւ կարդաց (ՇՇ): **Տարտղնուեցանք** ու դեռ կը շարունակենք **տարտղնուիլ**: Մասնաւորապէս ջղային դրութիւն, որ երկուքի **կտորուեցաւ** եւ ոսկրէ խաճ մը եղաւ կոնակս՝ Քրիստոսի փայտեայ խաճէն աւելի ծանր ... (ԵՏ): Իրաւ է, որ **կտորուեցաւ** մեծ դանակը, բայց սատկեցաւ նաեւ մուկը (ՇՇ): Միշտի Աունի ձեռքը **կտորուեցաւ**, եւ վիրահատումի ենթարկուեցաւ (Ազդ): Շարքի միւս բառերը աւելի կայուն վիճակ մը կը ներկայացնեն՝ բախել-բախիլ, երկարել-երկարիլ, ծակել-ծակիլ, ծռել-ծռիլ, կանգնել-կանգնիլ, մարել-մարիլ, մթագնել-մթագնիլ, շարժել-շարժիլ, վառել-վառիլ, փլել-փլիլ: Արեւելահայերէնի այս շարքի բոլոր բայերն ալ ուել-ով կրաւորական կ'ըլլան՝ բախել-բախուել, ծռել-ծռուել, շարժիլ-շարժուել, վառել-վառուել եւ այլն:

Այս անցումը ամեն պարագայի օրինաչափական պէտք է համարել եւ պայմանաւորուած է ասոնց անկախ գործածութիւն ունեցող դերբայներէն, որոնք համանուն են երկու սեռերու պարագային եւս: Դիմաւոր ձեւերուն մէջ զանազանութիւնը կը ստեղծուի խոնարհիչներու միջոցով՝ **կը թափէ-կը թափի, թափեցի-թափեցայ**, մինչ դերբայները կը նոյնանան.

ազատած է արտայայտութեան մէջ խօսքի շղթայէն դուրս ընկալելի չէ բային սեռը, մինչդեռ *ազատած-ազատուած* հակադրութեամբ սեռը կը բացայայտուի:

Իլ-ով կրաւորական բայերու ուիլ-ի անցումը շարունակ-ուող երեւոյթ մըն է՝ *եփել-եփիլ-եփուիլ*: Ասիկա առերեւոյթ կը ստեղծէ բայասեռի եռանդամ հակադրութիւն մը⁵: Սակայն իրողապէս՝ *եփիլ-եփուիլ* ձեւերը սովորական զուգածեութիւն-ներ են, երկուքն ալ առանձնապէս կրնան հանդէս գալ թէ՛ կրաւորական եւ թէ՛ չէզոք կիրառութեամբ: Պարզապէս *իլ* խումբի բայերու ուիլ-ի անցումի ընթացքը տակաւին կ'ապրի:

Մայրիկը ճաշը կ'եփէ:

Ճաշը կ'եփի մայրիկին կողմէ:

Ճաշը կ'եփի:

Կամ

Ճաշը կ'եփուի մայրիկին կողմէ:

Ճաշը կ'եփուի:

Նկատի ունենալ, որ

– Կրաւորական բայը ուղիղ խնդիր ունենալ չի կրնար, բացի անդրադարձ-փոխադարձ քանի մը կրաւորակերպ բա-յերէ:

Շահը կիսեցինք մեր միջեւ: – *Կիսեցինք*¹ ներգործական, *շահը*² ուղիղ խնդիր.

⁵ Ռ. Սագայետոյեան կը գրէ. «Արևմտահայերենում մի շարք բայեր ձևավորում են այդ եռանդամ հակադրությունը՝ կրավորական սեռի համար գործածելով –ուիլ, իսկ կրավորակերպ չեզոք իմաստներով՝ իլ լծորդներով բայեր, ինչպես օրինակ, դատել-դատուիլ-դատիլ, կտրել-կտրուիլ-կտրիլ, ծռել-ծռուիլ-ծռիլ, ուր առաջին բայը ներգործական է, երկ-րորդը կրաւորական, իսկ երրորդը՝ չեզոք:

Օրինակներ.

Դարբինը կը ծռէ երկաթը:

Երկաթը կը ծռուի դարբինին կողմէ:

Երկաթը կը ծռի խոնաւ շինութեան մէջ» (Ռ. Կ. Սաքապետոյան, *Արևմ-տահայերենի դասագիրք*, Երևան, 2006, էջ 144):

բայց՝

Երկուքս շահը կհսուեցանք: – Կհսուեցանք՝ կրաւորակերպ, շահը՝ ուղիղ խնդիր:

Տղաք իրենց միջեւ բաժնեցին գումարը: – Տղաք բաժնուեցան գումարը:

Օճանելիքը կը քսեմ ասիերուս: – Օճանելիքը կը քսուիմ:

– Կրաւորական բայերուն, ուիլ թէ իլ ձեւերուն, յատուկ է չէզոք գործածութիւնը, այսինքն առանց ներգործման անուղղակի խնդիրի:

Գումարը հաւաքուեցաւ յանձնախումբին կողմէ:

Ժողովուրդը հաւաքուեցաւ հրապարակ:

Ատիկա շատ լսուած է մեր կողմէ:

Ատիկա շատ լսուած է:

Վրէպը ուշ թէ կանուխ կը նկատուի ընթերցողին կողմէ:

Վրէպը ուշ թէ կանուխ կը նկատուի:

Երկսեռ գործածութիւնը յատուկ է նաեւ իլ-ով վերջացող կրաւորական-չէզոք բայերուն.

Փոթորիկը տապալեց ծառը: – Ներգործական

Ծառը տապալեցաւ փայտահատին կողմէ: – Կրաւորական

Ծառը տապալեցաւ: – Չէզոք

Ուխտաւորը երեք մոմ վառեց:

Երեք մոմ վառեցաւ ուխտաւորներուն կողմէ:

Երեք մոմ վառեցաւ:

Ինչպէս տեսանք, *եփիլ-եփուիլ* եւ նման զուգածեութիւններուն մէջ եւս նոյն պարագան կը գործէ:

5.12.– Անդրադարձ եւ փոխադարձ բայեր

Գիտենք, որ ներգործական բայի ենթական գործողութիւնը կը կատարէ ուրիշի մը վրան, իսկ կրաւորական բայի ենթական ինք իր վրայ կը կրէ ուրիշին կատարած գործողութիւնը՝ *Աշակերտը կը յարգէ ուսուցիչը>Ուսուցիչը կը յարգուի*

աշակերտին: Բայց միշտ այդպես չէ: *Ես մօրուքս ածիլեցի* նախադասութեան մէջ *ածիլել* բայը ներգործական է, իսկ *մօրուքս* բառը իր վրայ կը կրէ գործողութիւնը: Երբ բայը կրաւորականի վերածենք, փոխանակ *մօրուքս ածիլուեցաւ* ըսելու, կ'ըսենք՝ *ես ածիլուեցայ*: Այստեղ ենթական ինք կը կատարէ գործողութիւնը իր վրայ: Այս տեսակ կրաւորածեւ բայերը կը կոչուին *անդրադարձ բայեր*: Անդրադարձ բայեր են *ածիլուիլ, սափրուիլ, լուացուիլ, սրբուիլ, սանտրուիլ, քսուիլ, զուգուիլ-զարդարուիլ* եւ այլն:

Համբուրել բայը ներգործական է. կ'ըսենք *Սարգիսն ու Ալինը համբուրեցին իրար*: Հոս ենթակաները գործողութիւնը կը կատարեն իրարու վրայ: Վերածենք կրաւորականի՝ *Սարգիսն ու Ալինը համբուրուեցան*. ենթակաները այդ գործողութիւնը կը կատարեն իրարու վրայ եւ միեւնոյն ատեն կը կրեն զայն: Այս տեսակ կրաւորածեւ բայերը կը կոչուին *փոխադարձ բայեր*: Փոխադարձ բայեր են *գրկուիլ, ողջագուրուիլ, փաթթուիլ, համբուրուիլ, ձեռնուիլ, գրկախառնուիլ* եւ այլն:

Հագնիլ-հագնուիլ-հագցնել-հագցուիլ. հագուիլ-հագուեցնել.

Հագնիլ՝ սոսկածանցաւոր բայ է, կատարեալն ու հրամայականը՝ արմատական. **հագայ-հագար-հագաւ-հագիր**: Ներգործական բայ է, կը պահանջէ հայցական հոլովով ուղիղ խնդիր՝ *հագնիլ փաբափրը, գուլպան, կօշիկը. Ես կօշիկս կը հագնիմ*: Կրաւորականը՝ **հագնուիլ**. ինչպէս՝ *գտնել՝ գտնուիլ, բռնել՝ բռնուիլ*: Սակայն այս *հագնուիլ* կրաւորականը գրեթէ չի գործածուիր. *Կօշիկը հագնուած է, կօշիկը կը հագնուի* օրինաչափական ձեւերուն փոխարէն կ'ըսենք *կօշիկը հագցուած է, կօշիկը կը հագցուի*: **Հագնիլ** բայը ունի իր պատճառականը՝ *հագցնել* (ինչպէս *հասնիլ՝ հասցնել, մտնել՝ մտցնել, ամրանալ՝ ամրացնել, ն* սոսկածանցի անկումով). **Մայրը կօշիկը կը հագցնէ մանուկին**: Պատճառականն ալ կրաւորական կ'ըլլայ, ինչպէս *հեռացնել՝ հեռացուիլ, ամրացնել՝ ամրացուիլ*, այդպէս նաեւ *հագցնել՝ հագցուիլ*. այս բայածելը գրաւած է

հազնուիլ կրաւորական բայի կիրառական դաշտը. փոխանակ ըսելու հազնուած կօշիկ, տաբատ, գուլպայ՝ կ'ըսենք հազգուած կօշիկ, տաբատ. այս գուլպան կը հազգուի, չի հազգուիր:

Հազուիլ բայը ունի զարտուղի կազմութիւն. չէզոք անդրադարձ բայ է. ու անով ալ կը հակադրուի հազնիլ-հազնուիլ, հազցնել-հազցուիլ բայածեւերուն: Հազուիմ ու դուրս գամ. կարելի չէ ըսել Տարազս հազուիմ ու դուրս գամ: Ներգործական բայը գործածելու պարագային պիտի ըսէինք՝ Ես տարազս հազնիմ ու դուրս գամ: Հազուիլ բայը ունի նաեւ իր պատճառականը՝ հազուեցնել. Դալարը հազուեցուցի ու դպրոց դրկեցի, բայց հազնիմ բայի պատճառական ձեւը գործածելու պարագային պիտի ըսէինք՝ Ես կօշիկը հազցուցի Դալարին ու դպրոց դրկեցի:

5.13.- Չէզոք սեռի բայեր

Չէզոք բայերու ենթական պարզապէս գործողութիւն մը կը կատարէ.

Մանուկը կը քնանայ:

Ճամբորդը կը քալէ:

Կամ ուրիշ առարկայի մը կը կապուի անուղակի կերպով, այսինքն՝ հոլովական ձեւով մը՝

Ես հանդիպեցայ Արամին: – Տրական հոլով, յանգման անուղակի խնդիր:

Հեռացայ այդ մարդէն: – Բացառական հոլով, անջաման անուղակի խնդիր:

Դուն օղանաւով կը մեկնիս: – Գործիական հոլով, միջոցի անուղակի խնդիր:

Եթէ ներգործական բայերը հայցական հոլովով ուղիղ խնդիրի կողքին կրնան ունենալ նաեւ տրական, բացառական եւ գործիական հոլովներով անուղակի խնդիրներ եւս, ապա չէզոք բայերը չեն կրնար ունենալ հայցական հոլովով խնդիր:

Նկատի ունենալ որ բոլոր բայերուն ալ կրնան ընկերանալ հայցական հոլովով պարագաներ. չջիւղթել ուղիղ խնդիրին հետ.

Շնիկը փուն բերի: – **Բերել՝** ներգործական բայ. **շնիկը** ուղիղ խնդիր, հայցական հոլով. **տուն՝** տեղի պարագայ, հայցական հոլով:

Տուն վերադարձայ: – **Վերադառնալ՝** չէզոք բայ. **տուն՝** տեղի պարագայ, հայցական հոլով:

Գիւղը փուն կառուցեցի: – **Կառուցել՝** ներգործական բայ. **տուն՝** ուղիղ խնդիր, հայցական հոլով. **գիւղը՝** տեղի պարագայ, հայցական հոլով:

Առփուն փուն հասայ: – **Հասնիլ՝** չէզոք բայ. **տուն՝** տեղի պարագայ, հայցական հոլով. **առտուն՝** ժամանակի պարագայ, հայցական հոլով:

Չէզոք բայերը ձեաբանական ընդհանրութիւններ չունին, կրնան պատկանիլ բոլոր լծորդութիւններու աններաձանց, բազմապատկական եւ սուկաձանցաւոր բայերու շարքին, ինչպէս *քալել, ցարկել, պարել, նստիլ, հոսիլ, լողալ, սողալ, պոռալ, ելլել, մտնել, քնանալ, հեռանալ, մօտենալ, թռչկոտիլ, հասնիլ, մեռնիլ*, չ սուկաձանցաւոր բոլոր բայերը՝ *փախչիլ, թռչիլ* եւ այլն:

Չէզոք բայը ցոյց կու տայ ենթակայի այնպիսի գործողութիւն, որ չի պահանջեր ուղիղ խնդիր, բայց ահա շարք մը չէզոք բայեր «հասարակօրէն նոյն բային արմատը կամ բայանունը»⁶ ուղիղ ձեւով խնդիր կ'առնեն, իրենց արմատէն շինուած գոյականէ մը, նոյն բային դերբայէն կամ մերձիմաստ բառէ մը հայցական հոլովով խնդիր կ'ունենան՝ **լաց մը լացաւ, խնդուք մը խնդաց, քուն մը քնացաւ, կորուստը լացաւ** եւ այլն: Խնդիրի դերով հանդէս կրնայ գալ աներեւոյթը՝ **խնդալ մը խնդացինք, վազել մը վազեց, լալ մը լացաւ**: Ասոնք **ներքին խնդիր** կը կոչուին:

Այսուհանդերձ, հայերէնի մէջ կան շատ բայեր, որոնք ունին թէ՛ ներգործական եւ թէ՛ չէզոք բայի կիրառութիւն: Ասոնք կը կոչուին կրկնասեռ բայեր: Կրկնասեռութիւնը յատուկ էր նաեւ գրաբարին. *Ձեռք նորա բուրեն զանուշահոտութիւն: Եւ*

⁶ Արսէն Այտընեան, նշ. աշխ., յօդ. 348:

բուրեցին խունկը իմ⁷: Բայերու տարբեր սեռական առումներով գործածութիւնը յարափոփոխ վիճակ մը ունեցած է հայերէնի բովանդակ զարգացման շրջանին, փոխանցումներ նկատուած են միշտ, օրինակ՝ գրաբարի մէջ կրկնասեռ բայեր էին *ամբաստանել, խմբել, խմորել, զարդարել, զեպեղել, արծակել, գումարել, կախել, քերել* եւ ուրիշ բայեր, որոնք ներկայ արեւմտահայերէնի մէջ ներգործական բայեր են եւ ունին իրենց կրաւորականը՝ *ամբաստանուիլ, խմբուիլ, խմորուիլ, զարդարուիլ, զեպեղուիլ, արծակուիլ, գումարուիլ, կախուիլ, քերուիլ*, մինչ գրաբարեան կրկնասեռ այլ բայեր երկփեղ կուած են ներգործականի եւ իլ-ով չէզոք-կրաւորականի, *բախել-բախիլ, բորբոքել-բորբոքիլ, խոնարհել-խոնարհիլ, կանգնել-կանգնիլ*: Կրկնասեռ էին *կատակել, սատկիլ, գարշիլ, ախորժիլ, աղերսել, ապաշխարել, սքել* արդի արեւմտահայերէնի մէջ գերազանցապէս չէզոք բայերը: Տակաւին կրկնասեռաբար հանդէս կու գան *բուրել, թքել, շշնջալ, լալ, ողբալ* եւ այլն:

Տեսանք արդէն, որ *ուիլ* եւ *իլ* վերջաւորութեան կրաւորական ու գրաբարակերպ կրաւորական բայերը (հաւաքել-հաւաքուիլ, վառել-վառիլ) ունին թէ՛ կրաւորական եւ թէ՛ չէզոք կիրառութիւն:

Սթափիլ, բնակիլ, գանգապիլ, յարձակիլ, սիրահարիլ, զբաղիլ եւ *իլ* լծորդութեան այլ չէզոք բայեր արեւելահայերէնի մէջ կրաւորակերպ են՝ *սթափուել, բնակուել, գանգապուել, յարձակուել, սիրահարուել, զբաղուել* եւ այլն. *Բէլը յարձակուեց Հայկի վրայ > Բել յարձակեցաւ Հայկի վրայ*: Եթէ արեւմտահայերէնի մէջ գրաբարածեւ կրաւորականներու ուիլ-ի անցումը բնական երեւոյթ պէտք է նկատել՝ *եփել-եփիլ-եփուիլ*, ապա այս բայերուն համար արտօնելի չէ. պէտք է խուսափիլ նման թափանցումներէ՝ *սիրահարուած է, զբաղուած է. պէտք է ըսել սիրահարած է, զբաղած է* եւ այլն:

⁷ Հրանուշ Զաքյան, *Հին հայերէնի կրկնասեռ բայերը, փարժամանակյա քննություն*, Գյումրի, 2015, էջ 75:

5.14.- Պատճառական բայեր

Արեւմտահայ քերականները պատճառական բայերը կը կոչեն անցողական, «որ ուրիշին բան մ'ընել տալ կը նշանակէ. ինչպէս *խմցնել* (խմել տալ), *հաւտացնել*»⁸: Պատճառական բայի ենթական պատճառ կ'ըլլայ, որ

ա) ի հակադրութիւն չէզոք բայի ենթակային՝ ուրիշը կատարէ այդ գործողութիւնը.

Մանուկը կը քնանայ: > *Մայրիկը մանուկը կը քնացնէ:*

<նս ենթական (մայրիկը) ուրիշը (մանուկը) կը մղէ գործողութիւնը կատարելու:

բ) ի հակադրութիւն ներգործական բայի ենթակային՝ ուրիշը այդ գործողութիւնը կը կատարէ երրորդ առարկայի մը վրայ.

Աշակերտը պարտականութիւնը կը գրէ: > *Ուսուցիչը պարտականութիւնը կը գրեցնէ* (գրել կու տայ) *աշակերտին:*

<նս ենթական (*ուսուցիչը*) պատճառ կ'ըլլայ, որ ուրիշը (*աշակերտը*) գործողութիւնը կատարէ երրորդ առարկայի մը վրայ (*պարտականութիւնը*): Այս խումբի պատճառական բայերը ոմանք կ'առանձնացնեն իբրեւ *անցողական* բայեր:

Պատճառական բայերը ներգործական բայերուն պէս ուղիղ խնդիր կ'առնեն.

Մայրիկը զո՞վ կը քալեցնէ: – *Մանուկը:*

Ուսուցիչը ի՞նչ կը գրեցնէ (գրել կու տայ) *աշակերտին:*
– *Պարտականութիւնը:*

Ահա այս պատճառով ալ քերականները պատճառական բայերը կը նկատեն ներգործական սեռի բայեր:

Ներգործական բայէն կազմուած պատճառական բայը ուղիղ խնդիրի կողքին կրնայ ունենալ տրական հոլովով անուղղակի խնդիր մըն ալ:

Ուսուցիչը դասը կը սիրցնէ:

Ուսուցիչը դասը կը սիրցնէ աշակերտին:

⁸ Արսէն Այտընեան, *Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, յօդ. 232:

Պատճառական սեռի բայերը կր կազմուին չէզոք եւ ներգործական բայերէն *ացն, եցն եւ ցն* միջաձանցներով. *դադրիլ՝ դադրեցնել, ցամքիլ՝ ցամքեցնել, մեռնիլ՝ մեռցնել, փախչիլ՝ փախցնել, զոջալ՝ զոջացնել, հեռանալ՝ հեռացնել, մօտենալ՝ մօտեցնել. սիրել՝ սիրցնել, հաւնիլ՝ հաւնեցնել, հոսիլ՝ հոսեցնել, կարդալ՝ կարդացնել, ճանչնալ՝ ճանչցնել*: Բոլոր պատճառական բայերը ել լծորդութեան բայեր են:

Եցն-ով պատճառական կը դառնան գլխաւորաբար *ել եւ իլ* խումբի պարզ եւ *են* սոսկաձանցաւոր բայերը. *գրել՝ գրեցնել, բերել՝ բերեցնել, ըսել՝ ըսեցնել, ցանել՝ ցանեցնել, քաղել՝ քաղեցնել, խօսիլ՝ խօսեցնել, հաւնիլ՝ հաւնեցնել, սորվիլ՝ սորվեցնել, մօտենալ՝ մօտեցնել, մերձենալ՝ մերձեցնել* եւ այլն: Կարգ մը բայեր կը շեղին ընդհանուր օրինաչափութենէն՝ *խմել՝ խմցնել, սիրել՝ սիրցնել, սպասել՝ սպասցնել, աշխատիլ՝ աշխատցնել, ցափիլ՝ ցափցնել* եւ այլն:

Ացն-ով պատճառական կը դառնան *ալ* լծորդութեան պարզ եւ *ան* սոսկաձանցաւոր բայերը. *զգալ՝ զգացնել, կարդալ՝ կարդացնել, գոռալ՝ գոռացնել, խնդալ՝ խնդացնել, հեռանալ՝ հեռացնել, բարկանալ՝ բարկացնել, իմանալ՝ իմացնել* եւ այլն: *խաղալ՝ խաղցնել* բայը զարտուղի կը մնայ:

Յն-ով պատճառական կը դառնան *ն եւ չ* սոսկաձանցաւոր բայերը. *ճանչնալ՝ ճանչցնել, գողնալ՝ գողցնել, գիտնալ՝ գիտցնել, լմննալ՝ լմնցնել, հասնիլ՝ հասցնել, մեռնիլ՝ մեռցնել, թռչիլ՝ թռցնել* եւ այլն:

Պատճառական բայերու կազմութեան ատեն սոսկաձանցները կ'իյնան, ինչպէս *փախչիլ՝ փախցնել, մեռնիլ՝ մեռցնել, բարձրանալ՝ բարձրացնել, մեծնալ՝ մեծցնել, չորնալ՝ չորցնել* եւ այլն: Տարահիմք բայերը պատճառականը կը կազմեն կատարեալի հիմքէն. *ուրել՝ կերցնել*: Խօսակցական դնել՝ դրեցնել, ընել՝ ըրեցնել, իյնալ՝ ինկացնել պատճառականները ճիշդ կազմութիւններ ըլլալով հանդերձ մերժուած են գրականին կողմէ: *Դնել եւ ընել* պատճառական կ'ըլլան *տալ* բայով:

Դարձնել, անցրնել, հարցնել, ցուցնել ն սոսկաձանցաւոր բայերը պատճառական բայեր չեն:

Պատճառականի վերածուիլը չէզոք բայը մասնակի ճանչնալու միջոց մըն է: Թէեւ ներգործականներն ալ կրնան պատճառականի վերածուիլ, բայց չէզոքները կրաւորականի չեն կրնար վերածուիլ:

Ներգործական բայերը կրնան պատճառական դառնալ երկու ձեւերով. ա) *ցնել/ացնել/եցնել* ածանցով. *գրել՝ գրեցնել, խօսիլ՝ խօսեցնել, կարդալ՝ կարդացնել* եւ այլն. բ) ներգործական բայի աներեւոյթին հետ *տալ* բայը գործածելով. ասիկա յարադրաւոր կազմութիւն է, ինչպէս՝ *գրել տալ, խօսիլ տալ, կարդալ տալ* եւ այլն: Ներգործական շատ բայեր պատճառականը կը կազմեն միայն յարադրաւոր ձեւով՝ *բանալ տալ, դնել տալ, ընել տալ, կատարել տալ, բուժել տալ, մատնել տալ, գովել տալ, յարգել տալ, քննել տալ* եւ այլն: Ուցել վերջաւորութեամբ բայերը պատճառական կը կազմեն *տալ* բայով՝ *ապացուցել տալ, զեկուցել տալ, ծանուցել տալ, հատուցել տալ, մատուցել տալ, յարուցել տալ, կառուցել տալ, ուսուցել տալ, սնուցել տալ*: Նաեւ *Դարձնել, անցընել, հարցնել, ցուցնել* բայերը:

Քանի որ պատճառական բայը ներգործական բայի արժէք ու յատկութիւն ունի, հետեւաբար կրնայ կրաւորականի վերածուիլ. *ամրանալ՝ ամրացնել-ամրացուիլ, փակիլ՝ փակցնել-փակցուիլ, հեռանալ՝ հեռացնել-հեռացուիլ, յարմարիլ՝ յարմարցնել-յարմարցուիլ, բնակիլ՝ բնակեցնել-բնակեցուիլ* եւ այլն:

Նկարը պատին ամրացուած է:

Որմազդը սիւնին փակցուած է:

Մարդը գործէն հեռացուած է:

5.15.– Բայական կրկնասեռութիւն եւ սեռափոխութիւն

Խօսելով ներգործական բայերու մասին Ա. Այտընեան կը գրէ. «Քանի մը ներգործական բայեր հայցականի տեղ տրական հոլով խնդիր-սեռի կ'առնուն. եւ են՝ *յաղթել, աղաչել, օգնել, սպասել, տիրել, խնայել, հետեւիլ, զարնել, նայիլ* եւ այլն»⁹: Բայական խնդրառութեան փոփոխութիւններ կը նկատուին

⁹ Արսէն Այտընեան, *Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, յօդ. 347:

գրաւոր հայերէնի բոլոր փուլերուն մէջ եւս, կրկնասեռութիւնն ու սեռափոխութիւնը յարափոփոխ վիճակներ են հայերէնի բայական համակարգին մէջ: Այտրնեանի նշած բայերէն ոմանք ներկայիս կամ կրկնասեռ են՝ *սպասել, խնայել, զարնել, նայիլ*, կամ արդէն միայն չէզոք բայեր՝ *աղաչել, օգնել, տիրել, հետեւիլ*:

ա) Երկսեռ բայեր՝ ներգործական եւ չէզոք

Արդի արեւմտահայերէնի մէջ ներգործական բայերէն ոմանց յատուկ է չէզոք գործածութիւնը: Կարգ մը բայերու կրկնասեռութիւնը կը գործէ բառային նոյն իմաստի պայմաններուն մէջ, առանց իմաստի փոփոխութեան: Ենթական պարզապէս այդ գործողութիւնը կը կատարէ, ինչպէս՝ *խօսիլ, գրել, երգել*.

- | | | |
|-----------------------|---|-----------------|
| Մայրիկը օրօր կ'երգէ: | > | Մայրիկը կ'երգէ: |
| Մարդը ճառ կը խօսի: | > | Մարդը կը խօսի: |
| Տղան ոտանաւոր կը գրէ: | > | Տղան կը գրէ: |

Սեռափոխութեան պատճառներէն մէկը իմաստի փոփոխութիւնն է, երբ նոյն բառը խօսքային տարբեր իրադրութեան մէջ տարբեր իմաստով մըն ալ կը գործածուի: Իմաստափոխութիւնը սեռափոխութեան պատճառ կը դառնայ կամ առնուազն կրկնասեռ կը դարձնէ որոշ բայեր:

Ազդել. ա) չէզոք, «ներգործել», կ'առնէ տրական հոլովով խնդիր. *Ի՞նչ կը պատահի եթէ ձգենք, որ աշխարհը մեր մտածումին ազդէ: Իւրաքանչիւրը ուղեղին կ'ազդէ փարբեր ձեւերով: Մտազարութիւնը կ'ազդէ մտածելակերպին, վարուելակերպին եւ ամենօրեայ գործերը կատարելու կարողութեան:* Կ'առնէ նաեւ վրայ կապով կապական դարձուածք՝ *Ջաւախքի իւրաքանչիւր իրադարձութիւն կ'ազդէ Հայաստանի վրայ (Ասպ): Թուրքիոյ մերձեցումը դրական կ'ազդէ Ղարաբաղի տագնապի լուծման վրայ (Ազդ): Ձեր ներկայութիւնը կ'ազդէ աշխատանքներու ընթացքին վրայ.* բ) ներգործական, «ներշն-

չել, թելադրել», հայցական հոլովով խնդիր. *Պաշտօնս ահ կ'ազդէ ինձ (ՍՏ): Ինչո՞ւ սարսափ կ'ազդէ հայրենադարձութեան առաջադրանքը (Հայր): Կրաւորականը՝ ազդուիլ:*

Ապրիլ. ա) չէզոք, «կեանք անցընել». *Ան երկար ապրեցաւ, Եղբայրս Փարիզ կ'ապրի. բ)* ներգործական, «զգալ». հայցական հոլովով խնդիր՝ *ապրիլ այդ պահը, ապրիլ ասմունք մը, երաժշտական կտոր մը, ապրիլ երջանիկ օրեր: Աշնան երեկոները հոն կ'ապրիմ անմոռանալի պահեր (ՇՇ): Կրաւորականը՝ Ապրուած օրեր (ԱԳ): Կարօտով կը յիշենք ապրուած կամ չապրուած հին օրերը:*

Բուրել. ա) չէզոք, «հոտ արձակել». *Ափ մը հողէդ ամբողջ երկինք մը դեռ կը բուրէ (Ս): Նոր բացուող ծաղիկ մը կը բուրէ (ՁԵ). բ)* ներգործական, բուրել բան մը, հայցական հոլովով խնդիր. **Հոգի՛ կը բուրէ / Մարմինն իր շուշան (ՄՁ):** *Տան մէջ իւրաքանչիւր անկիւն անոր յիշատակը կը բուրէ (Ազդ): Քու գորշ հողդ ծոթրին կը բուրէ (ԴՎ): Կեանք մը, որ կը բուրէ հաւապք, յոյս ու սէր (ՆՕ):*

Ջարնել. ա) չէզոք, «հարուածել», տրական հոլովով խնդիր. *Ձեռքով զարկաւ ինձի. բ)* ներգործական, «բանով մը հարուածել ուրիշ բանի մը». *մուրճը գամին զարնել, ձեռքը ծունկին զարնել, ձեռքը գլխուն զարնել. կ'ունենայ երկու խնդիր՝ ուղիղ խնդիր եւ տրական հոլովով անուղղակի խնդիր. գ)* ներգործական՝ «սպանել, որսալ». *Որսորդը այժեամ մը զարկաւ: Ունի կրաւորականը՝ Ջարնուած որսորդը (ՌԶ):*

Թքել. ա) չէզոք, տրական հոլովով խնդիր. *Թքեց մարդու երեսին: Ով մարդկային արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ (Ս). բ)* ներգործական, հայցական հոլովով խնդիր. *Հիւանդը արիւն կը թքէր օրն ի բուն: Պիտի հելնեմ Մեծ Մասիսի վեհ գագաթին / վրէժիս հրաբուխը թքնեմ թուրքի ճակատին (ՅՇ):*

Լալ. ա) չէզոք. *Մանուկը կու լայ: Բոլոր երեխաներն ալ կու լան: Շիրիմներու բոյրին մէջ սիրտ մը կու լայ այս գիշեր... (ՆՀ). բ) ներգործական, հայցական հոլովով խնդիր. *Մարդը իր կորուստները կու լար: Լաց անմեղութեան արցունքը անդարձ (ՎԹ):**

Լսել. ա) ներգործական, հայցական հոլովով խնդիր. *լսել երգ, լուր, սուլոց եւ այլն. ամեն կողմէն ինծի կը թուէր որ փղոս ծայնը կը լսեմ: Կրաւորականը՝ լսուիլ. բ) չէզոք, «անսալ, հնազանդիլ», տրական հոլովով խնդիր. *լսել մէկուն, ծնողքին, ընկերոջ: Յատուկ է խօսակցականին:**

Խաղալ. ա) չէզոք. *Մանուկները բակին մէջ կը խաղան. բ) ներգործական, հայցական հոլովով խնդիր. Մանուկները բերդախաղ կը խաղան:*

Խնայել. ա) ներգործական, «տնտեսել, խնայողութիւն ընել», հայցական հոլովով խնդիր. *խնայել դրամը, ջուրը, իւղը. կրաւորականը՝ խնայուած: բ) ներգործական՝ «առկախել որեւէ գործողութիւն». կ'առնէ ուղիղ եւ անուղղակի խնդիր. Այդ զրկանքը խնայէ մեզի: Այդ ամօթը խնայէ մեր ընտանիքին. գ) չէզոք, «գթալ, ողորմիլ, ներել», տրական հոլովով խնդիր. *Դահիճը խնայեց երիտասարդ փողուն: Խնայեցէք մեր պատիւին:**

Ծնիլ. արեւելահայերէնը ունի *ծնել-ծնուել* զոյգը՝ ներգործական-կրաւորական: Արեւմտահայերէնի մէջ պարզապէս կրկնասեռ է. ա) չէզոք, «աշխարհ գալ». *մանչուկ մը ծնաւ: բ) ներգործական, «աշխարհ բերել», հայցական հոլովով խնդիր. Կինը մանչուկ մը ծնաւ: Կայ ծննդաբերել, չէզոք:*

Հեւալ. ա) չէզոք. *Յոգնութենէն կը հեւար. բ) ներգործական, հայցական հոլովով խնդիր. Աքասիաներ, գինով լոյսէ ու փապէ, / Օրօրուելով մաքուր շունչ մը կը հեւան... (ՄՄ): Կը հեւայ անանուն աղօթք մը, որ կը հիւսուի ինքն իր վրայ:*

Հոգալ. ա) ներգործական, «հայթայթել», հայցական հոլովով խնդիր. *ընտանիքին ապրուստը հոգալ, ծնուն ապաշարը հոգալ*: Հայրը կը հոգայ անոր **կարիքները**: Համազգայինը կը հոգայ ուսման **կրթաթոշակները**. բ) չէզոք, «հոգ տանիլ, խնամք տանիլ». տրական հոլովով անուղղակի խնդիր. *հոգալ որբերուն, հիանդին, պարտէզին, տան*. նաեւ «հոգ ընել, մտմտալ բանի մը մասին, բանի մը համար, բանի մը վրայ»:

Հոտիլ. ա) չէզոք, «նեխիլ, ապականիլ». *Ձուկը գլուխէն կը հոտտի: Որոն գուպան կը հոտտի: Անիկա ո՛չ կ'որդնտտի, ո՛չ ալ կը հոտտի*. բ) ներգործական, հայցական հոլովով խնդիր, «գէշ կամ լաւ բանի մը հոտ արծակել». *Բերանը սխտոր կը հոտտի: Հալէպը Երկիր կը հոտտի (ՍԱ): Մէզ կը հոտտի երկիրդ (ՍԱ): Ամբողջ խանութը հին կօշիկ կը հոտտի (ՎԹ*)*:

Ճնշել. ա) չէզոք, «նեղութիւն պատճառել», կ'առնէ տրական հոլովով խնդիր. *Ծովուն աղաբոյր շունչը՝ որ խորունկ զգացողութեան մը պէս կը ստուարանայ ու կը ճնշէ տակաւ հոգիս (ՄՄ): Նախազգացում մը կը ճնշէ կտործքիս (ԺՄԿ): Կ'առնէ նաեւ վրայ կապով կապական դարձումածք՝ Թուրքիա կը ճնշէ ոչ մահմետական առաջնորդներուն վրայ (Ասպ): Բարձր հասակը կը ճնշէ արեան շրջանառութեան համակարգին վրայ: Ծանր կապարեայ տիրութիւն մը կը ճնշէ այդ թշուառութեան վրայ (ՁԵ). բ) ներգործական, «նուաճել, ճգմել», հայցական հոլովով խնդիր. *Այս զգացումը կը ճնշէ քեզ: Ընշել ապստամբութիւնը: Ատրալէյ-ճանը կը ճնշէ Պոլկարիան՝ դէպի ահաբեկիչներ զինամթերքի իր առաքումները բացայայտած լրագրողը գործէն արձակելու պահանջով (Արեւելք): Մարդուն սրտին մէջ եղող վիշտը զանիկա կը ճնշէ: Դատարկ, ամայի թաղը կը ճնշէ հոգիս (ԼՄՄ): Թուրքիա կը ճնշէ ոչ-մահմետական առաջնորդները (Եռ): Կրաւորականը՝ ճնշուիլ:**

Յաղթել. այս բային հին հայերէնի մէջ թէ՛ հայցական եւ թէ՛ տրական հոլովով խնդիրներ առնելուն կը հանդիպինք. *Խեցգեպն յաղթեաց զԱղուէսն: Տէր յաղթեաց մահու՝ իոր նշանաւ խաչին: Այլ իբրեւ յաղթեաց թշնամոյն: Եւ կամիս յաղթել մարմնոյ եւ արեան:* Նոյն է պարագան արեւմտահայերէնի մէջ. *Ուժեղ բանակ ու համախմբուած հասարակութիւն ունենալու պարագային հնարաւոր չէ մեզ յաղթել: Քաջաբար պատերազմելով յաղթել թշնամին: Չկայ որեւէ ուժ որ կարենայ Գերմանիան յաղթել:* Սովորական է լսել՝ *Երկու խաղ յաղթեց, Երկու ձեռք յաղթեց, Տիգրանը առաջին խաղը յաղթեց:* Հիմնականը տրական հոլովով խնդիրն է՝ *Ինչպէս կարելի է մահով մահուան յաղթել: Մարդու մէջի բարին պիտի կարենայ յաղթել իր մէջ բոյն դրած չարին: Հայկ յաղթեց Քէլին:* Իբրեւ ներգործական բայ անոր յատուկ է նաեւ կրաւորականը՝ *Դաշնակցութիւնը յաղթած է ու յաղթուած:* Բային յատուկ է նաեւ չէզոք գործածութիւնը՝ *Հիւսիսը յաղթեց եւ հարաւը պարտուեցաւ:*

Նայիլ. ա) չէզոք, «աչքը ուղղել, հայիլ», տրական հոլովով խնդիր. *Տէրը երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն, Աստուած երեսիդ նայեցաւ.* բ) ներգործական, «քննել, զննել, բան մը ակնկալել», հայցական հոլովով խնդիր. *Բժիշկը քննեց փղան, լեզուն նայեցաւ, կոկորդը նայեցաւ (ԵՕ): Շուքը նստեր՝ արելը կը նայի (Ժ): Կնկանը երեսը կը նայի (Ծ): Հօրը ձեռքը կը նայի. բ) ներգործական, «հոգալ, խնամել». *Տղան հիւանդ մայրը կը նայի:**

Ներել. գրաբարի մէջ կ'արտայայտէր երկու սեռ՝ չէզոք («տոկալ, համբերել»)՝ *Եւ ոչ հաճեսցի Աստուած ներել նմա* եւ ներգործական («թոյլ տալ, խնայել»)՝ *Չայս եւ Աստուած կամեցաւ, բայց որ ներեցեր):* Արեւմտահայերէնի մէջ ունի երկու տարբեր խնդրառութիւններ. ա) չէզոք, «թողութիւն շնորհել», տրական հոլովով խնդիր. *Կեանք, ահ, ներէ՛ քեզ*

գտնել չգիտցող սա **տղուն** (ՎՎ): Մի՛ ներեր **անոնց**, քանի որ գիտեն՝ ինչ ըրին (ԳՊ). բ) ներգործական, «մեղքը արձակել». Ներէ՛ մեզի մեր **պարտքերը**, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտականներուն (ՍԳ): Աստուած, որ արդար է, պիտի ներէ մեր **մեղքերը**: Ներէ՛ մեր **յանցանքները**: Անոնց **անօրէնութիւնը պիտի ներեմ**: Կրաւորականը՝ ներուիլ:

Շնչալ. ա) չէզոք՝ Ծառերը կը շնչան: Նոյնանման յանգերով կը շնչան (Ազդ): Յովհաննէս Ճիրագի աստուածային շունչով կը շնչան գիրենք ողջունող ամէն բարի հոգիի (Արրտ). բ) ներգործական, հայցական հոլովով խնդիր. Ականջիս **գաղտնիք մը** շնչաց: **Ի՞նչ** շնչամ Աստուծոյ խուսականջին (ՀՍ):

Ողբալ. ա) չէզոք. Ողբացին ու լացին մեռելին վրայ. բ) ներգործական, հայցական հոլովով խնդիր. Կ՛ողբամ **զքեզ**, կ՛ողբամ **կորուստներս**: Ես **ձեզ** կ՛ողբամ / ներշնչանքի արգանդաջուրերուն մէջ խեղդուած (ՅՆ):

Պարել. ա) չէզոք, «կաքաւել». Մինչեւ առտու պարեցին. բ) ներգործական, հայցական հոլովով խնդիր. Տղաքը քոչարի պարեցին:

Վայելել. ա) ներգործական, «ունենալ, ըմբռնել», հայցական հոլովով խնդիր. վայելել կեանքը, զաւակը, գրական ու արուեստի գործ մը: Վայելեցէք Յ. Թումանեանի **բանաստեղծութիւնները**. բ) չէզոք՝ «յարմարիլ, պատշաճիլ», տրական հոլովով խնդիր. Գլխարկը վայելած է **անոր**: Այդ խօսքը չի վայելեր **քեզի**: Հագուստը շատ վայելած է **հարսին**: Պատճառականը՝ վայլեցնել. վայելեցնել կանոնաւոր ձեւը չի գործածուիր:

Վնասել. ա) ներգործական, «կորսնցնել». հայցական հոլովով խնդիր. վնասել հարիւր դրամ, հինգ ոչխար, պարկ մը շաքար. կրաւորականը՝ վնասուիլ. բ) չէզոք, «վնաս

պատճառել, աներել»։ տրական հոլովով խնդիր. **Կարկուտը վնասեց բերքին**: Ապականությունը կը վնասե **առողջութեան**: Այդ ընթացքը կը վնասե **մեզ**: Այս իմաստով ունի իր կրաւորականը՝ **Բերքը վնասուած է**:

Նկատուած է, որ արեւմտահայերէնի մէջ շարք մը չէզոք բայեր եւս սկսած են ներգործական ըլլալ կամ գործածուիլ թէ՛ չէզոք, թէ՛ ներգործական, առանց իմաստափոխութեան. ասիկա սեռափոխութեան երեւոյթ է: Ասիկա պայմանաւորուած է խնդրառութեան երկձեւութեամբ՝ տրականէն հայցական:

Բարեւել. տրական՝ **Բարեւէ մայրիկիդ**: **Բարեւեց ներկաներուն**: Հայցական՝ **Չինուորը զարմացաւ, բարեւեց զայն եւ հարցուց (հնարա)**: Գլխով բարեւեց **մեզ**, բայց չմօտեցաւ (ՎՇ): **Յանձնախումբի անունով բարեւեց ներկաները (Ազդ)**:

Հանդուրժել. տրական՝ **Ան նախապիծքի հանդուրժեց (ԳԶ)**: Դեղագործին քոյրը ուրիշներէ անլի դժկամութեամբ հանդուրժեց այս **յարձակողականին (ՎՇ)**: Հայցական՝ **Հանդուրժեց իմ ներկայութիւնը**: 1918-ի Յունիս-Նոյեմբեր ամիսներուն կառավարութիւնը հանդուրժեց այդ **պարտադրանք-հարկադրանքը**:

Մեղքնալ. տրական՝ **Մեղքցայ իրեն (ՌՍ)**: **Ընդանիքիս ալ մեղքցայ վշտացնել շիտակը (ՎԹ*)**: Հայցական՝ **Գոնէ մայրիկդ մեղքցիր (ՇՇ)**: **Չես գիտեր ինչ կ'ըլլամ, մեղքցիր զիս (ԱԱ)**:

Մտիկ ընել. տրական՝ **Նոյ Աստուծոյ մտիկ ըրաւ ու փապան շինեց (ՍԳ)**: **Մտիկ ըրաւ իր կնոջ բարկաճայթ խօսքերուն (ԵՕ)**: Հայցական՝ **Եպրաքսէ հանըմ յօնքերը պոստած մտիկ ըրաւ այս առաջարկութիւնը (ՇՇ)**: **Մտիկ կ'ընէր ձմեռ գիշերուան մը ամբողջ երաժշտութիւնը**: **Մտիկ ըրաւ ջութակի թելերուն ճիչերը (ԶԵ)**:

Ունկնդրել. տրական՝ *Ունկնդրեց, ինչպես շարերուն աղա-
չանքներուն էր ունկնդրած (ԳՁ): Հայցական՝ Ժողովը
ունկնդրեց շրջաններու գործունէութեան փեղեկագրա-
կան գեկուցումները (Ազդ): Ներգործականը արդէն
ունի կրաւորական ձեւը՝ հաճոյքով կ'ունկնդրուի,
ունկնդրուած բաժինը կրկնել:*

Սպասել. տրական՝ *ԵԱՀԿ-ը կը սպասէ Արարէյճանի պա-
տասխանին (Ազդ): Սպասենք նոր կլոր թուականի մը
(Ասպարէզ): Հայցական՝ Տէրը մեր հայրն է, որ մեզ կը
սպասէ: Մեր մեծամասնութիւնը կը սպասէ իր կալուածնե-
րը ծախելու յարմար առիթ մը (Ազդ): Իբրեւ ներգործա-
կան արդէն ունի կրաւորական ձեւը՝ Անձրեւ կը սպասուի,
սպասուած հիւրը:*

Սկսիլ. տրական՝ *Սաֆա սկսաւ իր փորձերուն (Ազդ): Լրա-
գրողներու Համահայկական 9-րդ Համաժողովը սկսաւ
իր աշխատանքներուն (Ազդ): Լուսանկարչութեան սկսայ
(Ազդ): Ես առաջին անգամ որպէս պատերազմական
ֆոթո լրագրող գործի սկսայ 2002-2003-ին (Արեւելք):
ՀՄԸՄ քայլարշաւի սկսաւ: Հայցական՝ Յանուն արդա-
րութեան երթ կը սկսիմ: Նանուկիս ժպիտով օրս կը
սկսիմ: Սաղմոսի այս բառերով կը սկսիմ խօսքս: Զե-
կոյցս կը սկսիմ պատմական ակնարկ մը տալով: Սկ-
սայ Chanitz.org կայքէջի աշխատանքը:*

**բ) Երկձեւութեամբ կրկնասեռ բայեր՝ ներգործական եւ
չէզոք**

Բայի երկձեւութիւնն ալ սեռի տարբերութիւն կը ստեղծէ.
ձեւի փոփոխութիւնը կ'արտայայտէ քերականական եւ բա-
ռային իմաստի փոփոխութիւնը: Այս բայերը կարելի է խմբա-
ւորել այսպէս.

1) Սեռակազմ վերջաւորութիւններով տարբերակուող բա-
յեր. ա) ուիլ-ով կրաւորական սեռի բայի կազմութիւն՝ սիրել-
սիրուիլ, փեսնել-փեսնուիլ, խօսիլ-խօսուիլ, կարդալ-կարդա-

ցուիլ (տես 5.11). բ) ել լծորդութեան ներգործական բայերու իլ-ի փոխակերպումով չէզոք սեռի (կրաւորական) բայի կազմութիւն՝ վառել-վառիլ, փարապել-փարապիլ, մարել-մարիլ (տես 5.11). գ) աջնել/եցնել/ցնել վերջաւորութեամբ ներգործական եւ չէզոք բայերու ներգործական (պատճառական-անցողական) սեռի բայի վերածում, ինչպէս՝ կարդալ-կարդացնել, մօտենալ-մօտեցնել, ճանչնալ-ճանչցնել (տես 5.14):

2) Բայի ձեւափոխութեամբ (հիմքի հնչիւնափոխութիւն, սոսկածանցի կորուստ, լծորդութեան փոփոխութիւն) **պայմանաւորուած սեռափոխութիւն.**

Զիջիլ. ներգործական, «սեփական կամքով բան մը ուրիշին տալ», *զիջիլ տեղը, դիրքը, աթոռը, իրաւունքը: Ինչ խօսք, ես կը զիջիմ ձեզի այդ սափորները: Կիլիկիոյ արքան գահը զիջեցաւ իրեն: Սափտամ «Շաթ Էլ-Արապ»ի կէսը Շահին զիջեցաւ: Կրնայ նաեւ մասնական սեռի խնդիր ունենալ՝ Բայց ոչ մէկ առումով զիջեցաւ ապրումի եւ խոհականութեան վաւերական կրակէն:*

Զիջանիլ. չէզոք, «հարկադրաբար ընդունիլ նուաստացուցիչ համարուած բան մը», կը պահանջէ տրական հոլովով խնդիր. *զիջանիլ մէկուն, կացութեան մը, առաջարկի մը եւ այլն: Արդ՝ այս բարեկամաց խնդիրը կատարելու կը զիջանիս՝ քանի մ'անտիպ նամակներ ալ աւելցնելով (ՄՄ*): Անոնց վրայ ակնարկ մը նեպելու իսկ մի զիջանիր (ՄՀԳ): Բայը արդէն հնաոճ է. սեռային նոյն յատկանիշներով կը գործածուի զիջիլ բայը, որ այդպիսով երկսեռ բայ կը դառնայ. Վերջին արժուեքոյնը եւս զիջեցաւ խորհրդային ամբողջափրկութեան: Դաւիթ Յովասափեան 0:5 հաշիւով զիջեցաւ մրցակիցին: Ֆրանսա թուրք ազգայնամոլներուն զիջեցաւ:*

Հոտոտել/հոտոտալ. ներգործական, «հոտ քաշել». *Ո՞ր ծաղիկը ես հոտոտամ (ազդ):*

Հոտիլ. ունի ներգործական և չէզոք գործածություններ (տե՛ս էջ 39):

Ծխել. ներգործական. *Օրը երկու գլանակ կը ծխեմ:*

Ծխալ. չէզոք, «մխալ, ծուխ արծակել». *Ռուսիոյ մէջ դեռ կը ծխայ չէջեններուն վառած հրդեհը (Ազր): Այդ սպիտակ փան ծխնելոյզը կը ծխայ:*

Կարօտնալ. ներգործական, «կարօտ զգալ մէկուն կամ բանի մը հանդէպ», *կարօտնալ մէկը կամ բան մը. Կը կարօտնամ զհինքը: Պիտի կարօտնամ այս պահերը: Հայրենիքս կը կարօտնամ:*

Կարօտիլ. չէզոք, «կարիքը ունենալ բանի մը», տրական հոլովով խնդիր, *կարօտիլ ընկերութեան, զօրակցութեան, խնամքի, աշխատանքի. Բայց ես դեռ երկար ատեն ուսուցանելէ աւելի ուսանելու կը կարօտիմ: Երջանիկ ըլլալու համար ուրիշ բանի մը ես կը կարօտիմ: Բայց ինչու ուրիշին կարօտիմ:*

Հաւանիլ. չէզոք, «հաճութիւն յայտնել, համաձայնիլ, յօժարիլ», կ'առնէ տրական հոլովով խնդիր, ճիշդ գրաբարեան իմաստով եւ խնդրառութեամբ՝ *Եկ հաւանեաց բանից ասագեղոյ դստերս Ալանաց: Արեւտահայերէն՝ Այնպէս որ կը հաւանիմ արտայայտած խօսքերուն: Հաճութեամբ կը հաւանիմ այդ փափաքին: Սահակ հաւանեցաւ իրեն եղած այս առաջարկին: Դեսպանատունը հաւանեցաւ վրանաբնակներուն հոգը ստանձնելու:*

Հաւնիլ. ներգործական, «սիրել, հաճելի գտնել». *Այս գործը շատ կը հաւնիմ: Նայուածքները չհաւնեցայ: Աս խորհուրդը շատ հաւնեցայ: Ես իմ ընկերոջս մէջ կը հաւնիմ քաջութիւնն ու գթասրտութիւնը: Ես կը հաւնիմ իր հաւասարակշռութիւնն ու ճարպիկութիւնը: Ահա թէ ինչո՛ւ կը հաւնիմ զանոնք:*

գ) Դիմաւոր բայ-աներեւոյթ կապակցութիւններու խնդրառութիւնը

Ասիկա բայի աներեւոյթին կամ անորոշ դերբային հետ այլ բայի մը աներեւոյթին կամ դիմաւոր ձեւերուն համատեղ գործածութիւնն է, ինչպէս *գրել սկսիլ, կարենալ երգել, կը սիրեմ կարդալ, ըսել կ'ուզեմ* եւ այլն: Այսպիսի «երկբաղադրիչ բայական կապակցութիւնները» ոմանք կը կոչեն «յարադրական բայեր», իսկ ուրիշներ այս կապակցութիւնները կը նկատեն նախադասութեան անկախ անդամներ՝ ստորոգիչ-խնդիր փոխկապակցութեամբ:

Հարց է, թէ աներեւոյթը ինչ հոլովով կը դրուի այսպիսի կապակցութիւններու մէջ:

Ներգործական բայի խնդիրը միշտ հայցական հոլով է. նոյնպէս աներեւոյթի պարագային. հոն շփոթութիւն չի պատահիր. աներեւոյթ բային նախադաս թէ յետադաս ըլլալն ալ հարց չի ստեղծեր. *կը սիրեմ երգել>երգել կը սիրեմ, կը մոռնամ բարեւել>բարեւել կը մոռնամ, կը յետաձգեմ երթալս>երթալս կը յետաձգեմ, կ'երազեմ երթալ/երթալ կ'երազեմ, կրնամ գալ/գալ կրնամ:*

Նոյնպէս՝ *կը պարտադրեմ գրել, կ'արգիլեմ ծխել, կը ստիպեմ խօսիլ, կը հարկադրեմ ընդդիմախօսել, կը պարտաւորեմ կեղծել* եւ այլն:

Ներգործական բայերէն ոմանք երկու խնդիր կ'ունենան՝ ուղիղ խնդիր հայցական հոլովով եւ անուղակի խնդիր տրական հոլովով (*Մարդը խօսքը ուղղեց ներկաներուն*): Ինչպէս վարուիլ երբ խնդիրներէն մէկը աներեւոյթն է: Հոս երկու կաղապար կը գործէ՝ 1) *Պարտադրել մէկուն* (անուն-դերանուն) **բան մը ընել կամ ըլլալ** (աներեւոյթ). 2) *Ստիպել մէկը* (անուն-դերանուն) **բան մը ընելու կամ ըլլալու** (աներեւոյթ):

Առաջին կաղապարին կը հետեւին *պարտադրել* եւ *արգիլել* բայերը. անունը՝ տրական, իսկ աներեւոյթը՝ հայցական հոլովով.

Ան տրդուն պարտադրեց պարտականութիւնը գրել: Ճիշդ ինչպէս՝ *Ան թշնամիին պարտադրեց հաշտութիւնը:*

Հայրը արգիլեց **զաւկին լողի երթալ**: Ճիշդ ինչպէս՝ Հայրը զաւկին արգիլեց խաղը:

Ասիկա նոր լեզուին մէջ մեծ չափով կը պահէ իր պատկերը. Ան **բոլորին կը պարտադրէ իր քով երթալ**: Պետական Մարմինը կ'արգիլէ **Տիգրան Խզմալեանին ներկայանալ** Վենետիկի «Պիենալէ»ին: Պետութիւնը **հայոց անկէ անցնիլը կ'արգիլէ**: Այս վէմը կ'արգիլէ **ինծի** Յիսուսին **հասնիլ**: Աւտորիա եւս մտադիր է արգիլել թուրք քաղաքական **գործիչներուն** սահմանադրական հանրաքուէի քարոզարշաւի ծիրին մէջ ելոյթներ **ունենալ** իր փարածքին մէջ: Ան կ'արգիլէ հնարատրութիւն փալ **քաղաքացիներուն՝** առճակատման փարածքը **լքել**: Սակայն կը հանդիպին նաեւ շեղումներ. Կը պարտադրէ Հիւսիսային **Քորէային նստելու** (նստիլ) բանակցութեան: Տինքի թողած գաղափարական ժառանգը **մեզ** (մեզի) կը պարտադրէ **առերեսուիլ** մեր թերութիւններուն հետ:

Երկրորդ կաղապարին կը հետեւին *ստիպել, հարկադրել, բռնադատել, հարկատրել, պարտատրել* բայերը. անունը՝ հայցական, իսկ աներեւոյթը՝ տրական հոլով.

Հայրը ստիպեց **տղան** պարտականութիւնը **գրելու**:

Տանտէրը հարկադրեց **վարձակալը** տունը **լքելու**:

Յազկերտ բռնադատեց հայ **նախարարները** իրենց հաւատքը **փոխելու**:

Ասիկա մասամբ կը գործէր լեզուի հին որակին մէջ. Պիտի ստիպեմ **զինքն** յուսահատելու եւ նոյնիսկ քեզմէ ներումն **խնդրելու** (ՅՊ), բայց մերօրեայ սփիւռքահայ մամուլին մէջ այս բայերուն համար կը գործեն երկու ուրիշ կաղապարներ՝ ոմանք երկու խնդիրներն ալ կը դնեն հայցական հոլովով (Հայրենիքի սէրը կը հարկադրէ **մեզ դիմադարձել**), իսկ ուրիշներ՝ անուն-դերանունը տրական, աներեւոյթը հայցական շարքով (Ստիպողանքը կը հարկադրէ **մեզի** այս միջոցին **դիմել**): Վերջինը անելի տարածուն կը թուի. այսինքն՝ այս բայերու պարագային եւս տարածուած է **մէկուն** (անուն-դերանուն) **բան մը ընել կամ ըլլալ** (աներեւոյթ) կաղապարը. Կը ստի-

պեմ **ինքզինքիս տրամաբանել**: Որպեսզի լաւ մարդուն ստիպես չարիք գործել: Սահմանները փակելը կը հարկադրէ **յղիներուն, երեխաներուն, մեծահասակներուն եւ հիւանդներուն բախիլ** թուրք սահմանապահներուն հետ: Ան կը հարկադրէ **Տէր Գարեգին քահանային** առանց լուր տալու **մեկնիլ**: Հողին ձայնը կը հարկադրէ **մեզի հայ ըլլալ**: Ծնողքը կը պարտադրէ, կը ստիպէ **փոքրիկին հաւատալ** կամ **չհաւատալ** Աստուծոյ:

Աներեւոյթը չէզոք բայի խնդիր դառնալու պարագային կը ստեղծուի երկուութիւն: Աներեւոյթը կրնայ դրուիլ թէ՛ հայցական եւ թէ՛ տրական հոլովներով՝ գրելու սկսաւ ...սկսաւ գրել. կամքերնին կատարելու հաճեցաւ... հաճեցաւ կամքերնին կատարել:

Արդի հայերէնի մէջ երկուութիւնը նկատելի է թէ՛ նախադաս եւ թէ՛ յետադաս գործածուելու պարագային: Մենք չենք կարծեր, որ չէզոք բայերուն հետ աներեւոյթին հայցական հոլովով գործածուելու տարբերակը կապ ունի չէզոք բայերէն ոմանց նոր լեզուին մէջ ներգործականի վերածուելուն կամ երկսեռ ըլլալուն հետ, որովհետեւ այդ երեւոյթը կայ նաեւ գրաբարի մէջ: **Համարձակիմ դառնապէս յանդիմանել զձեզ: Եւ յիս իսկ համարձակիմ ասել, յանդգնիմ ասել: Թէպէտ այսու ոչ կծանիլ ինչ յանդգնիմ: Յօժարիմ գրել** զդատապարտութեան կրուի, քան պաճարապէս **լռել**: Այս երեւոյթը անցած է նոր հայերէնին, ուր տրական հոլովով աներեւոյթը, գոյականի հետեւութեամբ, մինչեւ այսօր չէ կրցած ամրանալ ու հայցականը դուրս մղել:

Նման երկուութիւն ունին *սկսիլ, ձգտիլ, համարձակիլ, յանդգնիլ, յօժարիլ, վարանիլ* բայերը:

Գրական օրինակներ.

Սկսիլ. տրական. *Յեպոյ կը սկսիմ համադրելու թեմային հետ կապուած նիւթերը իրարու (ասպ): Ես ալ վազելու կը սկսիմ: Թերթարելու կը սկսիմ* օրուան հայրենական մամու-

լը (Արրփ): Հակառակորդիս մարտերը կը դիպեմ այն ժամանակ, երբ **կը սկսիմ մարզուելու** (Ժմկ): Հայցական՝ **Կը սկսիմ** յոյս մուրալ (ԳՊ*): Եւ ես **կը սկսիմ մտածել** (Ազդ): Երբ գրիչը կ'առնեմ եւ **կը սկսիմ գրել** (Ժմկ): Եւ ականայէն **կը սկսիմ խորհիլ**: **Կը սկսիմ նորէն լալ ու պոռալ**:

Ձգտիլ. տրական՝ **Կը ձգտիմ** իր կարիքները իմ կարիքներէս առաջ դասելու: Հայցական՝ **Կը ձգտիմ** իմ գիտելիքները եւ կապերը **ներդնել** յօգուտ իմ երկրին: **Կը ձգտիմ** զանոնք **իրականացնել** հասարակութեան մէջ:

Համարձակիլ. տրական, Չարաքօղլուն համարձակեցաւ **յայտարարելու**, որ... (Ազդ): Ոչ ոք համարձակեցաւ իրեն **մօտենալու**: Համարձակեցաւ **չափուելու** նոյնիսկ Ռուսիոյ հետ (Հայր): Ոչ մէկ փայտան համարձակեցաւ քրտերէն թերթը **հրատարակելու** (Ակօս): Համարձակեցաւ **հարցնելու** աղջկանը, թէ...: Այս բանը **ընելու** համարձակեցաւ: Հայցական՝ Համարձակեցաւ զիս սիրելը **յայտնել**: Հայ ժողովուրդը համարձակեցաւ «ոչ» **ըսել** (Ազդ): Ոչ մէկ բեմադրիչ համարձակեցաւ **բեմադրել** զայն (Ազդ): Ոչ ոք համարձակեցաւ իրեն հարցում **ուղղել**: Չամէտանէն առաջ թէ ետք, ո՛չ ոք համարձակեցաւ այսպիսի հսկայ փարոզութեամբ լայնաշունչ պատմութիւն մը **շարադրել** (Գ): Պատշգամ **ելլել** ու փողոց **նայիլ** ալ կը համարձակիմ:

Յանդգնիլ. տրական, Սահակն էր, որ Չաքարիան ալ **ապտակելու** յանդգնեցաւ: Ան յանդգնեցաւ նոյն օրը պատարագ **մատուցանելու** (Բ): Պօղոս Առաքեալը յանդգնեցաւ **ըսելու**: Յանդգնեցաւ **յայտնուելու** այդ եռեակի կողքին: Հայցական՝ Թուրքիա յանդգնեցաւ **ներխուժել** Հիսիսային Սուրիա: Յանդգնեցաւ սկզբունքային քայլ մը **ընել**: Դատախազ Յովսէփեան յանդգնեցաւ նաեւ **անդրադառնալ** երեւոյթին (Հայր): Յանդգնեցաւ շագանակը իր իսկ ձեռքով **հանել** կրակէն (Ազդ):

Յօժարիլ. տրական՝ սակաւադէպ, Եթէ Աթէշեան յօժարէր պարականութիւնը **թողելու** (Ակօ): Կը յօժարէր հոն **երթալու:** Հայցական՝ Ոչ հայերը յօժարեցան քայլ մը առջեւ **ներսել**, ոչ ալ որոշ բարերարներ յօժարեցան այս պայմաններուն: Անոնք յօժարեցան **ճամբորդել:** Չայները յօժարեցան զինք **ընդունիլ** որպէս թագաւոր:

Վարանիլ. տրական՝ Կը վարանիմ իրեն **հետեւելու** (ԳՁ): Կը վարանիմ **հաւաքալու** (ԱԱ): Խօսակցութիւնս **շարունակելու** կը վարանիմ: Հայցական՝ Կը վարանիմ բառը արարերէնէ վերցուած **համարել:** Սակայն վճռական **ըլլալ** կը վարանիմ:

Իսկ ինչ կը վերաբերի *հաճիլ* չէզոք եւ բարեհաճիլ ներգործական բայերուն, երկուքն ալ աներեւոյթը կը պահանջեն հայցական հոլովով. *Թող հաճին կապուիլ* «Թռչնոց Բոյն»-ի տնօրէնութեան հետ: Եթէ ընդդիմախօսներ կան, **հաճին** խօսք **ուզել:** *Թող բարեհաճին հեռաձայնել* եկեղեցւոյ գրասենեակը: *Թող բարեհաճին լեցնել* կրօնը եւ վաղը զայն **ներկայացնել** Տիկ. Արփիհին:

Իբրեւ եզրակացութիւն կարելի է ըսել, որ չէզոք բայերուն հետ աներեւոյթին հայցական հոլովով խնդրառութիւնը աւելի գործածական է քան տրական ձեւերը, որ ըստ Արմենակ Եղիայեանի «այլեւս ծանր կը հնչեն, եւ մենք հակում ունինք կիրարկելու **համարձակիլ առարկել** և **յօժարիլ զիջիլ** խնդրային բաղադրեալ ձեւերը»¹⁰:

Այս երկուութիւնը ունին նաեւ կրաւորական բայ-աներեւոյթ կապակցութիւնները. **Կը ստիպուիմ պայուսակս լման պարպել** (Ազդ): Գլուխս **կը ստիպուիմ շարժել:** **Կը ստիպուիմ մտածելու** «ազգային ամենակարողութեան ապացոյցներու մասին» (Ասպ): Երկու բառ ալ ես **կը ստիպուիմ խօսելու** (ԱԾ): Հիմա ալ **կը պատրաստուիմ վերադառնալ** զինուորական գործիս: **Կը պատրաստուիմ** յաջորդ հաւաքածոս

¹⁰ Արմենակ Եղիայեան, *Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց*, էջ 191:

ներկայացնել: Հրանդ Մաթեոսեանի մասին յուշեր **գրելու կը պատրաստուիմ:** **Կը պատրաստուիմ ձեզի գալու:**

Միադիմի բայ-աներեւոյթ կապակցութիւններուն մէջ աներեւոյթը միշտ ուղիղ ձեւով հանդէս կու գայ, *պէտք է երթալ, հարկ է բացադրել կացութիւնը, անկարելի է մտերմանալ, պարտաւոր է գալ, անհրաժեշտ է ներկայանալ:*

Գոյականներէ բացառական հոլովով խնդիր պահանջող չէզոք բայեր աներեւոյթէն կրնան պահանջել տարբեր հոլովներ: Օրինակ՝ *վախնալ, զգուշանալ, խուսափիլ, սարսափիլ* բայերը գոյականէն կը պահանջեն բացառական հոլովով խնդիր՝ *շունէ վախնալ, չարէն զգուշանալ, չարէն խուսափիլ, բամբասանքէն սարսափիլ*, մինչ աներեւոյթը կրնայ երեք տարբեր հոլովներով անոնց խնդիր ըլլալ՝ *հանդիպելէ կը վախնամ, հանդիպելու կը վախնամ, հանդիպիլ կը վախնամ:* Ասոնք կրնան յետադաս ալ ըլլալ: Օրինակ՝ *Կը վախնամ գիշերները քնանալէ: Սուր խօսելէ կը վախնամ (ՅՊ): Աչքերս կը վախնամ գոցելու: Հեռանալու կը վախնամ: Կը վախնամ շար գէշ ծառայութիւն մը մատուցած ըլլալ ձեզի (ԵՕ): Կը վախնամ չարաչար գործածել Ձեր ազնուութիւնը (ՅՊ): Ես կը վախնամ զայն նուագել (ԼՂՍ): Կը խուսափիմ պատասխանելէ: Կը խուսափիմ այսօրը բաղդարելէ երեկուան հետ: Կը խուսափիմ ըսելու: Կը խուսափիմ հարցազրոյց տրամադրել:*

Հապա ինչպէս հոլովել եղանակիչ բայ-աներեւոյթ կապակցութիւնները եթէ եղանակիչ բայն ալ աներեւոյթով կը մնայ՝ *երգել սիրել, խօսիլ սկսիլ, ըսել ուզել, կարենալ գրել:* Հոս ես գերադաս անդամը եղանակիչ բայն է, հետեւաբար ան է որ փոփոխութեան կ'ենթարկուի. *Ինչպէս՝ ըսել ուզելով արտայայտուեցաւ, ինչ ըսել ուզելը ինք գիտէ, խօսիլ սկսելուն պէս, խօսիլ սկսելէն ետք, խօսիլ սկսելով, երթալ կարենալու համար, երթալ կարենալով* եւ այլն: Կայ տարածուած երեւոյթ մը, ուր յաճախ *կարենալ* գերադասը կը մնայ անփոփոխ՝ *կարենալ երթալու համար, կարենալ ուրելով, կարենալ փախչելով, կարենալ առանց տեսնելու...* Պէտք է ըսել *երթալ*

կարենալու համար, ուրել կարենալով, փախչիլ կարենալով, առանց տեսնել կարենալու:

5.16.- Բայական յարադրութիւններ

Հայերէնի բայերը իրենց սկզբնաձեւի լծորդութիւններով, դերբայական եւ ժամանակային վերջաւորութիւններով, ապա ներածանցներով, պարզ, ածանցաւոր թէ բարդ բայահիմքերով (*վազ-ել, փախ-չ-իլ, հեռ-ան-ալ, մօտ-են-ալ, ճանչ-ն-ալ, կոխ-կոտ-ել, հաւաք-ու-իլ, կեր-ցն-ել, թագ-աւոր-ել, կառ-ա-վար-ել*) համադրական բառեր են:

Ըստ կազմութեան՝ կայ նաեւ բայերու երկրորդ խումբ մը՝ յարադրութիւնները:

Մէկէ աւելի անջատ բաղադրիչներէ բաղկացած, բայց բառային մէկ իմաստ արտայայտող բարդութիւնները կը կոչուին յարադրութիւններ:

Բայական յարադրութիւնները կ'ըլլան՝ զուգադրական բայեր, պատճառական բայեր, յարադրաւոր բայեր:

ա) Զուգադրական բայեր

Զուգադրական բայերը կազմուած կ'ըլլան երկու կամ աւելի բայերէ, որոնք միասնաբար մէկ գործողութիւն կ'արտայայտեն: Անոնք կրնան հոմանիշ կամ մօտիկ իմաստ ունեցող բայեր ըլլալ, ինչպէս՝ *երգել պարել, գրել կարդալ, ուրել խմել, պոռալ կանչել, ծիլ ծաղկիլ, պահել պահպանել, կտրել անցնիլ*. կրնան հականիշ բայեր ըլլալ, ինչպէս՝ *առնել տալ, երթալ գալ, շինել քանդել, լալ խնդալ, ելլել իջնել, մտնել ելլել, ապրիլ մեռնիլ*, կրնան պատճառահետեւանքային զուգադրութիւն ըլլալ՝ *ուրել պառկիլ, եփել թափել, զարնել սպանել, առնել փախչիլ* եւ այլն:

Խոնարհման մէջ զուգադրական բայերու բաղադրիչները կը խոնարհուին համատեղ՝ *կու գամ կ'երթամ, եկաւ գնաց, կերաւ քնացաւ, կ'ելլեմ կ'իջնեմ, ելիր իջիր, առինք փոխնք, առէք տարէք, կ'առնեն կը տանին*: Կրնան չկրկնուիլ *պիտի խոնարհիչը, թող վերաբերականը* եւ *մի արգելականը՝ պիտի*

երթամ գամ, պիպի ուտեմ խմեմ, թող գան երթան, թող ուտեն խմեն, մի՛ գար երթար, մի՛ ելլեր իջներ եւ այլն:

Չուգադրական բայերը կէտադրական նշաններով չեն տրոհուիր՝ *Գողերը ամէն բան առին տարին:*

Աներեւոյթով, ենթակայական եւ յարակատար դերբայներով զուգադրական բայերուն մէջ կը հոլովուին միայն աներեւոյթն ու դերբայները՝ *Սա երթալ գալը վերջացուր: Սա երթալ գալուն վերջ տուր: Երթալ գալէն յոգնեցայ: Երթալ գալով մտերմացանք: Գացող եկողները շատ էին: Գացող եկողներուն հարցուր: Կերած խմածէս բան չհասկցայ եւ այլն: Կրնան բաղիիսաբար շարադասուիլ. այդ պարագային երկու բաղադրիչներն ալ կը հոլովուին կամ յօդ կը ստանան՝ *Սա գալն ու երթալը վերջացուր: Սա երթալէն ու գալէն յոգնեցայ եւ այլն:**

բ) Պատճառական յարադրութիւններ

Պատճառական յարադրութիւնները կազմուած կ'ըլլան ներգործական եւ չէզոք բայերու աներեւոյթով եւ *տալ* բայով: Կը խոնարհուի միայն *տալ* բաղադրիչը. *գրել տալ՝ գրել կու տամ, գրել պիպի տամ, գրել տուի, գրել տուր:* Յարադիր աներեւոյթը փոփոխութեան չ'ենթարկուիր: Տալ-ով պատճառական բայերը մեծ մասով կրնան փոխարինուիլ *ացն/եցն/ցն* ներածանցով կազմուած համադրական բայերով՝ *կարդալ տալ/կարդացնել, բերել տալ/բերեցնել, սիրել տալ/սիրցնել:*

Առնել տալ յարադրութիւնը կրնայ գիտակցուիլ իբրեւ զուգադրական բայ՝ *առինք տուինք քիչ մը*, եւ իբրեւ պատճառական բայ՝ *տուի մը թաշկինակ առնել տուի քրոջս:*

գ) Յարադրաւոր բայեր

Յարադրաւոր բայերը կազմուած կ'ըլլան յարադիր բառէ մը եւ բայէ մը՝ *երես առնել, հոգի տալ, վրան գալ, մարդ ըլլալ, գոց սորվիլ, արիւն թափել, բարեւ տալ* եւ այլն: Բայն ու յարադիրը կ'արտայայտեն մէկ բառի նշանակութիւն, կ'ըմբռնուին իբրեւ բառային մէկ ամբողջութիւն եւ խօսքի մէջ կը կատարեն միեւնոյն պաշտօնը, ինչ որ սովորական բայերը եւ անոնց դերբայները. *բարեւ կու տամ, բարեւ տուր, բարեւ տուած չեմ,*

բարեւ փալով, բարեւ փոռող մը եւ այլն: Յարադիր անդամը անփոփոխ կը մնայ:

Յարադիր անդամը կրնայ ըլլալ.

– Երբեք անկախ գործածութիւն չունեցող բառ մը. կան մէկ-երկու բառ՝ *ժուռ գալ, մտիկ ընել*: Արեւմտահայերէնի մէջ գրեթէ կը բացակային արեւելահայերէնի մէջ այնքան շատ հանդիպող անկախ գործածութիւն չունեցող բայահիմքերէ կազմուած յարադրութիւնները՝ *փախ փալ, եռ գալ, կու փալ, հուպ փալ, փուլ գալ, քոր լինել, վազ փալ*¹¹:

– Բայարմատ մը, *ինչպէս՝ երդում ընել, գոց ընել, խաղ ընել* եւ այլն:

– Գոյական մը. յարադիրի դերով կրնան հանդէս գալ իմաստային տարբեր շերտեր ներկայացնող գոյականներ, նիւթական եւ վերացական անուններ, *ինչպէս՝ սեղան դնել, գլուխ հանել, խօսք բանալ, աչք գոցել, գործ ընել, պատք քաշել, կատու դառնալ, գովք հիւսել, հոգի փալ* եւ այլն: Լայն գործածութիւն ունին տեղ ընդհանուր հասկացութիւն արտայայտող բառերը՝ *եղբւ երթալ, առջեւ գալ, ներս գալ, դուրս ելլել, վեր բարձրանալ, դէմ դնել, վրան գալ, տակնուվրայ ընել* եւ այլն:

– Դերանուն մը. *իրար անցնիլ, ինքզինքին գալ, ինքզինքէն ելլել, իրար բռնել, հոս-հոն ըլլալ* եւ այլն:

– Ածական մը. *ողջ մնալ, բարի ըլլալ, արթուն կենալ, լաւատես ըլլալ* եւ այլն:

– Չայնարկութիւն մը. *ախ ըսել, վայ կանչել, ափսոս ըլլալ, մեղք ըլլալ* եւ այլն:

Յարադիրները կրնան ըլլալ պարզ, ածանցաւոր ու բարդ բառեր՝ *լուռ մնալ, կուրծք փալ, պատառ-պատառ ընել, փուն ու փեղ ըլլալ, կարգ ու կանոն մտցնել, առեւտուր ընել, ելու-մուտք ընել, ականատես ըլլալ* եւ այլն:

Յարադիրը կրնայ որոշիչ-որոշեալ, յատկացուցիչ յատկացեալ կապակցութիւն մը կամ կապական դարձուածք մը

¹¹ Խօսակցականին մէջ *վազ գալ, վազ անցնիլ* (հրաժարիլ) բայերուն յարադիրը կապ չունի *վազել* բայի արմատին հետ՝ *վազք*. թրքերէն է:

ըլլալ, ինչպէս՝ երկար ձեռք ըլլալ, կարճ ոտք ունենալ, իրարու միս ուտել, ականջի ետեւ նետել, միտքին մէջ դնել, իրարու վրայ ելլել, ոտքի տակ առնել կամ փոխանուանաբար գործածուած զուգադրական բայ մը, ինչպէս՝ առաւ փախաւ դառնալ, ըսող խօսող ըլլալ, ըսի ըսաւ ընել եւ այլն:

Գոյականները մեծ մասով անյօդ յարադիրներ կ'ըլլան՝ տուն-տեղ ըլլալ, սեղան բանալ, ականջ դնել, աչք գոցել, լեզու հյնալ: Յօդը յարադիրին կու տայ բառային անկախութիւն, անով կապակցութեան բաղադրիչները կ'ըմբռնուին իբրեւ նախադասութեան անկախ անդամներ եւ ոչ իբրեւ յարադրաւոր բայ: Հմմտ.՝ աչքը գոցեց եւ աչք գոցել, ձեռքը բանալ եւ ձեռք բանալ, գլուխը դնել եւ գլուխ դնել: Չեն բացառուած յօդով յարադիրները, ինչպէս՝ միտքը դրաւ, հոգին ելաւ, փորը քշեց, լեզուն կապուեցաւ եւ այլն: Միայն խօսքի շղթային մէջ կարելի է հասկնալ, թէ կապակցութեան անդամները նախադասութեան անդամներն են, թէ յարադրութեան բաղադրիչներ:

Կան տարբեր հոլովածելերով յարադիրներ՝ գլխուն զարնել, սրտին մեծնալ, աչքէ ելլել, ձեռքէ ելլել, միտքէն անցընել, աչքով ուտել եւ այլն:

Ըստ իմաստի՝ յարադրաւոր բայերը կ'ըլլան.

– Յարադրութիւններ, ուր յարադիրն ու բայը միասնաբար ուղղակի իմաստ մը կ'արտայայտեն, ունին նկարագրական բնոյթ, ինչպէս՝ դուրս գալ, դուրս բերել, առջեւ գալ, առջեւ հրել, գործ ընել, երդում ընել, խաղ ընել, ճամբայ երթալ, քուն մտնել եւ այլն: Այս յարադրութիւնները թարգմանելի են եւ նոյնիսկ փոխարինելի՝ համարժէք համադրական բայերով. երդում ընել՝ երդմնալ, փորձ ընել՝ փորձել, գոհ մնալ՝ գոհանալ, գովք հիւսել՝ գովաբանել, գինով դառնալ՝ գինովնալ, համով դառնալ՝ համովնալ եւ այլն:

– Յարադրութիւններ, ուր երկու բաղադրիչներէն մէկը կամ երկուքն ալ դուրս գալով իրենց իրական իմաստներէն ձեռք կը բերեն բոլորովին նոր իմաստ մը, բառացի չեն հասկցուիր, թարգմանելի չեն, այսինքն՝ միայն փոխաբերաբար

կը հասկցուին: Այս տեսակ յարադրութիւնները կը կոչուին **դարձուածքներ**: Օրինակ՝ *ծովեր կտրել* (ծովերէ անդին, հեռաւոր երկիր երթալ), *արիւն քրտնիլ* (տանջալից աշխատանք տանիլ), *գլուխ արդուկել* (խօսքով ձանձրացնել), *աչք մտնել* (հաւնուիլ, ընդունելի ըլլալ), *սեղան բանալ* (կերուխումի հրաւիրել), *մարդ ըլլալ* (մարդկային բարձր արժանիքներով օժտուիլ), *աչք հանել* (զարմացնել), *ձեռք տալ* (օգնել), *ոտքի տակ մնալ* (զոհուիլ): Հայերէնի մէջ շատ են մանաւանդ մարմնի տարբեր անդամներու յարադրութեամբ կազմութիւնները՝ *ականջ, քիթ, բերան, ակոյայ, աչք, յօնք, լեզու, գլուխ, մազ, կուրծք, փոր, սիրտ, ոտք, ծունկ* եւ այլն, ինչպէս՝ *ականջ դնել, ականջի ետեւ նետել, ակոյայ ցոյց տալ, աչքէ անցընել, աչք դնել, աչք նետել, աչքէ իյնալ, աչք մտնել, բերան բանալ, բերան ծռել, բերանէն ջուր վազել, բերանէն կախուիլ, գլուխ բերել, գլուխ ծռել, գլուխ հանել, գլուխ տանիլ, գլխուն զարնել, գլխէ ելլել, լեզու ելլել, լեզու իյնալ, լեզու հանել, լեզու կտրիլ, կոնակ դարձնել, կոնակին կենալ, ծունկի գալ, ծունկի բերել, մազ մնալ, յօնք կիտել, ոռ շարժել, ոտքի վրայ կենալ, ուսէ նետել, քիթ-բերան մէկ ընել, փոր շինել, փորը քշել, ոտք դնել* եւ այլն:

Յարադրաւոր բայերը կրնան պատճառականի վերածուիլ տալ-ով՝ *աչքով ուտել տալ, լեզու հանել տալ, երես առնել տալ*, կամ համադրաբար՝ *ոտքի կենալ՝ ոտքի կեցնել, աչք դպնալ՝ աչք դպցնել*, կրաւորականի վերածուիլ՝ *գլուխ բերել՝ գլուխ բերուիլ, ականջի ետեւ նետել՝ ականջի ետեւ նետուիլ*:

Ներգործական բայերով յարադրութիւնները մեծ մասով չէզոք բայի իմաստ ձեռք կը բերեն՝ *ականջ դնել, ակոյայ ցոյց տալ, գլուխ ծեծել, արիւն թափել, երես առնել*, իսկ ուրիշ տեղ կը մնան նոյնը՝ *ականջի ետեւ նետել, աչքէ անցընել, գլուխ բերել, գլուխ հանել, աչքով ուտել*:

5.17.– Դիմաւոր եւ անդէմ բայեր, խոնարհում

Բայերը երկու խումբ ձեւերու մէջ կը մտնեն՝ դիմաւոր բայեր եւ անդէմ բայեր կամ դերբայներ:

Դիմաւոր բայերը կ'արտայայտեն քերականական չորս կարգեր՝ եղանակ, ժամանակ, թիւ եւ դէմք:

Բայերու դիմաւոր ձեւերու փոփոխութիւնը կը կոչուի խոնարհում:

Խոնարհումը կ'ըլլայ երկու կերպով՝ հաստատական եւ ժխտական՝ *կը գրեմ-չեմ գրեր, գրեցի-չգրեցի, գրէ-մի՛ գրեր*:

Արեւմտահայերէնի խոնարհումը ունի երեք եղանակ՝ սահմանական, ըղծական եւ հրամայական¹²:

Բայական ժամանակները կ'ըլլան պարզ, բաղադրեալ եւ երկրորդական բաղադրեալ ժամանակներ:

Պարզ ժամանակներուն մէջ բայը կը ձեւափոխուի ժամանակ, թիւ ու դէմք արտայայտող վերջաւորութիւններով ու նախադաս ցուցիչներով. սահմանական եղանակը ունի հինգ պարզ ժամանակներ՝ ներկայ, անցեալ անկատար, կատարեալ անցեալ, բացարձակ ապառնի, անկատար ապառնի. *կը գրեմ, կը գրէի, գրեցիր, պիտի գրեմ, պիտի գրէի*. ըղծական եղանակը ունի ներկայ եւ անկատար ժամանակներ՝ *գրեմ, գրէի*, հրամայական եղանակը միայն ներկայ ժամանակ՝ *գրէ՛*:

Բաղադրեալ ժամանակները կը կազմուին յարակատար, վաղակատար, եւ ելու/ալու ապառնի դերբայներուն հետ էական բայի ներկայ եւ անկատար ձեւերու գործածութեամբ՝ *տեսած եմ, տեսեր եմ, տեսնելու եմ. տեսած էի, տեսեր էի, տեսնելու էի*¹³: Ներկայ եւ անկատար վեց բաղադրեալ ժամանակ-

¹² Հին քերականութիւնները ըղծական եղանակի կողքին կու տային ստորադասական մը եւս: Ստորադասական եւ ըղծական բայական ժամանակները նոյնն են ձեւով եւ կատարելի գործողութեամբ. մէկը հանդէս կու գայ ստորադաս նախադասութեան մէջ ու ցոյց կու տայ պայմանական կատարելի գործողութիւն մը՝ *կը հանդիպինք, եթէ ժամանակ գպնեմ*: Ըղծականը հանդէս կու գայ անկախ նախադասութեան մէջ, որ կ'արտայայտէ պարզապէս փափաքելի գործողութիւն մը, մաղթանք մը: Ըղծական երանգի խօսքին մէջ Գ. դէմքին կ'ընկերանայ թող կամ երանի, որ վերաբերական բառեր են եւ ոչ թէ եղանակի ցուցիչ՝ *երանի երթայ, թող երթայ, երթայ*:

Դերբայներու կամ անդէմ բայերու շարքը կը ներկայացուէր իբրեւ անորոշ եղանակ:

¹³ *Ելու/ալու* ապառնի դերբայի երկու ժամանակները սահմանական եղանակին մէջ կը կոչուին բաղադրեալ ապառնի ժամանակներ կամ Բ. ապառնի, իսկ ուրիշներ այդ երկու ժամանակները համարած են առանձին եղանակ՝ հարկադրական եղանակ. *գրելու եմ...գրելու էի*:

ները կը մտնեն սահմանական եղանակին մէջ: Բայի ժխտական խոնարհումին մէջ կայ ժխտական դերբային հետ էական բայի ներկայ եւ անկատար ձեւերու բաղադրութեամբ կազմուած երկու բաղադրեալ ժամանակներ եւս՝ *կը տեսնեմ>չեմ տեսներ, կը տեսնէի>չէի տեսներ*:

Երկրորդական բաղադրեալ ժամանակները կը կազմուին յարակատար եւ *ելու/ալու* ապառնի դերբայներուն հետ *ըլլալ* բայի դիմաւոր բոլոր ձեւերու յարադրութեամբ՝ *գրած կ'ըլլամ... գրելու կ'ըլլամ*:

Դիմաւոր բայերուն յատուկ է գործող անծի դէմքի արտայայտութիւնը՝ խօսողը, խօսակիցը եւ երրորդ անձը, որ կ'արտայայտուին անձնական դերանունի երեք դէմքերով՝ *կը գրեմ (Ա. դէմք՝ ես), կը գրես (Բ. դէմք՝ դուն), կը գրէ (Գ. դէմք՝ ան)*:

Դիմաւոր բայերուն յատուկ է նաեւ թիւի կարգը, որ կ'արտայայտուի իւրաքանչիւր դէմքի եզակի եւ յոգնակի ձեւերով՝ *կը գրեմ (Ա. դէմք, եզակի), կը գրենք (Ա. դէմք, յոգնակի)*:

5.18.– Պարզ ժամանակներու խոնարհումը

ա) Ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներու խոնարհումը

Բայի խոնարհումի ներկայ ժամանակներու վերջաւորութիւններն են.

Ել՝ վազել – *եմ, ես, է. ենք, էք, են*.

Իլ՝ խօսիլ – *իմ, իս, ի. ինք, իք, ին*.

Ալ՝ կարդալ – *ամ, աս, այ. անք, արք, ան*:

Բայի խոնարհումի անցեալ անկատար ժամանակներու վերջաւորութիւններն են.

Ել՝ վազել – *էի, էիր, էր. էինք, էիք, էին*.

Իլ՝ խօսիլ – *էի, էիր, էր. էինք, էիք, էին*.

Ալ՝ կարդալ – *այի, այիր, ար. այինք. այիք, ային*:

Այսպէս կը խոնարհուին

1) Սահմանական եղանակի ներկայ ժամանակը

կը վազեմ, -ես, -է. -ենք, -էք, -են.

կը խօսիմ, -իս, -ի. -ինք, -իք, -ին.

կը կարդամ, -աս, -այ. -անք, -աք, -ան:

2) Սահմանական եղանակի անցեալ անկատար ժամանակը

կը վազէի, -էիր, -էր. -էինք, -էիք, -էին.

կը խօսէի, -էիր, -էր. -էինք, -էիք, -էին.

կը կարդայի, -այիր, -ար. -այինք, -այիք, -ային:

Նկատի ունենալ, որ

– Սահմանական եղանակի ներկայ եւ անկատար ժամանակներու կը ցուցիչը բաղաձայնով սկսող բայերէն առաջ անջատ կը գրուի՝ կը վազեմ, կը վազես, կը վազէ, իսկ ձայնաւորով սկսող բայերուն ուղղակի կը կցուի՝ զեղջուող ը-ի փոխան ապաթարց առնելով՝ կ'աղամ, կ'աղաս, կ'աղայ, կ'երգեմ, կ'իյնամ, կ'ըսեմ, կ'ուզեմ, կ'օրօրեմ:

– Սուղ ը-ով սկսող բայերէն առաջ (զբաղիլ, սպասել, սփռփել, զգալ, սկսիլ, սքանչանալ, ստանալ, սթափիլ, շտապել եւ այլն) կը մասնիկը դարձեալ անջատ կը դրուի, թէւ միասին կ'արտասանուի՝ կը սպասեմ (կըս-պասեմ), կը սպասէի (կըս-պասէի): Մերժել կ'սպասեմ, կսպասեմ ձեւերը:

– Գալ, լալ, տալ միավանկ բայերը կը մասնիկին փոխարէն կ'առնեն կու՝ կու գամ, կու գայի: Ոմանք կու մասնիկը կը կցեն բային՝ կուգամ, կուգայի: Երբ սովորութիւն է կը մասնիկը անջատ գրել՝ կու մասնիկին կցումը խախտում կը նկատուի: Մերժել:

– Սահմանական եղանակի բայական ներկայ ձեւերը մենիմաստ չեն. ունին. ա) բացարձակ ներկայի իմաստ՝ Աշակերտը դպրոց կ'երթայ. բ) շարունակական ներկայի իմաստ,

այն որ խօսքի պահուն կը կատարուի. ատոր համար արեւմտահայ խօսակցականը կը գործածէ *կոր* ձեւոյթը՝ *Աշակերտը դպրոց կ'երթայ կոր*. գրականին կողմէ խստօրէն մերժուած ձեւ է. գ) ապառնի իմաստ՝ *Վաղը դպրոց կ'երթաս*. դ) նոյնիսկ հրամայական երանգ՝ *Անպայման դպրոց կ'երթաս*. Առաջին երկու իմաստները յատուկ են նաեւ անցեալ կատարեալի ձեւերուն՝ *Աշակերտը դպրոց կ'երթար, Աշակերտը դպրոց կ'երթար (կոր)*:

3) Սահմանական եղանակի բացարձակ ապառնի ժամանակը

պիտի վազեմ, -ես, -է. -ենք, -էք, -են.

պիտի խօսիմ, -իս, -ի. -ինք, -իք, -ին.

պիտի կարդամ, -աս, -այ. -անք, -աք, -ան:

4) Սահմանական եղանակի անկատար ապառնի ժամանակը

պիտի վազէի, -էիր, -էր. -էինք, -էիք, -էին.

պիտի խօսէի, -էիր, -էր. -էինք, -էիք, -էին.

պիտի կարդայի, -այիր, -ար. -այինք, -այիք, -ային:

Սահմանական եղանակի բացարձակ ապառնի եւ անկատար ժամանակները կը խոնարհուին պիտի ցուցիչով՝ *պիտի վազեմ, պիտի վազէի*: Խօսքի շղթային մէջ կրնայ պատահիլ *պիտի* մասնիկին առանձին գործածութիւնը: *Պիտի երթամ* հարցումին պատասխանը կրնայ ըլլալ միայն *Պիտի...*: Երբեմն ցուցիչը կրնայ դրուիլ յետադաս *երթամ պիտի*՝ հարկադրական եղանակ մը հաղորդելով բային. *Եւ դեռ երկար չըմեռնիս պիտի եւ տունդ մոխիր / Եղած՝ ծածկէ պիտի քեզ, երբեմնի տունդ եռուզեռ (ՎԹ)*: Հիները կը գործածէին նաեւ կրճատ՝ *պիտի* ձեւը. *Այնպէս պիտի ծեծենք, որ յիշեն հոր հարսանիք*: Ասոնք ոճական յատկութիւն ունին, օրինաչափական չեն: Անտեղի ու տգեղ կը հնչեն, եթէ վարպետութեամբ կատարուած չըլլան:

5) Ըղծական-ստորադասական¹⁴ եղանակի ներկայ ժամանակը

վազեմ, -ես, -է. -ենք, -էք, -են.

խօսիմ, -իս, -ի. -ինք. -իք, -ին.

կարդամ, -աս, -այ. -անք, -աք, -ան:

6) Ըղծական-ստորադասական եղանակի անկատար ժամանակը

վազէի, -էիր, -էր. -էինք, -էիք, -էին.

խօսէի, -էիր, -էր. -էինք, -էիք, -էին.

կարդայի, -այիր, -ար. -այինք, -այիք, -ային:

Նկատի ունենալ, որ այս բայաձևերը հանդէս կու գան երկու պարագայի. ա) ստորադաս նախադասութեան մէջ ու ցոյց կու տան պայմանականօրէն կատարելի գործողութիւն մը՝ *կը հանդիպիմ, եթէ երթամ*. բ) անկախ նախադասութեան մը մէջ արտայայտելով պարզապէս փափաքելի գործողութիւն մը՝ **երթամ** *դեսնել զիմ Կիլիկիա*: Ձեռով նոյնն են, միայն երկրորդ պարագային բային կրնան ընկերանալ թող կամ երանի բառերը. *Թող պալապոներ վայելեն մեծահարուստն ու արքան (ՄԻ): Երանի օր մը / Քանդէի միտքս խճճող / Ժամանակի թաւալումին հետ կարծրացած հանգոյցները / Վանէի ինձմէ (ԹՏԳ):*

– 2-ով սոսկածանցաւոր բայերէն *փախշիլ, թռշիլ* ներկայ եւ անկատար ժամանակներու մէջ կրնան խոնարհուիլ նաեւ առանց չ սոսկածանցի՝ *կը փախշիմ/կը փախիմ, կը փախշէի/կը փախէի*:

բ) Անցեալ կատարեալ ժամանակի հիմքերը եւ վերջաւորութիւնները

Անցեալ կատարեալ ժամանակի խոնարհման հիմքը կ'ըլլայ երկու տեսակ.

1) **Ցոյական հիմք**, որ կ'ըլլայ *եց, աց, ուց, ց*:

եց հիմքով կը խոնարհուին.

¹⁴ Ըստ ոմանց միայն ըղծական անուանումն ալ բաւարար է:

– Ել եւ իլ լծորդութիւններու պարզ բայերը. վազել՝ վազեց-ի, խօսիլ՝ խօսեց-այ:

– Կրաւորական բայերը. սիրուիլ՝ սիրուեց-այ:

– Ալ խումբի եց սոսկածանցաւոր բայերը. մօտենալ՝ մօտեց-այ:

Աց հիմքով կը խոնարհուին.

– Ալ խումբի պարզ եւ ան սոսկածանցաւոր բայերը. լողալ՝ լողաց-ի, հեռանալ՝ հեռաց-այ:

Խաղայ, խաղար, խաղաւ տարածուած սխալախօսութիւններ են. գործածել՝ խաղացի, խաղացիր, խաղաց:

– Յ հիմքով կը խոնարհուին ալ խումբի ն սոսկածանցաւոր բայերը. ճանչնալ՝ ճանչց-այ, գիտնալ՝ գիտց-այ:

Ուց հիմքով կը խոնարհուին.

– Պատճառական բայերը. քալեցնել՝ քալեց-ուց-ի: Նոյնպէս՝ դարձնել, հարցնել, անցընել եւ ցուցնել ոչ պատճառական բայերը:

2) Արմատական հիմք

Ել եւ իլ խումբերու սոսկածանցաւոր բայերը. մտնել՝ մտայ, ելլել՝ ել-այ, հասնիլ՝ հաս-այ, թռչիլ՝ թռայ:

Անցեալ կատարեալի վերջաւորութիւնները երկու խումբ են.

1) Ի, իր, -. ինք, իք, ին վերջաւորութիւններով կը խոնարհուին ել, ալ եւ ուլ լծորդութիւններու պարզ բայերը եւ պատճառականները՝ ցոյական հիմքի վրայ.

Վազել՝ վազեցի, վազեցիր, վազեց. վազեցինք, վազեցիք, վազեցին.

Լողալ՝ լողացի, լողացիր, լողաց. լողացինք, լողացիք, լողացին.

Քալեցնել՝ քալեցուցի, քալեցուցիր, քալեցուց. քալեցուցինք, քալեցուցիք, քալեցուցին:

2) Այ, ար, աւ. անք, աք, ան վերջաւորութիւններով կը խոնարհուին ել, իլ, ալ սոսկածանցաւոր, իլ պարզ ու կրաւորական բայերը.

Մտնել՝ մտայ, մտար, մտաւ. մտանք, մտաք, մտան.
 Հասնիլ՝ հասայ, հասար, հասաւ. հասանք, հասաք, հասան.

Ճանչնալ՝ ճանչցայ, ճանչցար, ճանչցաւ. ճանչցանք, ճանչցաք, ճանչցան.

Խօսիլ՝ խօսեցայ, խօսեցար, խօսեցաւ. խօսեցանք, խօսեցաք, խօսեցան.

Սիրուիլ՝ սիրուեցայ, սիրուեցար, սիրուեցաւ. սիրուեցանք, սիրուեցաք, սիրուեցան:

գ) Հրամայականը

Բայական բոլոր խումբերու հրամայականի տիպար խոնարհումը.

Ել պարզ	վազել՝	վազէ՛	վազեցէ՛ք
Իլ պարզ	խօսիլ՝	խօսի՛ր (է՛)	խօսեցէ՛ք
Ալ պարզ	լողալ՝	լողա՛մ	լողացէ՛ք
Կրատրական	սիրուիլ՝	սիրուի՛ր (է՛)	սիրուեցէ՛ք
Ել սոսկաձանցաւոր	մտնել՝	մտի՛ր	մտէ՛ք
Իլ սոսկաձանցաւոր	հասնիլ՝	հասի՛ր	հասէ՛ք
	փախչիլ՝	փախի՛ր (է՛)	փախէ՛ք
Ալ սոսկաձանցաւոր	մօտենալ՝	մօտեցի՛ր	մօտեցէ՛ք
	հեռանալ՝	հեռացի՛ր	հեռացէ՛ք
	ճանչնալ՝	ճանչցի՛ր	ճանչցէ՛ք
Պատճառական	քալեցնել՝	քալեցո՛ւր	քալեցուցէ՛ք

Նկատի ունենալ, որ

– *խաղալ* բայի հրամայականը կը լսուի *խաղցի՛ր, խաղցէ՛ք. մերժել եւ ըսել՝ խաղա՛մ, խաղացէ՛ք:*

– *Մնալ* բայի հրամայականը կը լսուի *մնացիր*. մերժել եւ ըսել՝ *մնա՛*:

– *Իլ* լծորդութեան պարզ, կրաւորական եւ չ-ով սոսկածանցաւոր բայերու եզակի հրամայականին համար մեր դասագիրքերը ճիգ կը թափեն ընդհանրացնելու արեւմտահայ կարգ մը խօսուածքներու մէջ ձեւ ստացած է վերջաւորութիւնը, փակագիծի մէջ նշելով *իլ* խումբի յատուկ (գրաբարէն եկող) *իր* վերջաւորութիւնը եւս. այսպէս՝

Պարզ կանոնաւոր բայեր
խօսիլ՝ *խօսէ/խօսիր*, սորվիլ՝ *սորվէ/սորվիր*

Պարզ զարտուղի բայեր
նստիլ՝ *նստէ/նստիր*, սկսիլ՝ *սկսէ/սկսիր*

Չ-ով սոսկածանցաւորներ
թռչիլ՝ *թռչէ/թռչիր*, փախչիլ՝ *փախչէ/փախչիր*

Ուիլ-ով կրաւորականներ
սիրուիլ՝ *սիրուէ/սիրուիր*, տեսնուիլ՝ *տեսնուէ/տեսնուիր*:

Հրամայական եզակիին է վերջաւորութիւնը չընդհանրացաւ. *իր* վերջաւորութիւնը տիրական կը մնայ ու զայն պահելն ալ նպատակայարմար է, որովհետեւ՝

– *ի* խոնարհիչը չի փոխուիր, ինչպէս միւս բայական խումբերու պարագային եւս.– *խօսիլ՝ խօսիր՝ ի, վազել՝ վազէ՝ է, լողալ՝ լողա՛ ա*: Հոս խօսքին մէջ իր-ը ինքնեկ կերպով հանդէս կու գայ, ինչպէս է եւ *ա* վերջաւորութիւնները *ել* եւ *ալ* լծորդութեանց պարզ բայերու պարագային եւ իմաստային ոչ մէկ շփոթ կը ստեղծէ:

– Մինչ է-ն նաեւ լեզուական շփոթ կը ստեղծէ լծորդութեան փոփոխութեամբ կազմուած բայերու հրամայականին մէջ՝ *մարել-մարիլ, վառել-վառիլ, ծռել-ծռիլ* եւ այլն, որոնք այդ օրէնքով կը նոյնանան հրամայական եզակիին մէջ՝ *մարէ, վառէ, ծռէ*, ու կ'ըմբռնուին իբրեւ ներգործական բայեր, մինչդեռ *իլ* խումբի բայերուն բնորոշ *իր* վերջաւորութիւնը պահելու պարագային յստակ զանազանութիւն կը մտնէ բայական սեռերուն մէջ՝ *մարէ-մարիր, վառէ-վառիր, ծռէ-ծռիր*: Հոս ներ-

գործական ու չէզոք ձեւերը յստակօրէն կը տարբերին:

Սարգիս, կրակը մարէ՛ (ներգործական):

Կրակ, մարի՛ր այլեւս (չէզոք):

Դուն կրակը վառէ՛ (ներգործական):

Կրակ, վառի՛ր այլեւս (չէզոք):

Սարգիս, մէջքդ ծռէ՛ (ներգործական):

Սարգիս, քիչ մը ծռի՛ր (չէզոք):

– Իր վերջաւորութեան ոլորտը ընդարձակ է ու կը ներգրաւ նաեւ բոլոր սոսկաձանցաւոր բայերը. *մօտենալ՝ մօտեցի՛ր, հեռանալ՝ հեռացի՛ր, ճանչնալ՝ ճանչցի՛ր*: Սա ալ ցոյց կու տայ, որ իր-ը լիովին հարազատ է արեւմտահայերէնին եւ անոր մէջ արտաքին ազդեցութիւն փնտռելը անտեղի է:

5.19.– Դերբայները եւ բաղադրեալ ժամանակները

Դերբայները բայի անդէմ ձեւեր են:

Հայերէնի դերբայներն են.

ա) Աներեւոյթ կամ անորոշ դերբայ

Կը կազմուի *ել, իլ* եւ *ալ* վերջաւորութիւններով.

պարզ բայեր

վազել

խօսիլ

կարդալ

սոսկաձանցաւոր

բայեր

տեսնել

մեռնիլ/փախչիլ

հեռանալ

Աներեւոյթը բայանունն է, ունի անկախ գործածութիւն, հանդէս կու գայ գոյականի դերով ու կը հոլովուի.

Ուղղական

վազել

խօսիլ

կարդալ

Հայցական

վազել

խօսիլ

կարդալ

Սեռական

վազելու

խօսելու

կարդալու

Տրական

վազելու

խօսելու

կարդալու

Բացառական

վազելէ

խօսելէ

կարդալէ

Գործիական

վազելով

խօսելով

կարդալով

Իբրեւ գոյականաբար գործածուող բառ՝ կը ստանայ յօդու հանդէս կու գայ գոյականի շարահիսակական հիմնական պաշտօններով.

Քալելը մարզածեւ է նաեւ: – Ենթակայ, ուղղական հոլով:

Դուն քալել կը սիրես: – Ուղիղ խնդիր, հայցական հոլով:

Նպատակս քիչ մը քալելն է: – Ստորոգելի, ուղղական հոլով:

Քալելու տեղ չկայ: – Որոշիչ, սեռական հոլով:

Քալելուն նայէ՛: – Յանգման անուղղակի խնդիր, տրական հոլով:

Քալելու կ'երթամ: – Նպատակի պարագայ, տրական հոլով:

Քալելէն յոգնեցայ: – Պատճառի պարագայ, բացառական հոլով:

Քալելով կ'երթամ : – Ձեւի պարագայ, գործիական հոլով:

Չունի յոգնակի թիւ, թէւ ոճական խօսքի մէջ երբեմն կ'ըսենք՝ **քալելներ, կարողաներ, ուտել-խմելներ: Եթէ խանութի տէր մնացած ըլլայի, ինչպէս այս երթալ-գալերը պիտի իրագործէի:**

Անորոշ դերբայը կամ աներեւոյթը նոր լեզուին մէջ նաեւ կրնայ հանդէս գալ իբրեւ բառակազմական բաղադրիչ՝ նորանոր ածանցաւոր ու բարդ բառեր կազմելու դերով: Այսպէս՝ գրաբարի ի-ով վերջացող ապառնի դերբայը նոր լեզուին մէջ կը գիտակցուի իբրեւ գերազանցապէս ածականակերտ ածանց՝ **այպանելի, արհամարհելի, գովելի, գնահատելի, զարմանալի, ծափահարելի, կանխատեսելի, յարգելի, ողջունելի, սիրելի, տեսանելի** եւ այլն: Կրնայ գոյականներ ալ կազմել՝ **ածելի, գործելի, բանալի: Զմելի** բառը փոխառութիւն է ու կապ չունի այս շարքի բառերուն հետ:

Ութին ածանցը նոյնպէս որոշ կենսունակութիւն կը ցուցաբերէ անորոշ դերբայով նոր բառեր կազմելու տեսակէտէն՝ **առաքելութիւն, արելութիւն, եղելութիւն, ընդունելութիւն, կատարելութիւն, պատկանելութիւն** եւ այլն:

Արեւմտահայերէնին հարազատ են *կերպ* բաղադրիչով բարդութիւնները՝ *սարելակերպ, գործելակերպ, վարուելակերպ, մտածելակերպ*, նոյնքան տարածում ունին նաեւ *ծել եւ ոճ* բաղադրիչներով կազմութիւնները՝ *գրելածել, գրելաոճ, խօսելածել, խօսելաոճ*:

Կան այլ բաղադրիչներով բարդութիւններ եւս՝ *հեծելանիւ, հեծելարշաւ, նստելավարձ* եւ այլն:

Աներեւոյթին սեռական-տրական ու բացառական հոլովները նաեւ նկատուած են առանձին դերբայներ. սեռական-տրականը՝ ապառնի դերբայ, իսկ բացառականը՝ ընթացակցական դերբայ: Ասոնց դերբայական արժէքին շուրջ խնդիր կայ:

բ) Ելու/ալու ապառնի դերբայի խնդիրը

Բոլոր քերականներն ալ անորոշ դերբայի սեռական-տրական հոլովին կու տան երկու կիրառութիւն՝ գոյականական եւ բայական:

Անորոշ դերբայի սեռական հոլովը իբրեւ գոյականի լրացում կ'ունենայ որոշիչի պաշտօն՝ *խմելու ջուր, լուալու լաթ, լուծելու խնդիր*, իսկ բային հետ՝ տրական հոլովով կը գործածուի քանի մը պաշտօններով.

Խնդիրը հասաւ գինի խմելուն: Գրելուդ նայիր: – Յանգման անուղղակի խնդիր, տրական հոլով:

Տղան լողալու կ'երթայ: Զաւակը փնտրելու ելաւ: – Նպատակի պարագայ:

Ամեն մէկ նայելուն նոր խանդաղապանք մը կը զգար: Ժամանակի պարագայ, տրական հոլով:

Լայնօրէն կը գործածուի կապերու հետ՝ *Տեղ հասնելու համար կ'աճապարէի: Հասնելուդ պէս հեռաձայնէ: Առանց դժգոհելու սպասէ:*

Աներեւոյթին սեռական-տրական հոլովածելը նաեւ կը նկատուի *ելու/ալու* վերջատրոութիւնը ունեցող ապառնի դերբայ, որ կը մասնակցի բաղադրեալ ժամանակներու կազմութեան:

Ներկայ

գրելու եմ, գրելու ես, գրելու է.

գրելու ենք, գրելու էք, գրելու են:

Անկատար անցեալ

գրելու էի, գրելու էիր, գրելու էր.

գրելու էինք, գրելու էիք, գրելու էին:

Տարբեր քերականներ այս բաղադրեալ բայական ձեւերը կը սահմանեն տարբեր ձեւով.

ա) Իբրեւ Բ. ապառնի կամ բաղադրեալ ապառնի՝ առաջինը վերապահելով *պիտի* ցուցիչով կազմուած պարզ ձեւերուն. այսպէս՝

պիտի գրեմ.... բացարձակ ապառնի

գրելու եմ Բ. ապառնի ներկայ կամ բաղադրեալ ապառնի

պիտի գրէի ապառնի անկատար

գրելու էի.... Բ. ապառնի անկատար կամ բաղադրեալ ապառնի անկատար¹⁵:

բ) Ուրիշներ այս ձեւերը դուրս կը դնեն սահմանական եղանակէն ու կ'առանձնացնեն իբրեւ հարկադրական եղանակի ներկայ եւ անկատար անցեալ ժամանակներ: Պարզ է, որ *պիտի գրեմ* եւ *գրելու եմ* ձեւերուն մէջ ապառնի ժամանակը առկայ է, բայց Բ. ապառնի կամ բաղադրեալ ապառնի կոչուածը ունի նաեւ հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելի գործողութեան մը իմաստը, որ հոմանիշ է «Պէտք է երթամ», «Պէտք է երթայի» գաղափարներուն: Բացարձակ ապառնիէն (պիտի) ունեցած իր այս իմաստային տարբերութիւնն ալ կը բաւէ, որ ան առանձնացուէր իբրեւ հարկադրական եղանակ:

Արեւելահայերէնի մէջ հակառակ պատկերը կը գործէ.

Պիտի գրեմ – արեւելահայերէնի մէջ հարկադրաբար

¹⁵ Ս. Գ. Աբրահամեան, Բ. Յ. Վերդեան, Վ. Ա. Քոսեան, *Հայերէն Լեզուի Դասագիրք*, Բ. հրատարակութիւն, Երեւան, 1968, էջ 146 եւ 183. Կարօ Առաքելեան, *Արդի Հայերէնի Քերականութիւն*, Ա. գիրք, Պէյրութ, 1997, էջ 183 եւ 203:

կատարելի գործողութիւն է՝ հարկադրական, արեւմտահայերէնի մէջ՝ ստուգապէս կատարելի գործողութիւն՝ բացարձակ ապառնի:

Գրելու եմ – արեւելահայերէնի մէջ ստուգապէս կատարելի գործողութիւն է՝ բացարձակ ապառնի, արեւմտահայերէնի մէջ՝ հարկադրաբար կատարելի գործողութիւն, հարկադրական:

Արսէն Այտընեան կը գրէ. «Աներեւոյթին սեռականը թէ՛ բաղադրեալ ժամանակներ կը ձեռացնէ՝ *Տեսնելու եմ, ես, է եւ թէ՛ իբրեւ ածական կը գործածուի. այսպէս՝ վախնալու երազներ, բնակելու տուն, ուտուելու կերակուրներ*»¹⁶: Ուրիշ տեղ բաղադրեալ ժամանակներու կազմութեան մասին խօսելով կ'աւելցնէ. «Ոմանք ալ Աներեւոյթին հոլովուածէն (որ է դերբայ ապառնի)՝ *տեսնելու եմ. երթալու եմ*»¹⁷: Այտընեան ելու/ալու վերջաւորութեամբ այս ձեւը աներեւոյթին սեռականը համարելով հանդերձ կը նկատէ նաեւ ապառնի դերբայ եւ էական բային հետ անոր կապակցութիւնները կը համարէ բայական բաղադրեալ ժամանակներ, կը դնէ սահմանական եղանակի տակ ու կը կոչէ հարկադրական ներկայ եւ հարկադրական անկատար՝ *տեսնելու եմ, ես, է...տեսնելու էի, էիր, էր*¹⁸:

Այտընեանէն ետք քերականներէն անոնք, որ այս ձեւերը կը կոչեն Բ. ապառնի կամ բաղադրեալ ապառնի, կը նշեն ասոնց հարկադրական իմաստ ունենալը, իսկ վերջերս ոմանք առանձնացնելով այդ ձեւերը՝ կը կոչեն հարկադրական եղանակի ժամանակներ:

Արեւմտահայերէնի հին որակին մէջ այս ձեւերուն բայական իմաստը զօրաւոր կը զգացուի. *Այս հաշուով Փափագեան Ստեփան էֆենտին ալ տրապկելու է, վրան ալ քիչ մը լիմոն սխմելով Քարաքաշեանի քովը նեպելու է: Մոլութիւններ հա-*

¹⁶ Արսէն Այտընեան, *Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, յօդ. 265:

¹⁷ Նոյն տողը, յօդ. 244:

¹⁸ Նոյն տողը, յօդ. 245:

րուածելու պաշտօնը վարող թերթ մը առաւել խղճի արեանին ապահնելով **գրելու է՝** քան թէ քաղաքական արեանին (ՅՊ): Տեղ մը կարդացած **ըլլալու եմ** (ՎՇ): Կ'ուզեմ ըսել, թէ կերպով մը միշտ Հայաստանի մէջ **ըլլալու եմ** (ՎՎ):

Սակայն միշտ չէ, որ էական բային հետ գործածուող *ելու/ալու* ձեւը ունի դերբայական իմաստ: Այս ջուրը *խմելու* չէ նախադասութեան մէջ *խմելու* բառածելը կրնայ ունենալ կրկնակի իմաստ. մէկ՝ իբրեւ դերբայ, ուր նախադասութիւնը ձեռք կը բերէ *այդ ջուրը պէտք չէ խմել* միտքը, երկրորդ՝ իբրեւ որոշիչ, որ կը վերաբերի ջուրին՝ *խմելու ջուր*:

Ելու/ալու դերբայական ձեւով եւ էական բայով կազմուած բաղադրութիւնները արդի արեւմտահայերէնի մէջ նուազագոյն գործածութիւնը ունին ու լայնօրէն փոխարինուած են *պէտք է* միադիմի բային հետ բայի ըղծական եղանակի ձեւերուն յարադրութեամբ կազմուած ձեւով.

- | | | |
|---------------------|---|------------------------|
| Երթալու եմ | > | Պէտք է երթամ |
| Շէնքը հոն ըլլալու է | > | Շէնքը հոն պէտք է ըլլայ |
| Զինք տեսնելու եմ | > | Զինք պէտք է տեսնեմ |

Իսկ եթէ կը գործածենք *զինք տեսնելու եմ, շուտով հասնելու եմ, տուն երթալու եմ* եւ նման արտայայտութիւններ, ապա հոս *ելու/ալու* ձեւերը աւելի շատ ենթակային վերագրուող յատկանիշ ըլլալ կը թուին, քան թէ անոր կողմէ կատարելի գործողութիւն. հետեւաբար *ելու/ալու+էական* բայ կապակցութիւնները կը դիտուին իբրեւ բարդ ստորագիչ՝ անորոշ դերբայի սեռական հոլովի+էական բայի ստորոգելի եւ բայ կապակցութեամբ¹⁹ :

Ելու/ալու ձեւերուն վերագրուող ապառնի դերբայական գործածութեամբ կը կազմուին մեր քերականութեան մէջ

¹⁹ Նման երեւոյթ կը դիտուի նաեւ արեւելահայերէնի մէջ. տես Բագրատ Ներսիսեան, «Ժամանակի քերականական կարգը գրական արևելահայերենում», Հայագիտական հարցեր, թիւ 1 (13), Երեւան, 2018, էջ 195-206:

ընդունուած երկրորդական բաղադրեալ ժամանակներ եւս.
Հայրս այսօր դառնալու կ'ըլլայ: Խաղողը հասուննալու եղաւ:

գ) Ընթացակցական դերբայի խնդիրը

Արեւմտահայերէնի մէջ անորոշ դերբայի գործիական հոլովը լայնօրէն հանդէս կու գայ ձեւի պարագայի պաշտօնով. օրինակ՝ *Դերասանը Աբխաղոն աղային ծունկերուն փաթթութեամբ աղաչեց: Ակոսները կրճկելով հանեց բարկութեամբ ոսկի մը փռաւ: Դերասանն ալ ներում խնդրելով վար իջաւ եւ գնաց*²⁰: Ասիկա գրական լեզուի շարահիւսական անփոփոխ ու մնայուն վիճակներէն մէկն է: Ասոր կողքին կը հանդիպինք նաեւ անորոշ դերբայի բացառական հոլովի նոյնպիսի գործածութեան, այսինքն՝ ձեւի պարագայի պաշտօնով, որ գրականին անցած է խօսակցական լեզուէն: Անորոշ դերբայի բացառական հոլովի ձեւի պարագայի պաշտօնով գործածութիւնը, դերբայի գործիական հոլովի կողքին, յատկապէս նկատելի է արեւմտահայ արուեստագէտ սերունդի գրողներու, գլխատորաբար բանաստեղծներու գործերուն մէջ: Սիւսմանթոյի բանաստեղծութեան մէջ երկու ձեւերով ալ արտայայտուած ձեւի պարագայի յաճախադէպ գործածութիւնը անմիջապէս նկատելի կը դառնայ.

Ու գէթ անգամի մը համար՝ ինքնիրմէդ դուրս գահավիժելէն՝ / Եթէ կրնաս, մեզի հետ քալէ՛ (Ս):

Այստեղ **քալէ** ստորոգիչին հետ *համընթաց, զուգահեռ, ընթացակից* գործողութիւն մը կ'արտայայտէ *գահավիժելէն* բառը, որ *գահավիժիլ* անորոշ դերբայի բացառական հոլովածեւն է: Կը պատասխայանէ *ինչ ընելով {ընելէն} քալէ* կամ *ինչպէ՛ս քալէ* հարցումին: Ուրեմն՝ ձեւի պարագայ է:

*Մեր փրկութեանը համար
 Ա՛յնչափ այլասիրօրէն արհունելով անմահացաք (Ս):*

²⁰ Մէջբերումները՝ Յակոբ Պարոնեանէն. տե՛ս համահեղինակներ **Ս. Գ. Աբրահամեան, Բ. Յ. Վերդեան, Վ. Ա. Քոսեան**, *Հայերէն Լեզուի Դասագիրք*, երկրորդ հրատարակութիւն, Երեւան, 1968, էջ 405:

Այստեղ **անմահացաք** ստորոգիչին *համընթաց, զուգահեռ, ընթացակից* գործողություն մը կ'արտայայտէ *արհննելով* բառը, որ *արհննիլ* անորոշ դերբայի գործիական հոլովածեն է ու կը պատասխանէ *ինչ ըլլալով անմահացաք* կամ *ինչպէ՛ս անմահացաք* հարցումին: Ուրեմն՝ ձեւի պարագայ է:

Սիւսմանթոյի բանաստեղծութեան մէջ ձեւի պարագայի պաշտօնով անորոշ դերբայի այս երկու ձեւերը հաւասարապէս հանդէս կու գան: Տանք քանի մը օրինակներ եւս.

Բացառական հոլովով.

Ու անցաք (...)

*Ձեր ներսիդին մոլեգնաբար **փառապելէն** (Ս):*

*Որպէսզի, վերջապէս, Երագին երիվարները փոթորկանման / Մեր կամքին ձեռուրներէն դիւցազնաբար **վարուելէն՝** / Յաղթանակին կապարներուն վրայ **արձանանան...** (Ս):*

*Յանկարծ իրենց մերկ բազուկները դէպի մեզի **փարածելէն՝**(...)* / *Տարօրինակ երջանկութիւնով մը **երգեցին...** (Ս):*

Գործիական հոլովով.

*Ձեր աստուածացումը **օրհներգելով պիտի երիվարեն** (Ս):*

*Ես **երգելով կ'ուզեմ** մեռնիլ (Ս):*

*Կռունկները **կռնչելով** ինչպէս **անցան** հովերուն հեպ (Ս):*

*Ճերմակ գառնուկ մը, **մայելով**, իր կճղակները **կը կրծէր** (Ս):*

Շարադասական միեւնոյն պաշտօնը կատարող այս երկու ձեւերուն միջեւ իմաստաբանական տարբերութիւն մը գտնել դժուար է, բացի այն պարագայէն, որ գործիական հոլովը ցոյց կու տայ ստորոգիչին հետ կատարուող, իսկ բացառականը՝ անոր հետ սկսած գործողութիւն մը: Երկուքն ալ համընթաց ու զուգահեռ, այնքան որ միեւնոյն նախադասութեան մէջ իբրեւ ձեւի պարագայ անոնց համատեղ գործածութիւնը միայն ոճական առանձնայատկութիւն մը կը թելադրէ, ինչպէս կ'երեւի Սիւսմանթոյի հետեւեալ տողին մէջ, մէկը՝ գործիական, իսկ միւսը՝ բացառական հոլովներով.

Մոնչելով եւ լողալէն իր զաւակը փրկել կ'ուզէր:

Կամ Միսաք Մեծարենցի հետեւեալ քառատողին մէջ.

*Տենչանքներս, տարագնացիկ մեղուներ, / Ոսկի երիզ մը
բանալով / Ու զանակներ անծրեւելէն / Թռան գացին երամ-
երամ (ՄՄ):*

Սակայն բացառականով ձեւի պարագան գործածութեան սահմանափակումներ ունի. անով արտայայտուած ձեւի պարագաները կարելի է աներկբայօրէն արտայայտել գործիական հոլովով. *Ու անցաք՝ Ձեր ներսիդին մոլեգնաբար տառապելէն...* (տառապելով): *Յանկարծ իրենց մերկ բազուկները դէպի մեզի տարածելէն՝* (տարածելով) *տարօրինակ երջանկութիւնով մը երգեցին:* Բայց գործիական հոլովով արտայայտուած ձեւի պարագան կարելի չէ ամեն պարագայի փոխարինել բացառական հոլովով. *Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ եւ Ես երգելէն կ'ուզեմ մեռնիլ* բոլորովին տարբեր բաներ են. երգելով-ը ձեւի պարագայ է, իսկ երգելէն-ը կրնայ ըմբռնուիլ իբրեւ պատճառի պարագայ: Արեւմտահայերէնի մէջ անորոշ դերբայի բացառականի արտայայտած պատճառի պարագան սահմանափակումներ կը բերէ անոր ձեւի պարագայի դերով հանդէս գալու իրողութեան մէջ: Կայ երկրորդ պատճառ մը եւս. արեւմտահայ խօսակցական լեզուին մէջ ան լայնօրէն հանդէս կու գայ նաեւ տեղի պարագայի պաշտօնով. արդարեւ, *լողալէն տուն վերադարձայ* նախադասութիւնը չի նշանակեր *լողալով տուն վերադարձայ*. դերբայը չունի ստորոգիչին հետ համընթաց զարգացող գործողութեան իմաստ, այսինքն չունի ձեւի պարագայի դեր, այլ կը նշանակէ «լողալու փորձէն, լողալու տեղէն, լողաւազանէն», ճիշդ այնպէս, ինչպէս արեւելահայը պիտի ըսէր «լողալուց վերադարձայ»:

Սիւսմանթոյի պարագային, գործիական հոլովով անորոշ դերբայի կողքին, բացառական հոլովով ձեւի պարագայի այնքան առատ գործածութիւնը աւելի նուազ կ'երեւի իր ժամանակակիցներու գործերուն մէջ, օրինակ, Դանիէլ Վարուժանի, ուր գործիական ձեւը աւելի տիրական է՝ նոյնիսկ անոր

ժողովրդական շունչով գրուած բանաստեղծութիւններուն մէջ.

- Հունձք կը ժողվեմ մանգաղով,*
- *Լուսնակը եարս է, -*
Ակօս-ակօս ման գալով,
- *Սիրածս հարս է (ԴՎ):*
Սայլերը կ'երթան անդորրութեան մէջ
Աղաղակելով (ԴՎ):
Այս իրիկուն ձեզի կու գանք, սէր երգելով,
Սարի ճամբով (ԴՎ):

Վերջին երկու տողերը բանաստեղծը կրնար ըսել.
Այս իրիկուն ձեզի կու գանք, սէր երգելէն,
Սարի ճամբէն:

Միսաք Մեծարենցի եւ Մատթէոս Զարիֆեանի բանաստեղծութիւններուն մէջ բացառական հոլովածեւի գործածութիւնն է աւելի ակնբախ.

- Տենչանքներս, փարագնացիկ մեղուներ,*
Ոսկի երիզ մը բանալով
Ու զանակներ անձրեւելէն
Թռան գացին երամ-երամ,
Անցան գացին դարուղիէն
Կիսաթափանց մշուշներու ապրշում քօղքը պատրուելէն
Եւ հաճելէն մէջն արեւին ոսկեծաղիկ մտախտուղին (ՄՄ):
Բայց ես կ'երթամ գլգլալէն ու լալէն (ՄԶ):

Մինչ աւելի կը նուազի Վահան Թէքէեանի պարագային, ուր տիրական է գործիական հոլովի նոյնիմաստ գործածութիւնը.

- Քիչ մը գորով պաղապրելով պիտի գամ*
Օտար փողոց քով թափառիլ յարածամ... (ՎԹ):
Կը մտի սիրտդ ու կը դողդղամ
Խորհելով պայծառ արեւին անցեալ (ՎԹ):
Չսիրուելով սիրելէ...
Յոգնած, յոգնած եմ հիմա (ՎԹ):

Թէքէեանի վերջին մէջբերումին մէջ **սիրելի** անորոշ դերբայի բացառական հոլովը **յոզնած եմ** ստորոգիչին պատճառի պարագան է, իսկ **չսիրուելով** անորոշ դերբայի գործիական հոլովը կողմնակի ձեւի պարագան է **սիրուելի** դերբային:

Գրական լեզուին մէջ անորոշ դերբայի բացառական հոլովին ձեւի պարագայի պաշտօնով գործածութիւնը, գործիական սովորական ձեւի համեմատութեամբ, կը բացատրուի ոճական ու արտայայտչական հնարքի գործօններով: Անոր գործածութիւնը շատ ակնթիւնուազ է արձակ հեղինակային խօսքի մէջ, ինչպէս ցոյց կու տան Զոհրապի, Օշականի, Զապէլ Եսայանի, Յակոբ Մնձուրիի եւ այլոց գործերը:

Շահեկան է այստեղ յիշել, որ ձեւի պարագայի շարահիւսական պաշտօնով հանդէս կու գան նաեւ գոյականի գործիական եւ բացառական հոլովները եւ փոխարինելի չեն: Գործիականով՝ **Սիրով կ'ընկերանամ քեզի: Ներկաները միաձայնութեամբ որոշումի մը յանգած են: Հաճոյքով ընկերացայ անոր:** Բացառականով ձեւի պարագան կ'արտայայտուի տեղ ցոյց տուող բառերով կազմուած ընդհանրապէս դարձուածքային, ասոյթային խօսքերու մէջ. ունին փոխաբերական իմաստ. **Սօսկէն կը ճանչնամ զինք: Բարձրէն մի խօսիր հետս: Ես հեռուէն կը հետեւիմ ձեր խնդիրին: Քիթին տակէն բաներ մը մոթմոթալով տուն գնաց:** Այստեղ բացառական հոլովով դրուած բառերը տեղի պարագայ չեն, այլ գործողութեան կատարման ձեւը ցոյց կու տան: Նման գործածութիւն ունին նաեւ դերանունները. **Ես ինձմէ (ինքնաբերաբար) ելայ գացի: Դուն քեզմէ (ինքնաբերաբար) պէտք է գիտնայիր գալիքը: Մէկէն (յանկարծ) յայտնուեցաւ:**

Անորոշ դերբայի բացառական եւ գործիական հոլովներու ձեւի պարագայի պաշտօնով հանդէս գալը մակբայական կիրառութիւն է. ու հետաքրքրական է յիշել, որ արեւմտահայերէնի մէջ լրիւ մակբայացման վիճակ ունին **երթալ** բայի բացառական եւ գործիական հոլովաձեւերը՝ **երթալէն/երթալով**, որոնք ձեռք ձգած են «հետզհետէ, կամաց-կամաց» իմաստը ու իբրեւ անկախ մակբայ կը գործածուին խօսակցականին

մէջ. **Երթալէն** գործերը կը վարթարանան > **Երթալով** գործերը կը վարթարանան: **Երթալէն** օդերը կը պառիս > **Երթալով** դասերը կը դժուարանան:

Արեւմտահայ քերականութեան մէջ անորոշ դերբայի բացառական եւ գործիական հոլովներու ձեւի պարագայի պաշտօնով հանդէս գալը օրին նկատուած է ու ամրագրուած, թէեւ ոչ ամբողջական ներկայացումով: Օրինակ՝ «Հայերէն լեզուի դասագիրք»-ը խօսելով անորոշ դերբայի մասին՝ կը գրէ. «**Ամբողջ օրը մտածելով կ'անցընէ, խաղալով ժամն անցուց, խօսելով կը քալէր նախադասութեանց մէջ մտածելով, խաղալով, խօսելով դերբայները դրուած են գործիական հոլովով եւ պարագայ են**»²¹: Հոս չ'անդրադառնար բացառական հոլովի ձեւի պարագայի պաշտօնին, բայց ուրիշ տեղ՝ ձեւի պարագայի նուիրուած բաժնին մէջ կը գրէ, թէ ձեւի պարագան կ'արտայայտուի «**Գոյականներու կամ գոյականաբար գործածուած այլ խօսքի մասերու բացառական եւ գործիական հոլովներով**» ու կը բերէ Մեծարենցէն տուն մը, ուր երկու ձեւի պարագայ կայ արտայայտուած անորոշ դերբայի բացառական հոլովով.

Տայգն է ժայթքած իր շողակի շարքուաններն անըջական.

*Հեռուներէն ուրի մը թաւ հեծքը կու գայ դողդղալէն,
Այս գիշեր ջերմ ու երազուած կայծեր հոգւոյս խորերն ինկան,*

*Կը մարեմ լոյսը լամպարիս ու կ'երազեմ մրափեղէն*²²:

Անորոշ դերբայի բացառական հոլովի մակբայական այս կիրառութիւնը նկատուած է նաեւ արեւելահայ բարբառներուն մէջ. Էդ. Աղայեան Մեղրիի բարբառի պարագային զայն կը կոչէ **մակբայական դերբայ**, որ, «կազմվում է անորոշ դերբային ավելացնելով էն վերջավորությունը»²³: Ան կը յայտնէ, որ

²¹ Համահեղինակներ **Ս. Գ. Աբրահամեան, Բ. Յ. Վերդեան, Վ. Ա. Քոսեան, Հայերէն Լեզուի Դասագիրք**, երկրորդ հրատարակութիւն, Երեւան, 1968, էջ 145:

²² Նոյնը, էջ 319:

²³ **Էդ. Աղայան**, *Մեղրու բարբառը*, Երևան, 1954, էջ 196:

դերբայը իր բովանդակությամբ կը համապատասխանէ «աշխարհաբարի անորոշ դերբայի գործիական հոլովին՝ իբրեւ ձեւի պարագայ» տալով բարբառի եւ աշխարհաբարի զոյգ օրինակներ՝ *ըսէլէն-ասելով, խըսէլէն-խօսելով*: Աղայեան կ'եզրափակէ գրելով. «Կազմությամբ այս դերբայը նույնն է անորոշ դերբայի բացառական հոլովի հետ, որն այսպիսի գործածություն ունի նաեւ Պոլսի բարբառում»²⁴:

Մէկ կողմ ձգելով ձեւի պարագայի պաշտօնով հանդէս եկող անորոշ դերբայի գործիականի համընդհանուր գործածութեան պարագան՝ լեզուաբանները ուշադրութիւն կը դարձնեն Պոլսոյ բարբառէն արեւմտահայ գրական լեզուին անցած բացառական հոլովի ձեւի պարագային վրայ: Արեւելահայ քերականութիւնը կը զբաղի այս դերբայի սահմանումով ու անուանումով: Ստորագիչին արտայայտած գործողութեան համընթաց գործողութիւն սահմանումը կը վերաբերի նաեւ արեւելահայերէնի երկրորդ անկատար դերբային՝ *գրելիս, կարդալիս*, որ խօսքի մէջ հանդէս կու գայ ժամանակի պարագայի պաշտօնով: *Ալիս-ելիս* վերջաւորությամբ դերբայը կը կոչուի համընթացական, իսկ *էն* վերջաւորությամբ դերբայը՝ *ընթացակցական դերբայ*:

Քոստան կը գրէ. «Թեւ այս դերբայը բարբառային ծագում ունի, սակայն արեւմտահայ գրական լեզվում բավական շատ է գործածվում՝ ցույց տալով դիմավոր բայի արտահայտած գործողությանը համընթաց գործողության հատկանիշ եւ կատարելով ձևի պարագայի պաշտոն»²⁵: Հեղինակը կ'աւելցնէ, որ «որոշ դէպքերում լրացումը հնարավոր է մեկնաբանել եւ իբրև ընթացակցական դերբայ, եւ իբրև անորոշ դերբայի բացառական հոլովածն՝ դրանց նմանության եւ կատարած շարահյուսական դերի ընդհանրության պատճառով»²⁶: Բերուած օրինակներէն յայտնի կ'ընէ, որ պատճառի պարագայի դերով հանդէս գալու պարագային կը համարուի բացա-

²⁴ Նոյնը, էջ 197:

²⁵ Վ. Քոսյան, *Արևմտահայերենի բառակապակցությունները*, Երևան, 1986, էջ 230 :

²⁶ Նոյնը, էջ 231:

ռական հոլով, իսկ ձեւի պարագայի պաշտօնով հանդէս գալու պարագային՝ ընթացակցական դերբայ:

Յետագայ բոլոր ուսումնասիրողները կը նշեն հետեւեալ յատկանիշները.

ա. Այս դերբայը կ'արտայայտէ դիմաւոր բայի գործողութեան համընթաց, զուգահեռ, ընթացակից գործողութիւն ու կ'ունենայ ձեւի պարագայի պաշտօն, իր իմաստով կը նոյնանայ արեւելահայերէնի համընթացական դերբային հետ, որ սակայն կ'ունենայ ժամանակի պարագայի պաշտօն:

բ. Իր ձեւով կը նոյնանայ արեւմտահայերէնի բացառական հոլովին հետ, որուն կը վերապահուի պատճառի պարագայի պաշտօնը, իսկ իրեն՝ ձեւի պարագայի պաշտօնը:

գ. Իր իմաստով ու պաշտօնով կը նոյնանայ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի անորոշ դերբայի գործիական հոլովին հետ, որ դարձեալ կ'արտայայտէ դիմաւոր բայի գործողութեան հետ համընթաց գործողութիւն ու կ'ունենայ ձեւի պարագայի պաշտօն: Չի նշուիր, որ անորոշ դերբայի պարագային, գործիական հոլովին վստահուած է ձեւի պարագայի պաշտօնով հանդէս գալու ամենէն ընթացիկ ձեւը, ու ոչ թէ «ընթացակցական դերբային»: Քոստան իր այդ գիրքին «Բայի լրացումները դերբայներով» բաժնին մէջ²⁷ չի խօսիր անորոշ դերբայի գործիականով ձեւի պարագայի մասին, չ'անդրադառնար անոր, սակայն «պարագայական գործիականով բառակապակցութիւններ» բաժնին մէջ կը գրէ. «Ձևի իմաստն արտայայտվում է նաև անորոշ դերբայի գործիականով»՝ տալով երեք օրինակ Պարոնեանէն, Չոհրապէն եւ Վահրամ Մավեանէն, աւելցնելով. «Երբեմն դիմավոր բայը և անորոշ դերբայը նույնական են լինում, և ձևի իմաստը սաստկություն է արտահայտում: Օրինակ՝ *Եւ արելով կ'արէր զհս*»²⁸: Չի բացատրեր, թէ ինչն է անորոշ դերբայի բացառականի ձեւի պարագան պէտք է առանձնացնել իբրեւ դերբայ, իսկ գործիականինը՝ ոչ:

²⁷ Նոյնը, էջ 223:

²⁸ Նոյնը, էջ 172:

Այս տարանջատումը շփոթ կը ստեղծէ ու կը մղէ անորոշ դերբայի գործիական հոլովն ալ ընթացակցական դերբայ համարել: Օրինակ, *էն վերջաւորութեամբ ընթացակցական դերբայի կազմութեան օրինակներ տալէ անմիջապէս ետք կը գրուի*. «Այս դերբայի գործիականը նախադասութեան մէջ կատարում է ձևի պարագայի շարահյուսական պաշտոն»²⁹: Այս հակասական մօտեցումին պատճառը այն փաստն է, որ անորոշ գործիական հոլովն ալ նոյն կիրառութիւնն ու իմաստը ունի:

Նոյն մօտեցումը կայ նաև ուրիշներու մօտ. Հ. Ռ. Խաչատրեանը կը գրէ. «Գրական արևմտահայերենում ընթացակցական դերբայը կազմվում է անորոշ դերբայից՝ էն վերջավորությամբ, ինչպես *աղօթելէն, լալէն, փշրելէն, ճեղքելէն* և այլն»³⁰: Յետոյ կ'աւելցնէ, որ ընթացակցական դերբայը բնորոշ է արեւմտահայ բարբառներուն ու կու տայ քանի մը բարբառներուն մէջ դերբայական հիմքի վրայ անոր *ով, է, էն* վերջաւորութիւններով կազմուիլը: *Ով* վերջաւորութիւնը կը համապատասխանէ այդ բարբառներուն գործիական, իսկ *էն* ու *է* վերջաւորութիւնները՝ բացառական հոլովներուն: Ուրեմն գործիական հոլովածէն ալ ընթացակցական դերբայ նկատենք: Ոչ մէկ ակնարկութիւն արեւմտահայ եւ արեւելահայ գրական լեզուին գործիական հոլովի նոյնարժէք գործածութեան մասին:

Հրանտ Զ. Պետրոսեան կ'ընէ հետեւեալ հաստատումը. «Ոմանք նոր հայերենում ընդունում են նաև ընթացակցական դերբայի տեսակ, որն ըստ էության անորոշ դերբայի բացառականի կամ գործիականի պարագայական կիրառություն է»³¹:

²⁹ **Յու. Ս. Ավետիսյան**, *Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն*, Երևան, 2007, էջ 157:

³⁰ **Հ. Ռ. Խաչատրյան**, *Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների բայական համակարգերի առնչությունները*. Տես *Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների առնչությունները*, Երևան, 2016, էջ 181-182:

³¹ **Հրանտ Զ. Պետրոսյան**, *Հայերենագիտական քառարան*, Երևան, 1987, էջ 184:

Ասիկա փաստորէն ժխտումն է արեւմտահայերէնի ընթացակցական դերբային եւ հաստատումն է այն իրողութեան, որ արեւմտահայերէնին յատուկ է անորոշ դերբայի բացառական եւ գործիական հոլովներու մակբայական գործածութիւնը: Հետեւաբար անտեղի է բացառական ձեւը կոչել ընթացակցական դերբայ, իսկ միւսը՝ համարել անորոշ դերբայի գործիական հոլով:

Մենք արդէն քննեցինք, որ բացառական ձեւը գործիականի համեմատութեամբ ինչ սահմանափակումներ ունի եւ որոշ վերապահութեամբ պէտք է ընդունիլ Քոսեանի այն հաստատումը, որ ան «արեւմտահայ գրական լեզվում բավական շատ է գործածվում»³²: Հակառակ կարծիքին է Հ. Ռ. Խաչատրեան. «արեւմտահայերենում ընդհանրապէս ընթացակցական դերբայը գործածության ավելի քիչ հաճախականություն ունի», բայց կարելի չէ համաձայնիլ վերջինիս այն կարծիքին, թէ այդ «պատճառով էլ որոշ քերականներ այն չեն առանձնացնում իբրեւ ինքնուրույն դերբայ»³³: Բացառական հոլովը ունի ձեւի, պատճառի եւ տեղի պարագայական նշանակութիւններ. ձեւի պարագան շատ յաճախ իմաստային խաչաձեւում կը ստեղծէ պատճառի եւ տեղի պարագաներուն հետ, այդ պատճառով ալ հետզհետէ կը նուազի անոր գործածութիւնը թէ՛ խօսակցական եւ թէ գրաւոր խօսքին մէջ, բայց այս երեւոյթը չի կրնար կապ ունենալ զայն ընթացակցական դերբայ համարել կամ չհամարելուն հետ: Այդ մերժումը, ըստ իս, հիմնուած է պարզապէս այն հիմքի վրայ, որ ձեւի պարագան անորոշ դերբայի բացառական հոլովի արտայայտութիւններէն մէկն է, ինչպէս է պարագան անոր գործիական հոլովին:

Ընթացակցական դերբայ հասկացութիւնը տեղ գտած է նաեւ սփիւռքահայ քերականութեան մէջ: Կարօ Առաքելեան երկու էջ յատկացուցած է անոր, տուած սահմանումը, կազմութեան կերպը՝ անորոշ դերբայ+էն վերջաւորութիւն, ծանօ-

³² Վ. Քոսյան, *Արեւմտահայերէնի բառակապակցությունները*, Երևան, 1986, էջ 230 :

³³ Հ. Ռ. Խաչատրյան, նշուած աշխատութիւնը, էջ 182:

թութեան մը մէջ մէկ օրինակով տարբերած է բացառական հոլովով պատճառի պարագան ընթացակցական դերբայէն: Վերջինիս համար տրուած են երկու օրինակներ. *Յասմիկը ներս մտաւ դողդղալէն: Ուրքի՛ ելէք խաչակնքելէն*³⁴: Այս բացատրութիւնն ու օրինակները թիւր պատկերացում մը կը ստեղծեն: Այս ձեւերուն հաւանական գործածութիւնը հաստատելով հանդերձ՝ սովորականը գործիական հոլովով տարբերակն է. *Յասմիկը դողդղալով ներս մտաւ: Խաչակնքելով ուրքի՛ ելէք*: Պարզապէս արուեստական դերբայի մը առանձնացումը հոս պատճառ կը դառնայ լեզուական կեղծ պատկերի մը ստեղծումին: Ձեւի պարագային կամ հոլովներուն նուիրուած դասին կարելի էր յաջորդաբար դնել անոր գործածութիւնը երկու հոլովածելերով եւս, նշելով հանդերձ բացառական հոլովածելով արտայայտուած ձեւի պարագայի սահմանափակումները: Արեւմտահայերէնի մէջ *ընթացակցական անուն* դերբայի մը առանձնացումը ու զայն միայն անորոշ դերբայի բացառական հոլովին հետ կապելը ամբողջապէս անտեղի տարանջատումներ են:

դ) **Ներկայ կամ ենթակայական դերբայ**

Կը կազմուի *ող*³⁵ վերջաւորութեամբ.

պարզ բայեր

վազել՝ *վազող*, խօսիլ՝ *խօսող*, կարդալ՝ *կարդացող*.

սոսկածանցաւոր բայեր

տեսնել՝ *տեսնող*, մեռնիլ՝ *մեռնող*, հեռանալ՝ *հեռացող*:

Ալ լծորդութեան բայերու ներկայ դերբայը կը կազմուի ցոյական հիմքի վրայ:

Ներկայ դերբայը խօսքի մէջ հանդէս կու գայ գոյականի եւ ածականի խօսքիմասային յատկանիշներով: Իբրեւ անկախ դերբայ իր առաջին գործածութիւնը ածականական է՝ *հեռացող ընկերներ, բամբասող լեզու, աշխատող բանուոր*,

³⁴ **Կարօ Առաքելեան**, Արդի Հայերէնի Քերականութիւն, Բ. գիրք, Պէյրութ, 1998, էջ 130-131:

³⁵ Գրաբարի մէջ կ'արտայայտուի -աւղ եւ -օղ ձեւերով: Աւանդական ուղղագրութեան մէջ ընդունուած է ող:

համբերող բնատրույթին, ճնշող մեծամասնության, չորցող ծառ, փլող շէնք, բարձրացող ձայներ եւ այլն: Կրնայ գործածուիլ գոյականաբար, ինչպէս գործիքներ նորոգող արհեստատորը > գործիքներ նորոգողը, հեռացող ընկերները մեզ մոռցան > հեռացողները մեզ մոռցան: Ներկայ դերբայներէն ոմանք արդէն կայուն գոյականներ են՝ բան մը ընողի կամ եղողի իմաստով, ինչպէս գրող, ծաղկող, լրագրող, ծխող, խմող, ուտող-խմող, ծրագրատորող եւ այլն:

Իբրեւ գոյական հանդէս գալու պարագային կը հոլովուի, ունի եզակի եւ յոգնակի, կը ստանայ յօդ եւ խօսքի մէջ կը կատարէ գոյականի հիմնական պաշտօնները.

Ուղղական	գրող	գրողներ
Հայցական	գրող	գրողներ
Սեռական	գրողի	գրողներու
Տրական	գրողի	գրողներու
Բացառական	գրողէ	գրողներէ
Գործիական	գրողով	գրողներով

Գրողը նոր գիրք մը հրատարակեց: – Ենթակայ, ուղղական հոլով:

Գրողներու միությանը նոր նախագահ ունեցաւ: – Յատկացուցիչ, սեռական հոլով:

Իբրեւ ածական կը կատարէ որոշիչի պաշտօն.

Գրող մարտիտը կ'ուզեմ:

Ներկայ դերբայը կրնայ երեւիլ բառակազմութեան մէջ՝ կազմելով նորանոր ածանցաւոր բառեր: Այսպէս՝

– Ութին ածանցով. գործողութիւն, դիտողութիւն, երգեցողութիւն, հսկողութիւն, յիշողութիւն, մտածողութիւն, ներողութիւն, սերտողութիւն, վերահսկողութիւն, տեսողութիւն, տեսողութիւն եւ այլն:

– Ական ածանցով՝ արտադրողական, գնողական, դատողական, ծառայողական, մերժողական, ուսանողական, սիրո-

ղական, սպառողական, վանողական եւ այլն: Կարգ մը պարագաներու *ուֆին* եւ *ական* ածանցները նոյն դերբայէն գոյական եւ ածական կը շինեն՝ *լտողութիւն-լտողական, խնայողութիւն-խնայողական, տեսողութիւն-տեսողական, մարտողութիւն-մարտողական, ձգողութիւն-ձգողական, հանդուրժողութիւն-հանդուրժողական* եւ այլն: Կան նաեւ *ական+ութիւն* բազմաձանց կաղապարող կառուցուածքներ՝ *հանդուրժականութիւն, արտադրողականութիւն, ձգողականութիւն* եւ այլն:

– Ներկայ դերբայը կրնայ *ան* ժխտական նախաձանցով ալ գործածուիլ՝ *աններող, անզիջող, անհանդուրժող* եւ այլն:

– *Չէք* ածանցով իբրեւ գործ մը ընողի վարձք. *բերողչէք, տանողչէք, մաքրողիչէք, ներկողչէք* եւ այլն:

– Բարդութիւններու մէջ քիչ կը հանդիպի՝ *ներողամիտ, ծնողասէր, արարողապետ, արարողակարգ*:

ե) Անցեալ դերբայներ

Անցեալ դերբայները երկուք են՝ յարակատար եւ վաղակատար:

Յարակատար դերբայը կը կազմուի ած վերջաւորութեամբ.

պարզ բայեր

վազել՝ *վազած*, խօսիլ՝ *խօսած*, կարդալ՝ *կարդացած*.

սոսկաձանցաւոր բայեր

տեսնել՝ *տեսած*, մեռնիլ՝ *մեռած*, հեռանալ՝ *հեռացած*:

Վաղակատար դերբայը կը կազմուի եր վերջաւորութեամբ.

պարզ բայեր

վազել՝ *վազեր*, խօսիլ՝ *խօսեր*, կարդալ՝ *կարդացեր*.

սոսկաձանցաւոր բայեր

տեսնել՝ *տեսեր*, մեռնիլ՝ *մեռեր*, հեռանալ՝ *հեռացեր*:

Ել եւ *իլ* լծորդութեան պարզ ու սոսկաձանցաւոր բայերը այս դերբայները կը կազմեն արմատական (*տեսնել՝ տես-*,

հասնիլ' հաս-) հիմքի, իսկ *ալ* լծորդութեան բայերը՝ ցոյական հիմքի վրայ (*մնալ' մնաց-*, *հեռանալ' հեռաց-*):

Յարակատար դերբայը խօսքի մէջ հանդէս կու գայ գոյականի եւ ածականի դերերով: Իբրեւ անկախ դերբայ իր առաջին գործածութիւնը ածականական է՝ *չորցած ծառ, կարդած շուն, նեխած ջուր, կտրած հայելի, գրուած վճիռ, տրուած հրաման* եւ այլն: Կրնայ գործածուիլ գոյականաբար, ինչպէս *նորոգուած գործիքներ > նորոգուածներ, հեռացող մարդոց հետ > հեռացածներուն հետ*: Յարակատարը երբեմն կայուն գոյական է՝ բան մը ըրածի կամ եղածի իմաստով, ինչպէս՝ *նշանած, բոված, խորոված* եւ այլն:

Յարակատար դերբայով կը կազմելով նորանոր ածանցաւոր բառեր.

Ք ածանցով՝ *նայուածք, խօսուածք, շինուածք, կառուցուածք, թխուածք, ստացուածք, կտրուածք, պատրուածք, վիժուածք, փորուածք* եւ այլն:

- *Եղէն* ածանցով՝ *հիսուածեղէն, թխուածքեղէն, գործուածքեղէն*:

- *Ութին* ածանցով՝ *քաղցածութիւն, հարբածութիւն, շփացածութիւն, սովածութիւն, փորածութիւն, լքուածութիւն* եւ այլն:

Իբրեւ գոյական հանդէս գալու պարագային կը հոլովուի, ունի եզակի եւ յոգնակի, կը ստանայ յօդ եւ խօսքի մէջ կը կատարէ գոյականի հիմնական պաշտօնները. **Նշանածը** ուշացաւ: **Հեռացածները** պիտի վերադառնան: **Ինկածին** օգնութեան ձեռք մեկնէ եւ այլն:

Իբրեւ ածական կը կատարէ որոշիչի պաշտօն.

Շփացած մանուկ մըն է:

Յարակատար դերբայը կը կազմէ սահմանական եղանակի յարակատար ներկայ եւ յարակատար անցեալ անկատար բաղադրեալ ժամանակները.

վազած եմ, վազած ես, վազած է. վազած ենք, վազած էք, վազած են.

վազած էի, վազած էիր, վազած էր. վազած էինք, վազած էիք, վազած էին:

Յարակատար դերբայը *ըլլալ* բային հետ կը կազմէ երկրորդական բաղադրեալ ժամանակներ՝ *գրած կ'ըլլամ, գրած կ'ըլլայիր, գրած եղայ, գրած եղիր*:

Վաղակատար դերբայը անկախ գործածութիւն չունի: Ան կը կազմէ դիմաւոր բայի սահմանական եղանակի վաղակատար ներկայ եւ վաղակատար անցեալ անկատար բաղադրեալ ժամանակները.

վազեր եմ, վազեր ես, վազեր է. վազեր ենք, վազեր էք, վազեր են.

վազեր էի, վազեր էիր, վազեր էր. վազեր էինք, վազեր էիք, վազեր էին:

Յարակատար եւ վաղակատար ժամանակները մեր քերականութեան մէջ կը յիշատակուին այլ անուններով: Այտընեան *ած* դերբայով եւ էական բայի ներկայով կազմուած ժամանակաձեւերը կը կոչէ **յարակատար կամ բուն յարակատար՝ տեսած եմ**, իսկ էական բայի անկատարով կազմուածը՝ **գերակատար՝ տեսած էի**. *Եր* դերբայով եւ էական բայի ներկայով կազմուած ժամանակաձեւերը կը կոչէ **յարակատար անորոշ՝ տեսեր եմ**, իսկ էական բայի անկատարով կազմուածը՝ **գերակատար անորոշ՝ տեսեր էի**³⁶:

Ած եւ *եր* դերբայներով կազմուած բաղադրեալ ժամանակները ունին իմաստի մօտիկութիւն: Այտընեան այդ մասին կը գրէ. «Նշանակութեան կողմանէ բուն յարատակարն եւ անորոշ յարակատարն փոքր տարբերութիւն մ'ունին: *Ած* ածանցով շինուածը կը ցուցնէ թէ ատեն մը ստուգիւ եղած է գործողութիւնը կամ թէ՛ եղած չէ: Չորօրինակ. *Ինքն զմեզ տեսած ու հետերնիս խօսած է: Տունս այրած է:* Իսկ *եր* անցեալով կազմուածը կը ցուցնէ թէ օտարին վկայութեամբը կը խօսի կամ թէ՛ յառաջ եղած բան մը դեռ հիմայ կ'իմացուի. այսպէս. *Ինքն զմեզ տեսեր է: Գեղի տունս այս գիշեր այրեր է: Ծնած օրս՝ հայրս մեներ է: Քնյս մէջ խօսեր եմ:*

³⁶ Արսէն Այտընեան, *Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, յօդ. 245:

Բայց *ած եւ եր* անցեալով շինուած գերակատարներն իրարու տեղ կը գործածուին հաւասարապէս: *Հոն մնացած էի*. նոյն է թէ ըսես *Հոն մնացեր էի*³⁷:

Սա ըսել է, որ, ըստ Այտընեանի, *տեսած էի եւ տեսեր էի* ժամանակաձեւերը զուգաձեւութիւններ են, իսկ *տեսած եմ եւ տեսեր եմ* ժամանակաձեւերու տարբերութիւնը կը սահմանափակուի միայն վերեւ յիշուած երկու պարագաներուն մէջ: Օրինակներ յարակատար ներկայով. *Ես արդէն սկիզբէն համակիր եղած եմ յեղափոխական շարժումին* (ԵՕ): *Լսողն ալ պիտի կարծէ, թէ հիւանդ չեմ եւ շինծու հիւանդ եղած եմ* (ՅՊ): *Դուք գիտէք, թէ ես փառքն ու պարծանքը եղած եմ մեր հայրենի գաւառին* (ՎԹ): *Հիմա վարպետ կօշկակար մը եղած եմ* (ԵՕ): *Պատրաստութիւններս տեսած եմ* (ՇՇ): Վաղակատար ներկայի դիպուկ օրինակներ՝ *Խօսեր է խմբակի մը մասին, որուն մաս կը կազմեմ եղեր ես ալ: ... Ունենալով խմբակ մը, արգելք եղեր եմ Պատրիարքի ընտրութեան* (ՌՀ): «Ելիր Պոլիս գնա՛, հոս մնալդ որեւէ օգուտ չունի» **ըսեր են** (ՇՇ): *Սեքստանտները եթէ տեսնէին, թէ մէկը չափէն դուրս կը հպարտանայ ու կը գոռոզանայ՝ «աթոռը ամպերը կը դնէ» **ըսեր են** (Ակօ): **Չարմացեր են**, թէ ինչպէս խմբագրութիւն կ'ընեմ (ԵՕ): *Սղոթիւնն ալ գլուխը առեր գացեր է* (Հ): *Օ՛, որքան հարուստ եմ եղեր* (Հ): *Կատուին ըսեր են աղբոյ դեղ է. խորունկ-խորունկ է թաղեր: Եղեր է, չէ եղեր, միեւնոյնն է: Հեքիաթներուն, առակներուն, ժողովրդական զրոյցներուն ու ասանդավէպերուն մէջ վաղակատարը անելի կը հանդիպի:**

Եղեր դերբայը կը դրուի բայի խոնարհման ներկայ ժամանակաձեւերուն վրայ ու «կը ցուցնէ թէ՛ գործողութիւնն օտարին վկայութեամբը կը հաստատուի, կամ թէ յառաջ եղած բան մը դեռ հիմա կ'իմացուի»³⁸ *կը տեսնեմ եղեր, տեսած եմ եղեր, տեսեր է եղեր, պիտի տեսնէ եղեր, տեսած պիտի ըլլայ եղեր, տեսնելու է եղեր...*: Կրնայ արտայայտել հեգնական վերաբերմունք:

³⁷ Նոյն տեղը, յօդ. 245:

³⁸ Նոյն տեղը, յօդ. 253

Այդ պատճառով ալ դերբայի այս գործածութիւնը զինք կը վերածէ վերաբերական բառի:

զ) Ապառնի դերբայ

Կը կազմուի *ելիք* եւ *ալիք* վերջաւորութիւններով.

պարզ բայեր

վազել՝ *վազելիք*, խօսիլ՝ *խօսելիք*, կարդալ՝ *կարդալիք*.

սուկաճանցաւոր բայեր

տեսնել՝ *տեսնելիք*, մեռնիլ՝ *մեռնելիք*, հեռանալ՝ *հեռանալիք*:

Ալիք-ելիք դերբայը ունի միայն անկախ գործածութիւն, գլխաւորաբար ածականի դերով, իբրեւ որոշիչ՝ *գրելիք պարտականութիւն*, *տեսնելիք վայրեր*, *ընելիք գործեր*, *երթալիք տեղեր*, *այցելելիք անձեր*, *կարդալիք գիրքեր*, *տանելիք ապրանք* եւ այլն: Լայնօրէն կրնայ գործածուիլ նաեւ իբրեւ գոյական՝ *ուտելիք*, *համրեսելիք*, *շօշափելիք*, *փակցնելիք*, *անելիք*, *գալիք*, *խաղալիք* եւ այլն: Կը հոլովուի, կ'ունենայ եզակի եւ յոգնակի, կը ստանայ յօդ եւ խօսքի մէջ հանդէս կու գայ գոյականի շարահիւսական պաշտօններով՝ ***խաղալիքները*** *փճացան*: ***Փակցնելիքը*** *չորցաւ*: ***Ուտելիքներուն*** *համը կորսնցուցի*: ***Գալիքով*** *մտաւորով եմ*:

Դպրոցական քերականութիւնները նաեւ կու տան երկրորդ ապառնի դերբայը՝ *ալու* եւ *ելու* վերջաւորութիւններով, որ փաստօրէն անորոշ դերբայի սեռական տրական հոլովն է՝ *վազելու*, *խօսելու*, *կարդալու*, *ու* ինչպէս տեսանք, էական բայի երկու ժամանակներուն հետ կազմած կապակցութիւնները կը նկատեն սահմանական եղանակի երկրորդ ապառնի կամ հարկադրական եղանակի երկու ժամանակները:

է) Ժխտական դերբայ

Արեւմտահայերէնի ժխտական դերբայը կը կազմուի աներեւոյթի Լ-ն ր-ի վերածելով.

պարզ բայեր

վազել՝ *վազեր*, խօսիլ՝ *խօսիր*, կարդալ՝ *կարդար*.

սոսկածանցաւոր բայեր

տեսնել՝ *տեսներ*, մեռնիլ՝ *մեռնիր*, հեռանալ՝ *հեռանար*:

Չունի անկախ գործածութիւն. կը կազմէ.

1) Սահմանական եղանակի ներկայ եւ անցեալ անկատար պարզ ժամանակներու ժխտական բաղադրեալ ձեւերը.

կը գրեմ... *չեմ գրեր*, *չես գրեր*, *չի գրեր*...:

կը գրէի... *չէի գրեր*, *չէիր գրեր*, *չէր գրեր*...:

Ասոնց կազմութեան կը մասնակցին էական բայի ժխտական ձեւերը՝ *չեմ*, *չես*, *չի* (*չ'.*) *չենք*, *չէք*, *չեն*. *չէի*, *չէիր*, *չէր*, *չէինք* *չէիք*, *չէին*:

2) Արգելականի եզակին.- գրէ՛ *մի՛ գրեր*, տես՛ *մի՛ տեսներ*, խօսի՛ր/խօսէ՛՛ *մի՛ խօսիր*, փախի՛ր՝ *մի՛ փախչիր/մի՛ փախիր*, լողա՛՛ *մի՛ լողար*, հեռացի՛ր՝ *մի՛ հեռանար*:

Ժխտական դերբայի կազմութեան ու բաղադրեալ ժամանակներ կազմելու ձեւին մէջ փոփոխութիւն չէ նկատուած Այտընեանի օրերէն: Այտընեան սպառիչ կերպով կը ներկայացնէ ժխտական դերբայը եւ անով կազմուած բաղադրեալ ժամանակային ձեւերը. «Սահմանական ներկայն ու անկատարը կը կազմուին 1. եմ բային բացասականովը, եւ 2. իւրաքանչիւր բայի բացասական ձեւովը»³⁹:

«Բայի մը բացասական ձեւը կը շինուի՝ աներեւոյթի Լ գիրը ընդ փոխելով. այսպէս, *լսեր*, *սորվիր*, *կարդար*, *մոռնար*»⁴⁰:

«Միտ դնելու բան մ'ալ է, որ Բ. լծորդութեան բացասական ձեւը սահմանական եղանակի անկատարի մէջ *եր* կը

³⁹ Արսէն Այտընեան, Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, յօդ. 217:

⁴⁰ Նոյն տեղը, յօդ. 218:

վերջաւորի (փխնկ. իր). այսպէս, *չէի սորվեր*, (փխնկ. *չէի սորվիր*)»⁴¹:

Ծագման տեսակէտէն ժխտական դերբայը նոյն անորոշ դերբայն է, ինչպէս որ կ'երեւի նաեւ արեւելահայերէնի հին որակին մէջ (չեմ գրիլ): Արեւմտահայերէնի մէջ կայ լ>ր հնչիւնափոխութիւն: Լ-ին ր-ի վերածում կայ ոչ միայն ժխտական դերբայի՝ այլեւ յարակատար դերբային մէջ (տեսել եմ>տեսեր եմ): Ժխտական դերբայի ր-ի անկում, ինչպէս արեւելահայերէնի մէջ, կայ նաեւ արեւմտահայ բարբառներու մէջ: Օրինակ՝ Մշոյ բարբառին մէջ *չըմ ուզի*, իսկ Քեսապի բարբառին մէջ զուգածեաբար՝ *չըմ ուզիէր/չըմ ուզի*: Արեւմտահայ բարբառներուն յատուկ լ>ր>զեռօ անցումը փոխանցուած չէ գրականին:

Անշուշտ, հայերէն բոլոր դերբայներու եւ դիմաւոր ձեւերու պարագային պէս, եթէ խօսք բացուի ժխտական դերբայի կազմութեան հիմքի մասին՝ «դերբայական հիմք» մատնանշումը թերի պիտի ըլլայ, որովհետեւ ան կազմուած է ոչ թէ աներեւոյթի (անորոշ դերբայ) հիմքի վրայ, այլ՝ այդ դերբայի վերջին լծորդ գիրի հնչիւնափոխութեամբ: Եւ ատով ալ ժխտական դերբայը առանձնակի երեւոյթ մը կը մնայ:

Ժխտական բաղադրեալ ձեւերը ժամանակային առումով հաստատականին իմաստային երանգները ունին ու խօսակցականին մէջ՝ նոյն տարբերակները.

Ձիւն չի գար: – Բացարձակ ներկայ:

Ձիւն չի գար (կոր): – Շարունակական ներկայ:

(Վաղը) ձիւն չի գար (կոր): – Ապառնի:

Գրական լեզուն կտրականապէս կը մերժէ *կոր* մասնիկի գործածութիւնը:

⁴¹ Նոյն տեղը, յօդ. 221:

5.20.– Ժխտական խոնարհում

ա) Սահմանական եղանակի ներկայ եւ անկատար ժամանակներու ժխտականը

Սահմանական եղանակի ներկայ եւ անկատար ժամանակներուն ժխտականը կը կազմուի էական բայի ներկայ եւ անկատար ժամանակներու ժխտականով եւ բային ժխտական դերբայով. այսպէս՝

- Կը գրեմ... *չեմ գրեր, չես գրեր, չի գրեր.
չենք գրեր, չէք գրեր, չեն գրեր.*
- Կը գրէի... *չէի գրեր, չէիր գրեր, չէր գրեր.
չէինք գրեր, չէիք գրեր, չէին գրեր.*
- Կը խօսիմ... *չեմ խօսիր, չես խօսիր, չի խօսիր.
չենք խօսիր, չէք խօսիր, չեն խօսիր.*
- Կը խօսէի... *չէի խօսեր, չէիր խօսեր, չէր խօսեր.
չէինք խօսեր, չէիք խօսեր, չէր խօսեր.*
- Կը կարդամ... *չեմ կարդար, չես կարդար, չի կարդար.
չենք կարդար, չէք կարդար, չեն կարդար.*
- Կը կարդայի... *չէի կարդար, չէիր կարդար, չէր կարդար.
չէինք կարդար, չէիք կարդար, չէին կարդար:*

Նկատի ունենալ, որ

– Էական բայի ներկայ ժամանակի եզակի Գ. դէմքին մէջ է-ն ի-ի կը վերածուի՝ *չի*: Միւս բաղադրեալ ժամանակներու ժխտականին մէջ է-ն անփոփոխ կը մնայ. *գրած է՝ չէ գրած, տեսնելու է՝ տեսնելու չէ*, բայց *կը գրէ՝ չի գրեր*:

– Իլ լծորդութեան բայերու պարագային անցեալ անկատարի մէջ *ի* խոնարհիչը կը փոխուի ե-ի. *կը խօսիմ՝ չեմ խօսիր (ի)*, բայց *կը խօսէի՝ չէի խօսեր (ե)*:

– Էական բայի եզակի Գ. դէմքի ժխտական ձեւը բաղաձայնով սկսող բայերէ առաջ անջատ կը գրուի, ճիշդ ինչպէս *կը* մասնիկը հաստատական ձեւերուն մէջ. *կը գրէ՝ չի գրեր, կը փախչի՝ չի փախչիր, կը լողայ՝ չի լողար*, թէեւ բառաշեշտը կու գայ էական բային վրայ՝ *կը լողայ*, բայց՝ *չի՛ լողար*: Ձայնա-

ւորով սկսող բայերէ առաջ կը կորսնցնէ ի-ն, որ կը փոխարինուի ապաթարցով ու կը կապուի դերբային. *կ'ուզէ' չ'ուզեր, կ'այրի' չ'այրիր, կ'երգէ' չ'երգեր, կ'որոշէ' չ'որոշեր*, բառաշեշտն ալ բերելով առաջին վանկին վրայ՝ *կ'երգէ*, բայց *չ'երգեր*: Ուղղագրական եւ ուղղախօսական հակադրութիւն մը կը գոյանայ, երբ դերբայը ունի բառասկիզբի անգիր ը՛ թէ՛ հաստատականի, թէ՛ ժխտականի մէջ. բաղաձայնով սկսող բայերուն պէս, *կը* ժամանականիշը եւ *չի* ժխտականը անջատ կը գրուին. *կը շտապէ' չի շտապեր, կը սպասէ' չի սպասեր*, բայց կը կարդանք ու կ'ըսենք «կըշտապէ», «չըշտապեր»:

Ուղղագրական եւ ուղղախօսական այս հակադրութենէն խուսափելու համար ոմանք կը գրեն *չ'շտապեր*: Այս մօտեցումը բնականաբար պիտի տանի նաեւ *կ'շտապէ* ձեւի ընդունման: Շղթայ մըն է, որ կը փրթի: Վերջերս *կու* մասնիկն ալ սկսած են կցել՝ *կուտամ, կուլամ, կուգամ...*: Ասկէ ետք յաջորդական քայլեր պիտի ըլլան *կը գրեմ, ապա կգրեմ*, իսկ սա վերջինն ալ արդէն ապաթարցը անելորդ պիտի դարձնէ՝ *կերգեմ*: Հետեւաբար խուսափիլ ընդունուած կանոնակարգը տեղ մը խախտելէ, որովհետեւ այդ քայլը հսկայ փոփոխութիւններու դուռ կրնայ բանալ: Պահել *կը շտապէ, կու գայ, չի շտապեր* ձեւերը:

– Հայերէնի մէջ առոգանութեան նշանները կը դրուին հաստատական բաղադրեալ բայերու դերբային վրայ՝ *գրամծես, տեսնիրես, գալուես*, բայց բաղադրեալ ժխտական ձեւերուն պարագային առոգանութեան նշանը կու գայ էական բային վրայ՝ *չես տեսած, չէք տեսներ, չէ գացած, գալու չէ*: Սահմանական եղանակի ժխտական ներկայի եզակի Գ. դէմքն ալ նոյնն է՝ *չի՞ խօսիր, չի՞ վագեր, չի՞ խաղար*, բայց երբ դերբայը ձայնաւորով սկսի՝ կը ստեղծուի ժխտականին համադրական ձեւը, ուր առոգանութեան նշանը կու գայ առաջին վանկին վրայ՝ *չ'երգեր, չ'իջնար, չ'ուզեր, չ'անղար*: Այս գետնի վրայ սխալագրութիւն շատ կը պատահի:

բ) Արգելականի կազմութիւնը

Եզակի արգելականը կը կազմուի ժխտական դերբայի, իսկ յոգնակին՝ ըղծական-ստորադասական եղանակի ներկայ ժամանակի Բ. դէմքին հետ *մի՛ արգելականը ղնելով. մի՛ վազեր, մի՛ վազէք, մի՛ խօսիր, մի՛ խօսիք, մի՛ վախնար, մի՛ վախնաք*: Արտօնելի չեն ձայնաւորով սկսող բայերէն առաջ *մի՛ արգելականին ամփոփումն ու կցումը՝ մ՛ելեր, մ՛ելէք*:

գ) Ժխտականի կազմութիւնը միայն չ-ով

Բացի սահմանական եղանակի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներէն ու հրամայականէն՝ միւս բոլոր դերբայները եւ պարզ ու բաղադրեալ ժամանակներու բայերը իրենց ժխտականը կը կազմեն չ մասնիկով. այսպէս՝

– Անկախ դերբայներուն սկիզբը՝ կցուելով.

Աներեւոյթ

գրել՝ *չգրել*, խօսիլ՝ *չխօսիլ*, կարդալ՝ *չկարդալ*.

ներկայ դերբայ

գրող՝ *չգրող*, խօսող՝ *չխօսող*, կարդացող՝ *չկարդացող*.

ապառնի դերբայ

գրելիք՝ *չգրելիք*, խօսելիք՝ *չխօսելիք*, կարդալիք՝ *չկարդալիք*.

Յարակատար դերբայ

գրած՝ *չգրած*, խօսած՝ *չխօսած*, կարդացած՝ *չկարդացած*:

– Պարզ դիմաւոր բայերուն սկիզբը կցուելով.

Կատարեալ անցեալ

գրեցի՝ *չգրեցի*, խօսեցայ՝ *չխօսեցայ*, կարդացի՝ *չկարդացի*:

ցի:

Բացարձակ ապառնի

պիտի գրեմ՝ *պիտի չգրեմ*, պիտի խօսիմ՝ *պիտի չխօսիմ*,

պիտի կարդամ՝ *պիտի չկարդամ*:

Անկատար ապառնի

պիտի գրէի՝ *պիտի չգրէի*, պիտի խօսէի՝ *պիտի չխօսէի*,

պիտի կարդայի՝ *պիտի չկարդայի*:

Ստորադասական-ըղձական ներկայ
գրեմ՝ *զգրեմ*, խօսիմ՝ *չխօսիմ*, կարդամ՝ *չկարդամ*...
Ստորադասական-ըղձական անկատար
գրէի՝ *չգրէի*, խօսէի՝ *չխօսէի*, կարդայի՝ *չկարդայի*...:

Նկատի ունենալ, որ

Ապառնի ժամանակներուն մէջ երբեմն կը լսենք *պիպիի՛ վազեմ*. *հոս* *չ*-ն *պիպիի* ցուցիչին վրայ բերելով խօսողը կը շեշտէ այդ գործողութիւնը չընելու իր կամքը: Ասիկա միայն ոճական նկատառումներով արտօնելի է գեղարուեստական գրուածքներու մէջ: Մերժելի են նաեւ *պիպիի* ցուցիչին կրճատման պարագաները՝ *պիպի՛ վազեմ*, *պիպի՛ չվազեմ* եւ այլն: Մերժել նաեւ *պէպք է երթալ* վերլուծական բայական ձեւը արտայայտել *պիպիի երթալ* ձեւով: Այս մասնակի յատկութիւններով *պիպիի* ցուցիչը տակաւին կը ցուցաբերէ բառային որոշ անկախութիւն մը, որ ունէր արեւմտահայերէնի կազմաւորման սկզբնական շրջանին: Արդի հայերէնին մէջ անոր վերապահել միայն ցուցիչի դերը:

– Բաղադրեալ ժամանակներու ժխտականը կը կազմուի էական բայի ժխտականով. այսպէս՝

Բաղադրեալ ապառնի
վազելու եմ...*վազելու չեմ*, *վազելու չես*, *վազելու չէ*....

Բաղադրեալ ապառնի անկատար
վազելու էի... *վազելու չէի*, *վազելու չէիր*, *վազելու չէր*...

Յարակատար ներկայ
վազած եմ...*վազած չեմ*, *վազած չես*, *վազած չէ*...:
էական բայը կրնայ նախադաս ալ գործածուիլ՝ *չեմ վազած*, *չես վազած*, *չէ վազած*:

Յարակատար անկատար
վազած էի...*վազած չէի*, *վազած չէիր*, *վազած չէր*:
էական բայը կրնայ նախադաս ալ գործածուիլ՝ *չէի վազած*, *չէիր վազած*, *չէր վազած*:

Վաղակատար ներկայ
վազեր եմ՝... *չեմ վազեր, չես վազեր, չէ վազեր...*:

Վաղակատար անկատար
վազեր էի... *չէի վազեր, չէիր վազեր, չէր վազեր*:
Էական բայը միշտ նախադաս է:

դ) Ժխտական խոնարհումի համանունությունները

Ժխտական խոնարհումին մէջ համանունութեան երկու պարագաներ ստեղծուած են արեւմտահայերէնի մէջ.

1.- Համանունութիւն մը գոյութիւն ունի ել լծորդութեան պարզ բայերու վաղակատար ժամանակներու եւ սահմանական ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներու ժխտական ձեւերուն միջեւ. այսպէս՝

Սահմանական ներկայ
կը գրեմ *չեմ գրեր, չես գրեր, չի գրեր.*
չենք գրեր, չէք գրեր, չեն գրեր.

Վաղակատար ներկայ
գրեր եմ *չեմ գրեր, չես գրեր, չէ գրեր.*
չենք գրեր, չէք գրեր, չեն գրեր.

Սահմանական անկատար
կը գրէի *չէի գրեր, չէիր գրեր, չէր գրեր.*
չէինք գրեր, չէիք գրեր, չէին գրեր.

Վաղակատար անկատար
գրեր էի *չէի գրեր, չէիր գրեր, չէր գրեր.*
չէինք գրեր, չէիք գրեր, չէին գրեր:

Միակ հակադրուող տեղը ներկայ ժամանակի եզակի երրորդ դէմքն է, ուր էական բայը տեղ մը կ'արտայայտուի *չի*, իսկ միւս տեղը՝ *չէ* ձեւով: Ձեւաբանական այս նոյնութիւնը շարահիւսական գետնի վրայ եւս չի հակադրուի շատ անգամ, այսինքն՝ խօսքին արտայայտած միտքով: Օրինակ՝ *Պարտականութիւնս չեմ գրեր* նախադասութեան հաստատականը իրն է. *Պարտականութիւնս կը գրեմ*, թէ *Պարտականութիւնս գրեր եմ*: Հոս օգնութեան կը հասնի խօսքի ընդհանուր իրա-

դրութիւնը, թէ ո՛ր, ինչ պայմաններու մէջ կ'ըսուի այդ խօսքը:
Ամբողջական նոյնութիւն կը ստեղծուի նաեւ *իլ լծորդութեան* անցեալ անկատար ձեւերուն միջեւ.

կը խօսէի *չէի խօսեր, չէիր, չէր խօսեր.*
խօսեր էի *չէի խօսեր, չէիր խօսեր, չէր խօսեր:*

Միւս բայերու պարագային ձեւաբանական հակադրութիւնը կ'ապահովուի ժխտական եւ վաղակատար դերբայներու կազմութեան տարբերութեամբ. ***տեսնել՝ տեսներ-տեսեր, փախչիլ՝ փախչիր-փախեր, կարդալ՝ կարդար-կարդացեր*** եւ այլն:

Հաւանաբար այս ալ պատճառ է, որ վաղակատար բաղադրեալ ժխտական ձեւերը ինքնաբերաբար հետզհետէ դուրս մղուին լեզուէն ու փոխարինուին յարակատարի համապատասխան ձեւերով (գրեր եմ՝ ***չեմ գրած***, գրեր էի՝ ***չէի գրած***), թէեւ քիչ յաճախականութեամբ կը հանդիպի տեղատեղ՝ *եղեր է չէ եղեր մարդ մը ու...*:

2.- Ժխտական դերբայը համանունութիւն մը ստեղծած է ըղծական-ստորադասական եղանակի անցեալ անկատար եզակի Գ. դէմքի ձեւերուն հետ՝ *չեմ գրեր - գրէր, չէր խօսեր - խօսէր, չեմ կարդար - կարդար*: Ասիկա երկու հնարաւոր շփոթութիւն կը ստեղծէ. ա) ըղծական-ստորադասական ձեւերը անցեալ անկատար ձեւեր են, հետեւաբար է-ով կը գրուին, իսկ ժխտական դերբայը՝ աներեւոյթէն կազմուած ըլլալուն համար է-ով կը գրուի: Ասկէ եկած չփոթին հետեւանքով ալ շատ անգամ ժխտական դերբայն ալ է-ով գրուած կը տեսնենք հոս ու հոն: բ) Ձայնաւորով սկսող ժխտական դերբայները սահմանական եղանակի ներկայի Գ. դէմքը կը կազմեն *չի* ժխտական օժանդակ բայով, բայց ձայնաւորը կը սղի ու ապաթարց կ'առնէ: Այս ալ համանունութիւն մը կը ստեղծէ ըղծական եղանակի անցեալ անկատար ժամանակի եզակի Գ դէմքի ժխտականին հետ.- *չ'երգեր-չերգէր, չ'ուզեր-չուզէր, չ'այրեր-չայրէր, չ'երթար-չերթար*: Խօսքի մէջ ընկալելի են ժամանակն ու եղանակը, նաեւ դէմքը, հետեւաբար անշփո-

թելի կը դառնան ժխտական դերբայի ե-ը, եւ անկատարի է-ն (չ'երգեր-չերգեր, չ'ուզեր-չուզեր), նոյնպէս՝ բաղադրեալ ժամանակի ապաթարցը սղուող ի-ի դիմաց, եւ ըզձականին ուղղակի կցուող չ-ն (չ'այրեր-չայրեր, չ'երթար-չերթար):

5.20.- Չարտուղի բայեր

Չարտուղի կը կոչուին այն բայերը, որոնք կատարեալի հիմքով եւ կամ վերջաւորութիւններով կը շեղին իրենց խումբի խոնարհումէն:

Ել լծորդութեան աններածանց բայերէն ցոյական հիմք չունին հետեւեալ բայերը.

Բերել. բերի, բերիր, բերաւ, բեր, բերէք: Բերաւ եւ բեր զարտուղի են նաեւ վերջաւորութիւններով: Բերել զարտուղի բայը բարդութիւններու մէջ կը դառնայ կանոնաւոր. մտաբերել՝ մտաբերեցի, մտաբերեցիր, մտաբերեց, մտաբերէ, այլեւ արտաբերել, մէջբերել, նուիրաբերել, իսկ իլ լծորդութեամբ՝ վերաբերիլ, յարաբերիլ. յարաբերեցայ, յարաբերեցար, յարաբերեցաւ, յարաբերիր:

Ըսել. ըսի, ըսիր, ըսաւ, ըսէ, ըսէք: Ըսաւ ձեւը զարտուղի է նաեւ վերջաւորութեամբ:

Ել լծորդութեան սոսկածանցաւոր զարտուղի բայեր.

Ելլել. ՚ սոսկածանցաւոր բայը միայն եզակի հրամայականին մէջ տակաւին ապրող զուգածեութիւն մը ունի՝ ել-ելիր: Ել՝ ձեւը զարտուղի կը մնայ:

Տեսնել. եզակի հրամայականին մէջ զարտուղի ձեւ ունի՝ տես:

Խածնել. խածի, խածիր, խածաւ, խածինք, խածիք, խածին, հրամայականը՝ խած: Հոս միայն կանոնաւոր ձեւը եզակի Գ. դէմքն է:

Իլ լծորդութեան աններածանց բայերէն ցոյական հիմք չունին հետեւեալ բայերը.

Ծնիլ. ծնայ, ծնար, ծնաւ, ծնանք, ծնաք, ծնան, ծնիր, ծնէք:

Նստիլ. նստայ, նստար, նստաւ, նստանք, նստաք, նստան,

նստի՛ր, նստե՛ք: Կայ ցոյական կանոնաւոր տարբերակն ալ, որ սկսած է տեղ գրաւել՝ *նստեցայ, նստեցար, նստեցաւ, նստի՛ր, նստեցէ՛ք*:

Կալի (կաչիլ). *կայայ, կպար, կպաւ, կպանք, կպաք, կպան, կպի՛ր, կպէ՛ք*:

Պրծիլ. *պրծայ, պրծար, պրծաւ, պրծանք, պրծաք, պրծան, պրծի՛ր, պրծէ՛ք*:

Սկսիլ. *սկսայ, սկսար, սկսաւ, սկսանք, սկսաք, սկսան, սկսի՛ր, սկսէ՛ք*:

Փլիլ. *փլայ, փլար, փլաւ, փլանք, փլաք, փլան, փլի՛ր, փլէ՛ք*:
Փլել ներգործական բայը ունի կանոնաւոր խոնարհում՝ *փլեցի, փլեցիր, փլեց, փլէ՛, փլեցէ՛ք*:

Փրթիլ. *փրթայ, փրթար, փրթաւ, փրթանք, փրթաք, փրթան, փրթի՛ր, փրթէ՛ք*: Պատճառականը՝ *փրցնել*:

Թռչիլ ու **փախչիլ** սուկածանցաւոր բայերը ներկայ ձեւերուն մէջ չ սուկածանցը չպահելու պարագային՝ *թռիլ, փախիլ*, պիտի գիտակցուին պարզ զարտուղի բայեր՝ *թռայ, թռար, թռաւ* եւ այլն:

Ընդունիլ բային անցեալ կատարեալին համար զարտուղի են *ընդունեցի, ընդունեցիր, ընդունեց, ընդունեցինք, ընդունեցիք, ընդունեցին* ձեւերը. պէտք է ըսել *ընդունեցայ, ընդունեցար, ընդունեցաւ, ընդունեցանք, ընդունեցաք, ընդունեցան*:

Ալ լծորդութեան կարգ մը բայեր կատարեալի մէջ ունին խոնարհիչ ձանաւորի կորուստ. ասոնք մերժելի ձեւեր կը մնան. *խաղալ՝ խաղայ, խաղցէ՛ք, փոխանակ՝ խաղացի, խաղացէ՛ք. աղալ՝ աղցէ՛ք, փոխանակ՝ աղացէ՛ք. աղցուած, փոխանակ աղացուած* ձեւերուն:

Արդի հայերէնի մէջ տարբեր նպատակներով կը գործածուին գրաբարեան բայածեւեր, որոնք վերջին հաշուով զարտուղի կը մնան, ինչպէս՝ *կանց, փոխան կեցի՛ր, նիստ, փոխան նստի՛ր* կանոնաւոր ձեւերուն: *Նիստուկաց* կցականը արդէն գոյական է:

5.21.- Պակասաւոր բայեր

Ասոնք ունին սահմանական եղանակի միայն ներկայ եւ անկատար ժամանակները: Այդ ժամանակներու կազմութեան անոնց ձեւն ալ տարբեր է, առանց կը ցուցիչի: Պակասաւոր բայերը միա եղանակներն ու ժամանակները կ'ամբողջացնեն իրենց կանոնաւոր զոյգերով:

Հայերէնի պակասաւոր բայերն են.

Եմ (էական բայ) *եմ, ես, է. ենք, էք, են.*
էի, էիր, էր. էինք, էիք, էին (ըլլալ):

Ժխտականը կը կազմուի չ-ով՝ *չեմ, չես, չէ...*

Կամ *կամ, կաս, կայ. կանք, կաք, կան.*
կայի, կայիր, կար. կայինք, կայիք, կային (ըլլալ, գտնուիլ)

Ժխտականը կը կազմուի չ-ով՝ *չկամ, չկաս, չկայ...*: Ժխտականը ուղղախօսական նոր հարց ստեղծած է. կ'ըսուի *չիկամ, չիկաս, չիկայ*: Գրաճանաչութեան գործընթացին մէջ դպրոցը ճիգ կը տանի ասիկա ուղղելու:

Ունիմ *ունիմ, ունիս, ունի. ունինք, ունիք, ունին,*
ունէի, ունէիր, ունէր. ունէինք, ունէիք, ունէին (ունենալ):
Ժխտականը կը կազմուի չ-ով՝ *չունիմ, չունիս, չունի...*

Գիտեմ *գիտեմ, գիտես, գիտէ. գիտենք, գիտէք, գիտեն.*
գիտէի, գիտէիր, գիտէր. գիտէինք, գիտէիք, գիտէին (գիտնալ):

Ժխտականը կը կազմուի *գիտեր* ժխտական դերբայով եւ էական բայի ժխտականով՝ *չեմ գիտեր, չես գիտեր, չի գիտեր...*: Այտընեան վերի պակասաւոր բայերուն կարգին չի նշեր *գիտեմ* բայը: Ասոր ժխտականը վիճայարոյց եղած է արեւմտահայերէնի մէջ: Ոմանք առաջարկած են *չգիտեմ* ձեւը՝ *չունիմ, չկամ* եւ *չեմ* պակասաւոր բայերու շարքին: Բայց այս ձեւը դուրս դրուած է տեղ տալով բաղադրեալ նոր ձեւի մը՝ *չեմ գիտեր, չես գիտեր, չի գիտեր...* *չէի գիտեր, չէիր*

գիտեր, չէր գիտեր...: Գիտնալ բայէն կանոնաւորաբար ունինք չեմ գիտնար, չես գիտնար, չի գիտնար եւ այլն: *Գիտեմ* պակասաւոր բայի ժխտական դերբայի դերով հանդէս եկող *գիտեր* ձեւը զարտուղի պարագայ մը ըլլալով հանդերձ՝ անփոխարինելի է արդէն:

Հին լեզուէն մնացած վերի պակասաւոր բառերէն բացի՝ ունինք աշխարհաբարի մէջ պակասաւոր դարձած քանի մը բայեր, որոնց կարգ մը ժամանակները չեն գործածուիր.

Պարտիմ. սովորաբար կը գործածուի սահմանական եւ ստորադասական-ըղձական ներկայ եւ անկատար ձեւերով. *կը պարտիմ, կը պարտիս, կը պարտի...կը պարտէի, կը պարտէիր, կը պարտէր... պարտիմ, պարտիս, պարտի... պարտէի, պարտէիր, պարտէր*: Ունի նաեւ *պարտիր* հրամայականը: Կը լրացուի *պարտաւորուիլ* կանոնաւոր բայով:

Կարենալ/կրնամ. *կարենալ*՝ ունի ներկայի հիմքով կազմուած բոլոր ժամանակները. սահմանական ներկայ, անկատար, բացարձակ ապառնի եւ անկատար ապառնի, ստորադասական ներկայ եւ անկատար՝ *կը կարենամ, կը կարենայի, պիտի կարենամ, պիտի կարենայի, կարենամ, կարենայի*: Չունի անցեալ կատարեալն ու հրամայականը: Ունի աներեւոյթ՝ *կարենալ*, ապառնի դերբայներ՝ *կատարելիք, կատարելու*, ժխտական դերբայ՝ *կարենար*: *Կրնամ* բայը ունի ապառնի, ներկայ, յարակատար, վաղակատար եւ ժխտական դերբայները՝ *կրնալու, կրնալիք, կրցող, կրցած, կրցեր, կրնար*: Աներեւոյթի ուղիղ ձեւը չի գործածուիր, բայց ազատօրէն կը գործածուին *կրնալու, կրնալէ, կրնալով* հոլովածեւերը: Սահմանական ներկայ եւ անկատար ժամանակներն ու ըղձական ձեւերը նոյնն են՝ *կրնամ, կրնայի*, կատարեալը՝ *կրցայ, ապառնին՝ պիտի կրնամ, պիտի կրնայի*: Սահմանական եղանակի ներկայ ժխտականը՝ *չեմ կրնար, չես կրնար, չի կրնար*, անկատարը՝ *չէի կրնար, չէիր կրնար...:*

Կարենալ/կրնամ բայը ներգործական է. այլ բայերու աներեւոյթին հետ կապակցութիւններ կը կազմէ ու ինքն է, որ փոփոխութեան կ'ենթարկուի իբրեւ գլխաւոր անդամ՝ քալել **կարենալ**, խմել **չկարենալուս** համար. դիմանալ **կարենալէն**, երթալ **կարենայի**, համբերել **կարենայիք**, տեսնել **չկրնալով**, տեսնել **չկրցած** գործս, ուտել **չկրցայ** եւ այլն:

Կը լրացուին կարողանալ կանոնաւոր բայով:

5.22.– Տարահիմք բայեր

Ասոնք անցեալ կատարեալի հիմքի ժամանակներուն մէջ կը խոնարհուին տարբեր հիմքով, այսինքն՝ տարբեր բայարմատով: Աներեւոյթին հիմքին հակառակ՝ բայարմատը ամբողջապէս կամ մասամբ տարբեր է: Կը կոչուին տարահիմք բայեր:

Դնել՝ դրած, դրեր. դրի, դրիր, դրաւ, դրինք, դրիք, դրին. դիր, դրէք.

Ձարնել՝ զարկած, զարկեր. զարկի, զարկիր, զարկաւ, զարկինք, զարկիք, զարկին. զարկ, զարկէք.

Ընել՝ ըրած, ըրեր. ըրի, ըրիր, ըրաւ, ըրինք, ըրիք, ըրին. ըրէ, ըրէք.

Ուտել՝ կերած, կերեր. կերայ, կերար, կերաւ, կերանք, կերաք, կերան. կեր, կերէք.

Տանիլ՝ տարած, տարեր. տարի, տարիր, տարաւ, տարինք, տարիք, տարին. տար, տարէք.

Ըլլալ՝ եղող, եղած, եղեր. եղայ, եղար, եղաւ, եղանք, եղաք, եղան. եղիր, եղէք.

Գալ՝ եկող, եկած, եկեր. եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան. եկոր, եկէք.

Դառնալ՝ դարձող, դարձած, դարձեր. դարձայ, դարձար, դարձաւ. դարձանք, դարձաք, դարձան. դարձիր, դարձէք.

Երթալ՝ գացող, գացած, գացեր. գացի, գացիր, գնաց, գացինք, գացիք, գացին. գնա՛, գացէ՛ք.

Իյնալ՝ ինկող, ինկած, ինկեր. ինկայ, ինկար, ինկաւ, ինկանք, ինկաք, ինկան. ինկիր, ինկէ՛ք.

Տալ՝ տուող, տուած, տուեր. տուի, տուիր, տուաւ, տուինք, տուիք, տուին. տո՛ւր, տուէ՛ք:

5.23.– Բային շարահիւսական պաշտօնները

Բայը նախադասութեան կազմութեան մէջ գլխաւոր անդամի պաշտօն կը կատարէ իր երկու դերերով՝ ստորոգիչի կազմութեամբ եւ անդէմ նախադասութեան գլխաւոր անդամ ըլլալով:

Դիմաւոր բային շարահիւսական գլխաւոր պաշտօնը ստորոգիչի դեր կատարելն է:

Ստորոգիչը եւ ենթական նախադասութեան գլխաւոր անդամներն են. անոնք կը համաձայնին թիւով ու դէմքով՝ *Ինքնաշարժը կը սուրայ: Ինքնաշարժները կը սուրան:* Ստորոգիչը կը գտնենք ենթակային վրայ դնելով *Ինչ կ'ընէ, ինչ կ'ըլլայ եւ ինչ է (ո՛վ է)* հարցումները:

Ստորոգիչը կ'ըլլայ երկու տեսակ՝ պարզ եւ բաղադրեալ:

Պարզ ստորոգիչը արտայայտուած կ'ըլլայ համադրական, զուգադրական, յարադրաւոր եւ *տալ* յարադիրով կազմուած պատճառական բայերու պարզ եւ բաղադրեալ ժամանակներով:

Աշակերտը պարտականութիւնը կը գրէ: – Պարզ բայ, պարզ ստորոգիչ:

Աշակերտը պարտականութիւնը գրած է: – Բաղադրեալ բայ, պարզ ստորոգիչ:

Աշակերտը պարտականութիւնը գրած պիտի ըլլայ: – Երկրորդական կարգի բաղադրեալ բայ, պարզ ստորոգիչ:

Գողը առաւ տարաւ յիշատակներս: – Առնել տանիլ, զուգադրական բայ, պարզ ստորոգիչ:

Ուսուցչուհին իր նիւթը սիրելի փուսու աշակերտներուն: –
Սիրելի տալ, պատճառական բայ, պարզ ստորոգիչ:

Բարդ ստորոգիչը արտայայտուած կ'ըլլայ երկու կամ աւելի անդամներով. մէկը էական բայն է, իսկ միւրը՝ նիւթական իմաստով որեւէ բառ, բայց ոչ՝ դիմաւոր բայ: Բայական մասը կը կոչուի **հանգոյց**, իսկ նիւթական մասը՝ **ստորոգելի**: Օրինակ՝

Ես ուսուցիչ եմ: – Ուսուցիչ՝ գոյական, ստորոգելի. եմ՝ էական բայ, հանգոյց:

Դուն ներկայ չէիր: – Ներկայ՝ ածական, ստորոգելի. չէիր՝ էական բայ, հանգոյց:

Հանգոյցի դերով հանդէս կու գայ ոչ միայն պակասաւոր էական բայը՝ *եմ*, այլեւ *ըլլալ* տարահիմք բայը եւ այնպիսի բայեր, որ տուեալ կապակցութեան մէջ չունին նիւթական իմաստ, այլ ստորոգելիին հետ միասին կը կազմեն բայական ամբողջութիւն մը: Առնենք *ընել* բայը. *Ես գործը ըրի* նախադասութեան մէջ *ըրի* բայը ստորոգիչ է, ներգործական բայ, ենթական (եւ) գործողութիւնը կը կատարէ *գործը* ուղիղ խնդիրին վրայ, բայց *Ես պտտիլը գործը ըրի նախադասութեան մէջ* ենթական նոյնն է (եւ), ուղիղ խնդիրը՝ *պտտիլը*, իսկ ստորոգիչը՝ *գործը ըրի*: Հոս *գործ* գոյականը ստորոգելի է, իսկ *ըրի* բայը՝ հանգոյց:

Ստորոգելին կրնայ արտայայտուած ըլլալ մէկ բառով կամ ամբողջ բառակապակցութեամբ մը.

Ես ուսուցիչ եմ:

Ես Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի եմ:

Կրնայ բազմակի ըլլալ, ուր ստորոգելիի դերով հանդէս կու գան մէկէ աւելի անդամներ.

Աշակերտը աշխատասէր, ուշիմ, կիրթ ու գիտակից է:

Բազմակի ստորոգելիները կը տրոհուին ստորակէտով. վերջին երկուքը սովորաբար կրնան տրոհուիլ *ու, եւ, կամ* շաղկապներով:

Ստորոգելիի դերով հանդես կու գան գոյականի կամ գոյականաբար գործածուող բառերու ուղղական, սեռական, տրական, բացառական եւ գործիական հոլովները, դերանունները, կապական դարձուածքները, ածականները, թուականները, մակբայները, անկախ դերբայները, բայց ոչ դիմաւոր բայերը:

Հայերէնի մէջ կայ *անենթակայ նախադասութիւն* կոչուող երեւոյթ մը: Հոս գլխաւոր անդամը դարձեալ դիմաւոր բայն է, որ միշտ Գ. դէմքով կը գործածուի: Այս բայերը կը կոչուին միադիմի բայեր, բայց իրենց իմաստով յստակ ու որոշ կերպով գործող կամ եղող բանի մը ինչ կամ ճկ ըլլալը ցոյց չեն տար: Ենթական կարելի չէ վերականգնել: *Օրինակ՝ Երկաթը փաք-փաք կը ծեծեն: Չարէն հեռու մնալու է: Շուրով պիտի ամպոտի: Պէտք է դիմադրել:* Այս նախադասութիւններուն մէջ ստորոգիչը Գ. դէմք է, բայց կատարուող գործողութիւնը մէկուն չի վերագրուիր:

Միադիմի անուանումը պայմանական անուանում է, որովհետեւ այս նախադասութիւնները իրական ենթակայով մը օժտելու պարագային՝ կը ստանան բայական բոլոր թիւերն ու դէմքերը: *Օր.՝ Դարբինները երկաթը փաք-փաք կը ծեծեն: Դուն չարէն հեռու մնալու ես: Երկինքը շուրով պիտի ամպոտի:* Միադիմի անուանումը կը յարմարի *պէտք է, հարկաւոր է, անհրաժեշտ է* կապակցութիւններուն միայն:

Անենթակայ նախադասութիւնները կ'ըլլան:

– Բնութեան երեւոյթներ արտայայտող բայի եզակի Գ. դէմքով՝ *Ե՞րբ պիտի լուսնայ: Կ'անձրեւէ: Շուրով պիտի ձիւնէ:*

– Բայի յոգնակի Գ. դէմքով, ժողովրդական առածներ՝ *Ձուկը գլուխէն կը բռնեն: Անցած անձրեւին հովանոց չեն բանար: Թեթեւ քարը հեռու կը նետեն:*

– Բայի բաղադրեալ ապառնի եզակի Գ. դէմքով, ասացուածքներ ու խորհուրդներ՝ *Չարէն միշտ հեռու մնալու է: Օձին գլուխը կտրելու է:*

Աներեւոյթի կամ անորոշ դերբայի ամենէն կարեւոր պաշտօններէն մէկը անդէմ նախադասութեան կազմութիւնն է: Անդէմ նախադասութիւնը դէմք չունի, հետեւաբար դիմաւոր բայով արտայայտուած ստորոգիչ չունի: Նոյնպէս՝ ենթակայ չ'ունենար:

Չծխել:

Անթերի կարարել պարտականութիւնը:

Ո՞ր երթալ:

Ինչպէ՞ս հասնիլ նպատակին:

Սիրել ու կրկին սիրել խնդագին:

Անդէմ նախադասութիւնները անորոշ դերբայը իբրեւ գլխաւոր անդամ ունեցող նախադասութիւններ են: Գլխաւոր անդամը լրացումներ կրնայ ունենալ կամ չունենալ: Ասոնք ընդհանրապէս կ'արտայայտեն գործողութեան իղձ, հրահանգ կամ հարցում գործողութեան մասին:

Անորոշ դերբայով կազմուած անդէմ նախադասութիւնը՝ կարելի է վերածել դիմաւոր նախադասութեան.

Մի՛ ծխէք:

Անթերի՛ կարարեցէք պարտականութիւնը:

Ամբողջապէս անդէմ նախադասութիւններով բանաստեղծութիւններ ալ կան մեր դասականներու գործերուն մէջ. այդպէս է Ռուբէն Սեւակի «Երթալ» բանաստեղծութիւնը:

Աննիւթանա՛լ, անրջանա՛լ, վսեմ, վէս.

Երթալ անցանձ, անանձ, երթալ վերջապէս

Աչքերը գոց՝ ցայգաշրջիկ խեղճին պէս... (ՌՍ):

2.- ՄԱԿԲԱՅ

6.1.- Մակբայը իբրև խօսքի մաս

Մակբայ կը կոչուին այն բառերը, որոնք ցոյց կու տան գործողութեան տեղ, ժամանակ, ձեւ, չափ ու քանակ եւ կը պատասխանեն *ինչպէ՛ս, ե՛րբ, ո՞ր, որքա՛ն* հարցումներուն.

Կը շարժի > **դանդաղ** կը շարժի: – Ինչպէ՛ս կը շարժի:

Կու գայ > **հիմա** կու գայ: – Ե՛րբ կու գայ:

Գնաց > **առջեւ** գնաց: – Ո՞ր գնաց:

Խօսեցաւ > **շար** խօսեցաւ: – Որքա՛ն խօսեցաւ:

Մակբայը կը դրուի նաեւ նաեւ ածականին, թուականին, դերանունին, մակբային եւ գոյականին վրայ՝ ցոյց տալով առարկային յատկանիշին յատկանիշը եւ կը պատասխանէ նոյն հարցումներուն: Այսպէս՝

Ածականին վրայ.

Հասուն խնձոր

> **Շար** հասուն խնձոր

Գեղեցիկ գործ

> **Խորապէս** գեղեցիկ գործ

Թուական վրայ

Տասը հոգի

> **Հազիւ** տասը հոգի

> **Մօտաւորապէս** տասը հոգի

Դերանունին վրայ

Բոլոր զինուորները

> **Գրեթէ** բոլոր զինուորները

Ամեն մարդ

> **Հաւանաբար** ամեն մարդ

Ամբողջ գիւղը

> **Գրեթէ** ամբողջ գիւղը

Մակբային վրայ

Արագ կը քալէ

> **Շար** արագ կը քալէ:

Շար կը խօսի

> **Չափազանց** շար կը խօսի:

Գոյականին վրայ, երբ գոյականը բայանուն է, այսինքն՝ կանմ բայարմատ է, կանմ բայարմատէ յառաջացած բառ մըն է. *խաղալ՝ խաղ, լողալ՝ լող, վազել՝ վազք, գովել՝ գովք, թռչիլ՝ թռչք, ընթանալ՝ ընթացք, նայիլ՝ նայուածք, փախիլ՝ փախուստ, շարժիլ՝ շարժում*: Այսպիսի գոյականներու հետ մակբայը կը գործածուի ածականին պէս ու կը պատասխանէ ածականի հարցումներուն՝ *ո՞ր եւ ինչպիսի՞նք*.

- Արագ կը վազէ:* > *Արագ վազք*
- Սրբանց կը մաղթէ:* > *Սրբանց մաղթանք*
- Դանդաղ կը շարժի:* > *Դանդաղ շարժում*

Որակական ածականներն ալ կրնան գործածուիլ մակբայաբար.

- Հմայիչ երգ* > *Հմայիչ կ'երգէ:*
- Լաւ բնատրոյթին* > *Լաւ կը խօսի:*
- Գէշ սովորութիւն* > *Գէշ կը վարուի:*
- Սիրուն գիր* > *Սիրուն կը գրէ:*

Մակբայները անթեք բառեր են. այսինքն խօսքի մէջ փոփոխութիւններու չեն ենթարկուիր՝ ***յանկարծ անծրեւեց, արագ վազեց, դեռ չեկաւ, խմբովին մեկնեցան, մեծապէս գնահատուեցաւ, ներքուստ ուրախացաւ***: Ձեւափոխուելով՝ մակբայները կը դադրին մակբայ ըլլալէ. ***գիւղէ գիւղ պտտեցանք, բառ առ բառ սորվեցանք***. հոս *գիւղ* ու *բառ* բառերը այս կապակցութիւններէն դուրս բերելով՝ կը դադրին մակբայ ըլլալէ:

Ցուցական դերանուններէն որոշ շարքեր ունին մակբայական նշանակութիւն՝ *հոս, հոն, այստեղ, այդտեղ, այնտեղ* (տեղի), *այսքան, այդքան, այնքան, նոյնքան* (չափ ու քանակի), *այսպէս, այդպէս, այնպէս, նոյնպէս* (ձեւի) եւ այլն: Նոյնպէս տեղի, ժամանակի, չափի, ձեւի, պատճառի հարցականները՝ *ո՞ր, ե՞րբ, որքան, ինչպէ՞ս, ինչո՞ւ*:

6.2.– Մակբայները ըստ իմաստի

Ըստ իմաստի՝ մակբայները կ'ըլլան որակի կամ ձեւի, տեղի, ժամանակի եւ չափ ու քանակի մակբայներ:

ա) **Որակի** կամ **ձեւի** մակբայներ, ինչպէս՝ *աղէկ, արագ, կամաց, դանդաղ, միասին, յանկարծ, ի զուր, հեւ ի հեւ, վազն ի վազ, վանկ առ վանկ, բառ առ բառ, ծուռ-ծուռ, մեծ-մեծ, քաջաբար, մեծապէս, ամբողջապէս, անմիջապէս, լիովին, հիմնովին, միամտորէն, ազնուորէն, ներքուստ, արտաքուստ* եւ այլն: Ասոնք ցոյց կու տան գործողութեան կատարման ձեւը. կը պատասխանեն **ինչպէս** հարցումին. **խմբովին մեկնեցան, մեծապէս գնահատեցին, ուղղակի դիմեցին, միասին կը ճամբորդեն, բառ առ բառ կը կարդան, քաջաբար կոուեցան:**

բ) **Ժամանակի** մակբայներ, ինչպէս՝ *հիմա, այժմ, ներկայիս, արդ, երբեմն, մերթ, մերթ ընդ մերթ, դեռ, շուր, կանուխ, միշտ, յար, տակաւին, ժամ առ ժամ, շարունգ, վերջապէս, ի վերջոյ, օրէ օր* եւ այլն: Ասոնք ցոյց կու տան գործողութեան կատարման ժամանակը. կը պատասխանեն **էրբ** հարցումին՝ **հիմա եկաւ, երբեմն կը հանդիպի, միշտ ներկայ է, շարունգ վերադարձած է, շուր կը վերադառնաս, կանուխ եկաւ, յետոյ կը խօսինք:**

Ետքը, ետքէն, վերջը, վերջէն բառաձեւերը խօսակցական ծագում ունին՝ *ետքը կու գամ, ետքէն կը տեսնուինք*. գործածել *յետոյ* մակբայը՝ *յետոյ կու գամ, յետոյ կը տեսնուինք:*

գ) **Տեղի** մակբայներ, ինչպէս՝ *վար, վեր, մէկդի, ամենուր, ետեւ, առջեւ, վերեւ, ներքեւ, դէմ առ դէմ, գիւղէ գիւղ, տեղէ տեղ, տեղ-տեղ, դէմ-դիմաց, տեղնուտեղը, հեռուէ հեռու* եւ այլն: Ասոնք ցոյց կու տան գործողութեան կատարման տեղը. կը պատասխանեն **հոր** հարցումին՝ **վեր եկուր, մէկդի գնա, գիւղէ գիւղ պտտեցաւ, դէմ դիմաց կեցանք:**

Մեծ թիւ կը ներկայացնեն բացառական հոլով-ուղիղ ձեւ կրկնաւոր գոյականներէ կազմուած մակբայները *դռնէ դուռ, տեղէ տեղ, տունէ տուն, հեռուէ հեռու:*

դ) **Չափ ու քանակի** մակբայներ, ինչպես՝ *չափազանց, քանիցս, բազմիցս, յոյժ, ամբողջովին, լիովին, բնաւ, մասամբ, քիչ-քիչ, շար-շար* եւ այլն: Ասոնք ցոյց կու տան յատկանիշին չափը եւ գործողութեան կատարման քանակը. կը պատասխանեն *որքան* հարցումին՝ *յոյժ կարեւոր խնդիր, լիովին յաջող աշխատանք, մասամբ գոհացուցիչ ներկայացում, բազմիցս հանդիպած ենք, քիչ մը համբերէ, քիչ-քիչ կը սորվիմ*:

Կարգ մը մակբայներ միաժամանակ կրնան պատասխանել տարբեր հարցումներու ու ընկալուիլ տարբեր իմաստներով.

Հեռուէ հեռու տեսայ (տեղի եւ ձեւի):

Անմիջապէս եկուր (ժամանակի եւ ձեւի):

Անդադար կը պարտի (ժամանակի, ձեւի եւ չափի):

Դեռ կը խօսի (ժամանակի եւ չափի):

Կամ տարբեր իմաստ կ'արտայայտեն տարբեր նախադասութիւններու մէջ.

Շուրջ վերադարձաւ (ժամանակի):

Շուրջ գրէ (ձեւի):

Բերնէ բերան լեցուեցաւ (չափի):

Լուրը **բերնէ բերան** տարածուեցաւ (ձեւի):

Այս մակբայները կը կոչուին **ընդհանրական** մակբայներ:

Կան հոմանիշ մակբայներու շարքեր՝ *հիմա, այժմ, ներկայիս, արդ, հիմակուհիմա, առ այժմ. ումպէտս, ի զուր. երբեմն, երբեմն-երբեմն, մերթ, մերթ ընդ մերթ. միշտ, յար, յաւէտ, յաւիտեան, յաւիտենապէս, յաւերժօրէն. ի վերջոյ, վերջապէս. դեռ, տակաւին. յոյժ, չափազանց. երբեք, բնաւ* եւ այլն: Ասոնք ունին կիրառական եւ իմաստային իւրայատկութիւններ. միշտ չէ որ փոխարինելի են:

Մակբայի իմաստային բովանդակութեամբ ալ պայմանաւորուած է խօսքի մէջ անոր ունեցած շարահիւսական պաշտօնը: Մակբայը խօսքի մէջ կը կատարէ տեղի, ժամանակի, ձեւի, չափ ու քանակի պարագայի շարահիւսական պաշտօնները:

Առջեւ գնա: – Տեղի պարագայ:

Յեղոյ կը տեսնուիք: – Ժամանակի պարագայ:

Բառ առ բառ կարդացի: – Ձեւի պարագայ:

Քանիցս զգուշացուցի զինք: – Չափ ու քանակի պարագայ:

6.3.– Մակբայներուն կազմութիւնը

Մակբայները իրենց կազմութեամբ կ'ըլլան.

ա) Պարզ բառեր, ինչպէս՝ *շատ, քիչ, շուտ, կանուխ, ուշ, վեր, վար, նախ, ապա, մերթ, յոյժ, շուտ, առաջ, դանդաղ* եւ այլն:

բ) Ածանցաւոր, ինչպէս՝ *անպայման, անյապաղ, անդադար, վերստին, տակաւին, միասին, ընդերկար* եւ այլն:

Կան մակբայակերտ ածանցներ. ասոնք գոյականներէն եւ ածականներէն մակբայներ կը շինեն.

ազին՝ սրտազին, ուժգին, մոլեգին, պաղատագին.

ապէս՝ մեծապէս, վերջապէս, յարկապէս, անձնապէս, հոգեպէս.

աբար՝ հայրաբար, եղբայրաբար, քաջաբար, ծուլաբար.

օրէն՝ ազնուօրէն, փաստօրէն, շքեղօրէն, սերտօրէն, լայնօրէն.

ովին՝ ամբողջովին, լիովին, կամովին, խմբովին, հիմնովին.

ակի՝ շեշտակի, ուղղակի, շեղակի, համառօտակի.

այն՝ միանգամայն, լռելեայն.

ովի՝ մտովի, իրովի, ծալովի, վճարովի.

անց՝ սրտանց, երեսանց.

ուստ՝ արտաքուստ, ներքուստ.

ին՝ վերստին, տակաւին:

Երբեմն պարզ մակբայներն ալ այսպիսի ածանցներով հանդէս կու գան ուրիշ մակբայի մը դերով. *նախ՝ նախապէս, կանուխ՝ կանխապէս, միշտ՝ մշտապէս, դանդաղ՝ դանդաղօրէն, միասին՝ միասնաբար*, կամ պարզապէս իբրեւ տարբե-

րակ. *արագ՝ արագորեն, սաստիկ՝ սաստկորեն, յանկարծ՝ յանկարծորեն, անպանման՝ անպայմանորեն*: Եթէ իմաստա-
յին խնդիր չկայ՝ նախընտրելի են պարզ ձեւերը:

Պէտք է խուսափիլ կրկնակի մակբայակերտ ածանցնե-
րով կազմութիւններէն. *ուղղակի՝ ուղղակիորեն, շեշտակի՝
շեշտակիորեն, շեղակի՝ շեղակիորեն, յանկարծակի՝ յանկար-
ծակիորեն, անցողակի՝ անցողակիորեն*:

Աբար, օրէն, ապէս ածանցները նոյն արմատէն կը
շինեն հոմանիշ տարբերակներ՝ *հայրաբար-հայրօրէն, գե-
ղեցկաբար-գեղեցկօրէն-գեղեցկապէս, եղբայրաբար-եղբայ-
րօրէն եղբայրապէս, բնականաբար-բնականապէս-բնակա-
նօրէն, մայրաբար-մայրօրէն, մտերմաբար-մտերմօրէն, վայ-
րագաբար-վայրագօրէն, նենգաբար-նենգօրէն, հայօրէն-հա-
յավարի* եւ այլն:

գ) Ածականներն ու գոյականները *ծելով, կերպով* եւ
եղանակով բառերուն հետ գործածուելով ձեռք կը բերեն մակ-
բայական նշանակութիւն՝ ***փայլուն ձեւով պաշտպանեց իր
տեսակէտը, գերազանց կերպով աւարտեց մրցումը, ընդուն-
ուած եղանակով կատարուեցաւ ընդունելութիւնը***, ասկէ՝ այս
բառերուն գործածութիւնը անցած է նաեւ մակբայներուն.
մերժելի է:

- Ուղղակի կերպով հարցուց* > *Ուղղակի հարցուց*
- Լռելեայն ձեւով հասկցայ* > *Լռելեայն հասկցայ*
- Դանդաղ կերպով կ'ընթանար* > *Դանդաղ կ'ընթանար*

Շարք մը ածականներ կրնան առանց մակբայական
ածանցի ալ իբրեւ մակբայ գործածուիլ՝ *գեղեցիկ գծէ, լաւ ներ-
կայացիր, փայլուն երեւցիր, մաքուր գրէ, սահուն կարդա,
պայծանճ մտածէ...*

դ) Մակբայակերտ է նաեւ *մը* յօդը, որ կը դրուի մակբայնե-
րու վրայ եւ անոնց կու տայ սաստկական նշանակութիւն մը
*կամացուկ մը, կամաց մը, շուտ մը, շատ մը, աղէկ մը, արագ
մը*, նաեւ ածականներու վրայ՝ զանոնք մակբայներու վերածե-

լով՝ աղուոր մը յանդիմանեցի, սիրուն մը սանտրեցի, լաւ մը պահարակեցի, թեթեւ մը հասկցուցի: Այս ձեւերը ունին խօսակցական ծագում: Շուրմէն մակբայը ունի լայն գործածութիւն, բայց մերժուած է գրական լեզուին կողմէ՝ շուրմէն վերադարձիր, շուրմէն պատասխանէ:

ե) Գրաբարի հոլովական կամ խոնարհման քարացած ձեւեր, ինչպէս՝ *հագի, խստի, դիւրաւ, բնաւ, երբեք, փութով, շուրով, մասամբ, դիւրմամբ, անձամբ, ձեռամբ, մեծաւ մասամբ, նախօրօք, արեւօք, առօք-փառօք, այսուհետեւ, յոյնկայս, յանիրաւի, նորէն, արդէն, համարեա՛մ, գրեթէ, դարձեալ, շարունց եւ այլն:*

Նոր լեզուին մէջ ձեւի պարագայի պաշտօնով հանդէս կու գան բացառական եւ գործիական հոլովները: Շարք մը բաներ ունին մնայուն մակբայական նշանակութիւն ու փոխարինելի են հոմանիշ մակբայով, ինչպէս՝ *մէկէն (յանկարծ), երթալէն, երթալով (հետզհետէ) եւ այլն:*

Այսուհետեւ մակբայի համարժէք գործածութեամբ հանդէս կուգայ *յետ այսու* սխալ կազմութիւնը. պէտք է ըլլար *յետ այսորիկ՝ Եւ յետ այսորիկ ետ հրաման՝ (Ազաթանգեղոս)*: Լայն կիռարութիւն ունի թէ՛ արեւմտահայերէնի եւ թէ՛ արեւելահայերէնի մէջ: Սխալ ձեւ է նաեւ *այսուհետ* տարբերակը:

զ) Խոնարհման հին ձեւերէն՝ նախդրաւոր կապակցութիւններ. *ի վերջոյ, ի սրտէ, ի մօտոյ, ի զուր, առ նուազն, առ յաւէտ, առ այժմ, առ յաւէտ, ցմահ, ցարդ, ցմրուր, ցկեանս, հետզհետէ...*

Ի զուր մակբայը ոմանք կը գործածեն *տեղ բառով՝ ի զուր տեղ*. մերժել: *Ումպէտս* մակբայը ոմանք կը գործածեն *յումպէտս* ձեւով. մերժել:

է) Բարդութեամբ.

– իսկական բարդութիւն՝ *բարձրաձայն, չափազանց, միաբերան, միաժամանակ, շուրափոյթ, ձեռամբարձ, սրտափրոփ...*

– կցականներով՝ վեր-վար, շարտէն-քիչէն, գէշ-աղէկ, ուշ-կանուխ, կամայ-ակամայ, ուզած-չուզած, նախադրաւոր յարադրութիւններով՝ օրն ի բուն, վեր ի վարոյ, փոքր ի շարտէ եւ այլն:

– Կրկնաւորներով՝ ուշ-ուշ, ստէպ-ստէպ, արեն-արեն, կամաց-կամաց, քիչ-քիչ, շուր-շուր, պատահ-պատահ...

– նախդրաւոր կրկնաւոր յարադրութիւններ՝ քայլ առ քայլ, դէմ առ դէմ, րոտ առ րոտ, վերջ ի վերջոյ, հեւ ի հեւ, օրըստօրէ, հետզհետէ, մերթ ընդ մերթ, մէջ ընդ մէջ...: Նախդրաւոր կցականներ՝ օրըստօրէ, հետզհետէ:

– բացառական հոլով+ուղիղ ձեւ կապակցութիւններ կը կազմեն ժամանակի եւ տեղի մակբայներ՝ օրէ օր, ժամէ ժամ, րարուէ րարի, գիւղէ գիւղ, րունէ րուն, րեղէ րեղ, բերնէ բերան...: Ոմանք երկու բաղադրիչները գծիկով կը բաժնեն. ւաւելրդ է, որովհետեւ ձեւաբանաօրէն բացատրելի է:

– շաղկապաւոր յարադրութիւններով՝ աջ ու ձախ, վեր ու վար, ետ ու առաջ, րակնուվրայ, րեղնուրեղը եւ այլն:

Մեր երկու գրականները մակբայ խօսքի մասին մէջ էական տարբերութիւններ չունին, տարբերութիւնը բառային մակարդակի վրայ կ'երեւի միայն. օրինակները կը բերենք արեւմտահայերէն-արեւելահայերէն հակադրութեամբ. շարտնց-վաղուց, վաղը-էգուց, հիմա-հիմի, առջեւ-առաջ, արենօք-ժամանակին, արեն-արեն-ժամանակ առ ժամանակ, րակաւին-դեռեւս, կանուխ-վաղ, վեր-վերեւ, վար-ներքեւ, ետ-յետ եւ այլն: Օրէն մակբայակերտ ածանցը ւաւելի գործուն է արեւմտահայերէնի մէջ՝ հայօրէն, պարզօրէն, հայրօրէն, անհրաժեշտօրէն, եղբայրօրէն եւ այլն, իսկ վարի ածանցը արեւելահայերէնի մէջ՝ հայավարի, մարդավարի, քաղաքավարի եւ այլն: Կան միայն արեւմտահայերէնի յատուկ մակբայներ՝ աղուոր, աղէկ, հիմակ, հիմակուրնէ, հիմակուց, օր մը օրանց, միս-մինակ, արեն-արեն, արենին, արենօք, առջի անգամ, առջի օր, գալ րարի, հիմակուհիմա, կողք կողքի, արեն-արեն, մէկդի, մէկէնիմէկ, նորէն, պզտիկուց, վաղը, վաղը-վաղը եւ այլն:

Է.- ԿԱՊ

7.1.- Կապը իբրև խօսքի մաս

Կապ (հոլավառու, առընթերադրություն, նախադրություն) խօսքի մասին մէջ կը մտնեն այն բառերը, որ կը գործածուին գոյականին ու դերանուններուն հետ ու անոնց կու տան հոլովական իմաստ մը, ճիշդ այնպէս ինչպէս պիտի ընէր հոլովական մասնիկ մը: Օր.՝ արեւելահայր կ'ըսէ *Ջրում մի ձուկ կայ*, իսկ արեւմտահայր՝ *Ջուրին մէջ ձուկ մը կայ*: Հոս ինչ որ արեւելահայր արտայայտեց *ջրում* ներգոյական հոլովով՝ արեւմտահայր արտայայտեց *ջուրին մէջ* դարձուածքով: *Մէջ* բաղադրիչը *կապ* է, իսկ *ջուրին* հոլովուած գոյականը՝ *կապի խնդիր*: Կապն ու կապի խնդիրը միասնաբար կը կազմեն *կապական դարձուածքը*, որ նախադասութեան մէջ կը դառնայ մէկ անդամ եւ կը պատասխանէ ստորոգիչին:

Ջուրին մէջ սուզուեցաւ: – Ո՞ւր սուզուեցաւ – *ջուրին մէջ*:

Պլպուլի պէս կորաւ եարս: – Ինչպէ՞ս կորաւ – *պլպուլի պէս*:

Դասէն ետք հանդիպեցանք իրարու: – Երբ – *դասէն ետք*:

Սա ալ կը նշանակէ, որ կապը մինակը նախադասութեան անդամ չի նկատուիր, իսկ անկախաբար գործածուելու պարագային ան արդէն կապ չէ, ուրիշ խօսքի մասի կը պատկանի: Օրինակներ՝

Առաջ բարեկամներ էինք (մակբայ, ժամանակի պարագայ): > **Գործէն առաջ խաչ հանէ** (կապ՝ *գործէն* կապի խնդիրին):

Մէջը որդնուրած է (գոյական, ուղղական հոլով, ենթակայ): > **Խնձորին մէջ որդ մը կայ** (կապ՝ *խնձորին* կապի խնդիրին):

Անդին գնա (ցուցական դերանուն, տեղի պարագայ): > **Սահմանէն անդին ինչ կայ** (կապ՝ *սահմանէն* կապական խնդիրին):

Ըստ գործածության տեղի՝ կապերը կ'ըլլան **նախադրութիւններ** եւ **յետադրութիւններ**:

Նախադրութիւններ են *առ, առանց, գերդ, ըստ, ի, ի դէմս, իբրեւ, ինչպէս, որպէս, յանձին, յանուն, վասն, յօգուտ, մինչեւ, նախքան, քան...*

Յետադրութիւններ են *առաջ, առջեւ, առթիւ, ի դէմ, դիմաց, կողմէ, համար, հետ, ետք, հետեւանքով, մասին, մէջ, միջոցով, միջեւ, մօտ, քով, ներքոյ, ներքեւ, նման, նպատակով, պէս, պատճառաւ, վերաբերեալ, վրայ, տակ, տեղ, փոխարէն* եւ այլն:

Կան կապեր ալ, որ կրնան թէ՛ նախադաս եւ թէ՛ յետադաս գործածուիլ, ինչպէս՝ *անկախ, բացի, հակառակ, համաձայն, հանդէպ, շնորհիւ, հեռու*: Ասոնք կը կոչուին **երկդրութիւններ**: Օր.՝ *Քեզմէ բացի ոչ ոք պատրաստուած է: > Բացի քեզմէ՝ ոչ ոք պատրաստուած է:*

7.2.– Կապերու տեսակներն ու քերականական իմաստները

Կապերը ըստ իրենց բառային ծագման հետ պահած իմաստային առնչութեան՝ կ'ըլլան երեք տեսակ. իսկական կապեր, անիսկական կապեր եւ կապական բառեր:

Իսկական են այն կապերը, որոնք արդի լեզուին մէջ միշտ ու միայն հանդէս կու գան իբրեւ կապ: Իսկական կապեր են *ի, առ, առանց, բացի, իբրեւ, համար, յանուն, նկատմամբ, շնորհիւ, առթիւ, ընդդէմ, հանդէպ, պէս, ի դէմս, ի հեճուկս, ի հաշիւ, վասն* եւ այլն: Օրինակ՝ *շնորհիւ* բառը, որ գրաբարի մէջ *շնորհ* գոյականի գործիական ձեւն է, արդի հայերէնի մէջ չունի ու չի կրնար անկախ գործածութիւն ունենալ, հանդէս կու գայ միայն կապական դարձուածքի մէջ ու կապի խնդիր գոյականը կ'օժտէ քերականական իմաստով մը՝ *Շօրս շնորհիւ յաջողութիւն արձանագրեցի*:

Անիսկական են այն կապերը, որոնք իրենց կապային արժէքէն դուրս կրնան անկախաբար գործածուիլ իբրեւ գոյական, ածական, մակբայ: Անիսկական կապեր են *քով, մօտ,*

մէջ, վրայ, տակ, շուրջ, դիմաց, միասին, զայր, առաջ, հակա-
նակ եւ այլն: Օրինակ՝ ջուրին մէջ կապական դարձուածքին
մէջ մէջ-ը կապ է ու ներգոյական յարաբերութեան մը մէջ կը
դնէ կապի խնդիրը, բայց անկէ դուրս բառը գոյական է, ունի
եզակի եւ յոգնակի թիւ ու հոլով եւ կրնայ անկախաբար գոր-
ծածուիլ ստանձնելով գոյականի բոլոր պաշտօնները:

Կան նաեւ *կապական բառեր*, որոնց շարքին կը մտնեն
կարգ մը գոյականներու տրական, բացառական եւ գործիա-
կան հոլովները, որոնք իրենց անկախ գործածութենէն ան-
կախ, որոշ կապակցութիւններու մէջ առաւելաբար կը յայտ-
նաբերեն յարաբերութեան իմաստ:

Երեկոյթի ընթացքին նուիրապտութիւններ եղան:

Ասոնց պարագային ընտրութիւն կատարել պէտք է:

Մարդուն երեսէն վնաս ունեցանք:

Մեր ձեռքով գործը առաջ տարինք:

Հոս ընթացքին, պարագային, երեսէն եւ ձեռքով բառերը
կապական բառեր են: Նոյն բառի տարբեր ձեւերը կրնան ըլ-
լան իսկական կապեր եւ կապական բառեր, այսպէս՝ *պատր-
ճառաւ, նպատակաւ, ձեռամբ, առթիւ, ի սէր* իական կա-
պեր են, իսկ *պատրճառով, նպատակով, ձեռքով, առիթով, սի-
րոյն*՝ կապական բառեր:

Կապերը ըստ իրենց արտայայտած յարաբերութեան եւ
կամ քերականական իմաստի՝ կ'ըլլան.

– **Տարածական՝** *առջեւ, ետեւ, դիմաց, ներս, ի վար, ի
վեր, քով, տակ, վերեւ, ներքեւ* եւ այլն:

– **Ժամանակային՝** *ապտէն, ժամանակ, միջոցին, նախ-
քան, պահուն, օրօք, սկսեալ, ընթացքին, ի բուն:*

Մէջ, մօտ, դուրս, ի վեր, վրայ, առաջ, ետք, մինչեւ կապե-
րը ունին թէ տարածական եւ թէ ժամանակային նշանակու-
թիւններ.

տարուան մէջ – գիւղին մէջ

այդ պահէն դուրս – դպրոցէն դուրս

այդ օրէն ի վեր – լեռն ի վեր, հոսանքն ի վեր

*այդ դէպքին վրայ, այդ լուրին վրայ – ծառին վրայ
օրեր առաջ – կամուրջէն առաջ
օրեր ետք – գետէն ետք
առտուան մօտ, կէսօրուան մօտ – գետին մօտ, քաղաքին
մօտ:*

Մինչեւ առտու – մինչեւ տուն

*Մինչ բառը հիները ի նախդիրին հետ կը գործածէին նաեւ
իբրեւ նախադաս կապ մինչեւ իմաստով, Ես մինչ ի մահ, կա-
խաղան, մինչեւ անարգ մահու սին / Պիտի գոռամ, պիտ
կրկնեմ անդադար՝ ազատութիւն (ՄՆ), բայց նոր լեզուին մէջ
նախադաս ստորադաս շաղկապ է՝ Մինչ ես կը պատրաս-
տուէի մեկնելու՝ դուն ժամանեցիր: Մինչ-ը չգործածել մինչեւ
իմաստով:*

*Արեւմտահայերէնի համար խորթ է առաջ կապը առջեւ
իմաստով գործածելը՝ Տան առաջ ծառ մը կայ, պէտք է ըսել՝
Տան առջեւ ծառ մը կայ:*

*Տարածական իմաստով ներս եւ մէջ հոմանիշ են. ներս-ը
կարելի է փոխարինել մէջ-ով, բայց ոչ հակառակը. ներս կա-
պը կը գործածուի որոշակի շրջանակ մը նկատի ունենալով՝
հաստատութիւն, միութիւն, մասնագիտական բնագաւառ եւ
այլն. Արցախի զբօսաշրջային ոլորտէն ներս յաջողութիւններ
արձանագրուած են (Եո): Հայաստանի առողջապահական
ոլորտէն ներս բարեփոխումները անհրաժեշտ են (Ժմկ):
Արեան տուչութեան արշաւ «Ռապիօ-Սեւան»էն ներս: «Թոշ-
նոց Բոյն»էն ներս յատուկ բաժին մը պիտի վերակառուցուի ու
վերադասաւորուի:*

*Ետք, յետոյ եւ վերջ հոմանիշ բառերէն արեւմտահայերէ-
նը ետք-ը առանձնացուցած է իբրեւ կապ, յետոյ բառը իբրեւ
մակբայ, իսկ վերջ բառը իբրեւ գոյական.*

*Դասէն ետք կը հանդիպինք (ոչ՝ դասէն յետոյ կամ դասէն
վերջ):*

*Յետոյ կը հանդիպինք (ոչ՝ ետքը կամ ետքէն կը հանդի-
պինք):*

Վերջը կը հանդիպինք: Գործին վերջը մօտեցաւ: Վերջը լաւ ըլլայ:

Քով եւ մօտ կապերը տարածական նշանակութեամբ մօտիկ են իրարու: Քով կապը բանի մը կամ մէկու մը որուն հետ, մէջ կամ կողքին ըլլալը ցոյց կու տայ՝ Գիրքս Յակոբին քովն է: Մանուկը մեծ մօտ քով կը մնայ: Մօտ կապը տարածական մերձաւորութիւն կը ցուցնէ՝ գետին մօտ, քաղաքին մօտ. իմաստի այս մերձաւորութեան բերումով ալ մօտ կապը շատ անգամ կը գործածուի քով-ի փոխարէն:

Մօտ կապը սկսած է երեւիլ նաեւ այլ կապերու կամ կապական բառերու փոխարէն. այսպէս՝

– **Մէջ** կապի փոխան

Ծնողներուն մէջ դժգոհութիւն առաջացաւ:

Տղոց մէջ անհանդուրժողականութիւն կը նկատուի:

Ուսուցիչներուն մէջ մտահոգութիւն ստեղծեց:

Մեր մէջ օտարամոլութիւն մի՛ տարածէք:

Մարդոց մէջ կ'աճի արտագաղթելու փափաքը:

Զըսել՝ **Ծնողներուն մօտ** դժգոհութիւն առաջացաւ:

– **Կողմէ** կապին փոխան

Այս գիրքը գնահատուեցաւ **ընթերցողներուն կողմէ:**

Հայկական գինին փնտրուած է **իտալացիներուն կողմէ:**

Մեր գորգը սիրուած է **անգլիացիներուն կողմէ:**

Զըսել՝ Մեր գորգը սիրուած է **անգլիացիներու մօտ:**

– **Վերաբերութեան՝** մասին, նկատմամբ, վերաբերեալ, հանդէպ, գծով, ուղղութեամբ, շուրջ, վրայ:

Շուրջ կապը ունի տարածական եւ վերաբերութեան իմաստ՝ շէնքին շուրջ, ծառին շուրջ – խօսեցանք վերջին դէպքերուն շուրջ (մասին, վերաբերեալ):

Վրայ տարածական եւ ժամանակային կապը կը գործածուի նաեւ իբրեւ վերաբերութեան անուղակի խնդիր կապական դարձուածքի կապ՝ խօսեցանք վերջին դէպքերուն վրայ (մասին):

- **Բացառման՝ առանց, բացի, զայր, բացառությամբ:**
- **Պատճառի ու հիմունքի՝ համար, պատճառով, պատճառաւ, առթիւ, հետեւանքով, շնորհիւ, բերումով, հիման վրայ, սիրոյն, ի սէր, ի խնդիր:**

Հետեւանքով, շնորհիւ, բերումով կապերու փոխարէն վերջերս արեւմտահայ մամուլին մէջ սկսած է տարածում գտնել **արդիւնքով** կապական բառը՝ Օդանաւի վթարի **արդիւնքով** (հետեւանքով) զոհերու թիւը յայտնի չէ: Աթաթուրքը իշխանութեան եկաւ Հայոց Յեղասպանութեան **արդիւնքով** (բերումով): Կրակմարի պայմանաւորութիւնը ձեռք բերուած է ՀՀ եւ Արարկէյճանի պետերուն հանդիպման **արդիւնքով** (շնորհիւ): Մերժել:

- **Նպատակի՝ համար, յանուն, վասն, նպատակով, ի, առ ի:**

Առաջին երեքը հոմանիշ են: Վասն կապը կը հանդիպի գրաբարեան արտայայտութիւններու մէջ՝ Վասն հայրենեաց մեռար, դուն շար պարեցար (ՄՊ): Հայրենիքին համար, յանուն հայրենիքի:

Համար կապը ունի նաեւ պատճառի նշանակութիւն՝ Այս արարքիս համար պատժուեցայ: Օտարահպատակ ըլլալու համար մերժուեցայ: Քառասունը անցած ըլլալու համար զրկուեցայ խաղին մասնակցելէ: Նախընտրելի է գործածել պատճառաւ կապը:

Ի նախդիրը նոր հայերէնին մէջ ունի սահմանափակ գործածութիւն՝ Նոր հիմնաւորում մը ահաւասիկ՝ ի պաշտպանութիւն մեր տեսակէտին: Ձայնաւորէ առաջ ի նախդիրը յ գիրով կը կցուի բառին. նոր լեզուին մէջ եւս կը պահուի այս սկզբունքը. Յուրախութիւն մեր բարեկամներուն՝ կը յայտնենք...: Նոյն գործածութիւնը ունի նաեւ առ ի կապը՝ Առ ի տեղեկութիւն մեր յարգոյ յաճախորդներուն՝ կը յայտնենք...:

Փոխարինութեան՝ փոխարէն, փոխանակ, փոխան, տեղ, ի փոխարէն:

- **Համապատասխանութեան՝ ըստ, համաձայն, համապատասխան, հաւասար, համեմար:**

- **Ձեռի եւ նմանութեան՝** պէս, նման, ինչպէս, հանգոյն, իբրեւ:

Պէս կապը նաեւ ժամանակային իմաստ ունի՝ **Առիծի պէս** կը մոնչէ (ծեւի) - **Հասնելուդ պէս** (հասածիդ պէս) հեռաձայնէ (ժամանակային):

- **Բացայայտութեան՝** իբրեւ, որպէս:

- **Ընդդիմութեան եւ հակառակութեան՝** դէմ, ընդդէմ, յանդիման, դէմ յանդիման, ի հեճուկս:

Դէմ յանդիման յարադրաւոր կապը կ'արտայայտէ «դէմ, դէմ-դիմաց, առջեւ» իմաստները՝ Նուիրական հնչեղութիւն ունեցող բարեգարդման աշխատանքի մը **դէմ յանդիման** (Ռակ մամուլ): Գահաժառանգ դառնալէ ցարի մը վերջ՝ Մուհամմէդ իշխան լուրջ խնդիրներու **դէմ յանդիման** (Ժմկ): Լիբանան ապահովական ցնցումներու **դէմ յանդիման** կը գտնուի (Ազդ):

- **Հակառակ հիմունքի՝** հակառակ, չնայած:

- **Միասնութեան՝** հեպ, հանդերձ, մէկտեղ, միասին, համեմատութեամբ, հետեւողութիամբ:

Հեպ կապը միասնութեան յարաբերութիւն մը կ'արտայայտէ՝ **Գիրքին հեպ** գրիչ մըն ալ առաւ: **Հացին հեպ** պանիր ալ վերցուր: **Քրոջի հեպ** եկուր: Կը քալեմ **Յակոբին հեպ:** Կը կռուին **տղոց հեպ** թշնամիին դէմ: Կռուիլ, պատերազմիլ, պայքարիլ, մարտնչիլ բայերուն խնդիրին մէջ կապը պէտք է ըլլայ **դէմ**, բայց յաճախ **հեպ** կապը կը գործածուի: Պատերազմիլ բանի մը կամ մէկու մը **դէմ** եւ ոչ **հեպ:** Ժողովրդական լեզուին մէջ քարացած ձեւեր են **Ես ինծի հեպ կը կռուիմ**, **հոգիին հեպ կռուիլ:**

Եթէ տրական հոլովով յանգման խնդիր պահանջող բայերը փոխադարձութեան իմաստ մը ձեռք բերեն՝ խնդիրը կը դրուի **հեպ** կապին հետ: Այսպէս՝ Կը **հանդիպիմ իրողութեան** մը, կը **հանդիպիմ բեմադրիչին** (պատահաբար), բայց Կը **հանդիպիմ բեմադրիչին հեպ** (որոշուած): Այդպէս նաեւ՝ Վիգէն Սարգսեան **կը հանդիպի** Իրանի Արտաքին գործոց նախարարին **հեպ:** Նախագահը **կը հանդիպի** վարչապետ Նիկոլ Փաշինեանի **հեպ:** Հայաստանի Սփիւռքի նախարարին

տեղակալը **կը հանդիպի** երրօրյակն միութեան փորձագէտներուն հետ:

Կը համաձայնիմ բարեկամիս առաջարկին: Հայաստանի իշխանությունները չեն **համաձայնիր** այդ սկզբունքին: Բայց՝ Կը համաձայնիմ բարեկամիս հետ: Անգարան **կը համաձայնի** Մոսկուայի հետ: Յակոբ Փանոսեան **կը համաձայնի** այս մտքին հետ:

Փոխադարձութեան գաղափարի առկայութեան պարագային հետ կապը պայման կը դառնայ՝ Կը հաշտուիմ ընկերոջս հետ: Կ'ողջագուրուիմ ընկերոջս հետ: Այդպէս նաեւ խօսակցիլ, խորհրդակցիլ, կենակցիլ, հաղորդակցիլ, նամակցիլ մէկուն հետ, բայց եթէ գործողութիւնը միակողմանի է՝ տրական հոլովով խնդիր՝ աջակցիլ, ընկերակցիլ, ձայնակցիլ մէկուն:

Հետ ու միասին կապերը միատեղ չգործածել. չըսել Գոյքին **հետ միասին** փունը ծախեցին, այլ **գոյքին հետ** փունը ծախեցին կամ **գոյքով միասին** փունը ծախեցին:

Չըսել՝ Ընտանիքիս **հետ միասին** գացինք. պէտք է ըսել՝ Ընտանիքիս հետ գացի կամ՝ Ընտանիքս ու ես միասին գացինք: Հոս միասին բառը ձեւի մակբայ է:

- **Շահու՝** յօգուտ, համար, ի շահ:
- **Ներգործութեան՝** կողմէ:
- **Պայմանի՝** պարագային, պայմանով:

Դիմառնութեան՝ յանձին, յանձինս, ի դէմս: Յանձին կապը եզակի խնդրի, իսկ **յանձինս** կապը յոգնակի խնդրի հետ կը դրուին. **Յանձին** այս մարդուն՝ մենք շնորհալի մանկավարժի մը հետ գործ ունինք: Վեկասի Ս. Կարապետ եկեղեցին Օգոստոսի սկիզբը օժտուեցաւ նոր հոգետր հովիտով մը՝ **յանձին** Տ. Վահան Ա. քինյ. Կոստանտանի: Կեանքէն հրաժեշտ փուս ազնիւ եւ համեստ հայրենակից մը՝ **յանձին** Խաչիկ Տամարեանի: Քաղաքական կուսակցութիւն-խմբակցութիւնները, **յանձինս՝** ՀՅԴ-ի եւ «Բարգաւաճ Հայաստան»-ի...: Շնորհատրելի են բոլոր բարերարները՝ **յանձինս** տէր եւ փրկին Մայքըլ եւ Նայիրի Ապուլաքեաններու...:

Մերօրեայ գրաւոր խօսքին մէջ այս օրինաչափութիւնը մեծ մասով խանգարուած է:

Ի դէմս կապը կը գործածուի եզակի եւ յոգնակի խնդիրներու հետ՝ *Ի դէմս Սեֆիլեանի՝ ունեցանք հերթական քաղաքանտարկյալը: Ի դէմս Սփիւռքի նախարարութեան՝ ունինք լաւ հնարաւորութիւն մեր հայրենակիցները ներգրաւելու հայրենիքի վերելքի աշխատանքներուն մէջ: Ի դէմս այս փողոց՝ մեր ապագան աւելի պայծառ պիտի դառնայ:*

7.3.– Կապերուն խնդրառութիւնը

Կապերը կը տարբերին իրենց խնդրառութեամբ, այսինքն՝ կապի խնդիր գոյականէն կամ դերանունէն պահանջած հոլովով: Կապերը տարբեր հոլովով խնդիրներ կը պահանջեն: Այսպէս՝

ա) **Հայցական** հոլովով խնդիր կը պահանջեն *ի, առ, քան* հին նախադրութիւնները, որոնք մասնակիօրէն կը գործածուին նաեւ նոր լեզուին մէջ.

Գնա ի Մասիս, ան մեծ է քան զիս:

Թուղթ առ Երեւան: Աղօթք առ Աստուած:

Քան կապը նոր հայերէնի մէջ կ'առնէ ուղղական հոլովով խնդիր՝ *Դուն աւելի բարձրահասակ ես, քան ես:*

Հայցական հոլովով խնդիր կը պահանջեն նաեւ *ի վեր, ի վար, դէպի, մինչեւ, զերդ, առաջ, ետք, նախքան*. ոմանք հայցականի կողքին ունին նաեւ այլ խնդրառութիւններ. այսպէս՝

– *Ի վեր* կապը տեղի պարագայ դարձուածքին մէջ կը պահանջէ հայցական հոլովով խնդիր՝ **Հոսանքն ի վեր կը թիալարէ:** **Գագաթն ի վեր կը բարձրանանք**, բայց ժամանակի պարագայի մէջ բացառական հոլովով՝ **այն պահէն ի վեր, քննութենէն ի վեր:**

– *Դէպի* եւ *մինչեւ* կապերը հայցական հոլովով խնդիր կ'առնեն՝ *դէպի* կամ *մինչեւ* փուն, *դէպի* կամ *մինչեւ* յաղթանակ, բայց անձնական դերանուններուն հետ կը պահանջեն տրական հոլովով խնդիր՝ *դէպի* կամ *մինչեւ* *ինձի, մեզի, քեզի* եւ այլն:

– *Առաջ, ետք, ասդին, անդին, հեռու* կապերը քանակ արտայայտող բառերէն կը պահանջեն հայցական հոլով՝ *տարի մը կամ տարիներ առաջ կամ ետք, երկու օր առաջ կամ ետք, հինգ մէթր ասդին կամ անդին, երկու քիլոմէթր հեռու* եւ այլն, բայց բացառական հոլովով խնդիր կը պահանջեն ժամանակ ու տեղ ցոյց տալու պարագային՝ *պատերազմէն առաջ կամ ետք, Գիրերու Գիւրէն առաջ կամ ետք, այդ օրէն առաջ կամ ետք, կամորջէն առաջ կամ ետք, սահմանէն ասդին կամ անդին*:

– *Իբրեւ, որպէս* կապերուն կազմած կապական դարձուածքը նախադասութեան մէջ ունի մասնական բացայայտիչի դեր, հետեւաբար ասոնց կապի խնդիրը թիւով, հոլովով ու պաշտօնով կը համաձայնի բացայայտեալին հետ: Օրինակ, *Ինծի, իբրեւ ճամբորդ, մարդը հարցումներ ըրաւ*: Հոս կը հասկցուի, որ մարդը, այսինքն՝ ճամբորդը ինծի հարցումներ ըրաւ: Բայց կրնայ ըլլալ ճամբորդը *ես* էի, այդ պարագային նախադասութիւնը պէտք է ըլլար՝ *Ինծի, իբրեւ ճամբորդի, մարդը հարցումներ ըրաւ*: Ուշադիր ըլլալ համաձայնութեան պարագաներուն:

Ես, իբրեւ բժիշկ, բազմազբաղ եմ: Ես – բժիշկ՝ ուղղական, եզակի, ենթակայ զբաղած եմ ստորոգիչին:

Զիս, իբրեւ իրենց ուսուցիչը, յարգանքի արժանացուցին: Զիս–ուսուցիչը՝ հայցական, եզակի, ուղիղ խնդիր *արժանացուցին* ստորոգիչին:

Մեր, իբրեւ աշակերտներու, տեսակէտները լսեցէք: Մեր – աշակերտներու՝ սեռական, յոգնակի, յատկացուցիչ *տեսակէտները* յատկացեալին:

Իրեն, իբրեւ մօր, մատուցեցէք պատիւը: Իրեն – մօր՝ տրական, յոգնակի, անուղղակի խնդիր *մատուցեցէք* ստորոգիչին:

Մեզմէ, իբրեւ միութենականներէ, պատրաստակամութիւն կ'ակնկալուի: Մեզմէ – միութենականներէ՝ բացառական, յոգնակի, անուղղակի խնդիր կ'ակնկալուի ստորոգիչին:

Ձեզմով, իբրեւ մեր լաւագոյն **մարզիկներով**, լաւապես ենք: **Ձեզմով – մարզիկներով**՝ գործիական, յոգնակի, միջոցի անուղղակի խնդիր լաւապես ենք ստորոգիչին:

Իբրեւ կապը փոխարինելի է որպէս-ով:

բ) **Սեռական** հոլովով խնդիր կ'առնեն *քով, վրայ, տակ, նման, մէջ, առջեւ, ետեւ, վերեւ, ներքեւ, դիմաց, արեւն, շուրջ*, որոնք անձնական դերանուններուն սեռական հոլովին հետ յօդ կը ստանան՝ *իմ քովս, իմ քովէս, մեր դիմացը*, բայց գոյականի հետ իբրեւ կապ գործածելու պարագային յօդառութիւնը բացառուած է՝ *սեղանին քով, սեղանին վրայ, սեղանին տակ, աղջկան քով, ջուրին մէջ, ծառերուն միջեւ, խանութին դիմաց*:

– *Ետեւ, առջեւ* կապերը կ'առնեն սեռական հոլովով խնդիր՝ *մեր առջեւ* կամ *ետեւ*, բայց խնդիրը քանակ ցոյց տալու պարագային կ'առնեն հայցական հոլով՝ *քայլ մը ետեւ կամ առջեւ, երկու մեթր ետեւ կամ առջեւ, քիչ մը ետեւ կամ առջեւ* եւ այլն:

– *Մասին, պատճառով, նպատակով, առթիւ, միջոցին* կապերը *այս, այդ, այն* ցուցական դերանուններուն անփոփոխ ձեւերուն հետ կը գործածուին՝ *այդ մասին կամ պատճառով, այս նպատակով կամ առթիւ կամ միջոցին*: Գոյականի եւ դերանունի սեռական հոլովին հետ կը գործածուին անփոփոխ՝ *ներկայի մասին, տկարութեան պատճառով, սերտելու նպատակով, տարեդարձիս առթիւ, գործողութեան միջոցին, ձեր մասին, իմ պատճառով*:

գ) **Տրական** հոլովով խնդիր կ'առնեն *առանց, յանուն, ըստ, համաձայն, հակառակ, համար, չափ, հետ* կապերը, ինչպէս՝ *առանց քեզի, առանց սիրոյ, յանուն հայրենիքի, ըստ իս/ըստ ինծի, ինծի համար, ինծի չափ, ինծի հետ, հակառակ քեզի/քեզի հակառակ* եւ այլն:

– *Դէմ, մօտ* կապերը կ'առնեն տրական հոլովով խնդիր՝ *ինծի դէմ կը կանգնի, մեզի դէմ կ'աշխատի, ձեզի դէմ, ինծի մօտ կը զգայ, ձեզի մօտ է, մարդու մօտ է*. յօդ առնելու պարա-

գային կ'ունենան սեռական հոլովով լրացուցիչ՝ *իմ դէմս* կամ *մօտս կը գտնուի*, *ձեր դէմը* կամ *մօտը* եւ այլն: Սեռականով եւ տրականով դարձուածքները իմաստով համարժէք չեն: Սեռական հոլովով կապակցութիւնները բառացի կը հասկցուին, մինչ տրական հոլովով կապական դարձուածքները ունին փոխաբերական երանգ մը.

իր մօտ է (քով) – իրեն մօտ է (հարազատ է):

Մեր մօտ է (քով) – մեզի մօտ է (յարաբերութեամբ՝ մտերիմ, հարազատ):

Ձեր դէմ խօսեցաւ (դիմաց) – Ձեզի դէմ խօսեցաւ (բամբասեց, չարախօսեց):

Իմ դէմս (դիմացս) կեցաւ – ինծի դէմ կեցաւ (հակառակեցաւ, ընդդիմացաւ):

Մօտ եւ *դէմ* կապերու սեռական հոլովով խնդիրի հետ գործածութիւնը նոր երեւոյթ է արեւմտահայերէնի մէջ, որովհետեւ անոնց համար լեզուն ունի ւաւելի դիպուկ կապեր՝ *քով* եւ *դիմաց*. *իր քով է, մեր քով է, մեր դիմաց խօսեցաւ, իմ դիմացս կեցաւ*: Մօտ-ի փոխարէն ւաւելի ճիշդ է ըսել՝ *Գիրքս քովդ պահէ: Քովս տեղ չկայ*:

– *Շնորհիւ* կապը, իբրեւ յետադրութիւն, կ'առնէ սեռական հոլով՝ *իմ շնորհիւ, քու շնորհիւ, անոր շնորհիւ*, իսկ իբրեւ նախադրութիւն՝ կ'առնէ տրական հոլով՝ *շնորհիւ ինծի, շնորհիւ քեզի, շնորհիւ անոր*: Խորթ է *շնորհիւ* կապը յօդերու հետ գործածելը՝ *շնորհիւս, շնորհիւդ, շնորհիւր*:

Շնորհիւ, հեղեւանքով, պատճառով, բերումով կամ բերմամբ կապերու գործածութեան աստեւ պէտք է կապի խնդիրի իմաստին ուշադրութիւն դարձնել. *հօրս **օգնութեան շնորհիւ**, անակնկալ հիւրեր ունենալու հեղեւանքով, ծանր հիւանդութեան պատճառով, բախտի բերմամբ*:

– *Հետ* կապը անձնական դերանուններու հետ կ'առնէ տրական հոլովով խնդիր՝ *ինծի, մեզի, քեզի, ձեզի, իրեն, իրենց հետ*, բայց սեռական հոլովին հոտ գործածուելով յօդ

կ'առնէ՝ *իմ հեպս, քու հեպդ, իր հեպը, մեր, ձեր, իրենց հեպը...*: Գոյականին հետ այս կապը պէտք է գործածել առանց յօդի՝ *մօրս հեպ, քրոջս հեպ, պայուսակին հեպ, բոլորին հեպ* եւ այլն, հետեւաբար այդ կապի խնդիրները տրական կը նկատուին: Ծիշդ չէ ըսել *քրոջս հեպը*:

– *Փոխանակ, փոխարէն, փոխան*. հոմանիշ են: Փոխանակ-ը նախադրութիւն է, կ'առնէ տրական հոլովով խնդիր. *փոխանակ ինծի, մեզի, քեզի, ձեզի, իրեն*: Փոխարէն-ը յետադրութիւն է եւ կ'առնէ սեռական հոլով խնդիր. *իմ փոխարէն, քու փոխարէն, հացի փոխարէն*. դերանուններու հետ սովորաբար յօդ կ'առնէ: Փոխան-ը կրնայ նախադաս եւ յետադաս գործածուիլ, միշտ տրական հոլովով խնդիր կ'առնէ. *փոխան մեզի՝ որբերուն հոգ տարէք*. նախադաս. *Վարդի փոխան փուշ քաղեցի*. յետադաս: Նախադաս կապերով կազմուած կապական դարձուածքները նախադասութենէն բուծով կը բաժնուին. *փոխանակ ինծի՝ քեզ նշանակենք այս գործին վարիչ*: *Փոխան մեզի՝ որբերուն հոգ տարէք*:

– *Հեպետողութեամբ, համեմատութեամբ*. ասոնց խնդիրը, երբ նախադաս անձնական դերանուն է, կը դրուի սեռական հոլովով. *իմ հեպետողութեամբ, ձեր հեպետողութեամբ, իր համեմատութեամբ*, իսկ երբ յետադաս է՝ կը դրուի տրական հոլովով. *հեպետողութեամբ քեզի, հեպետողութեամբ մեզի, համեմատութեամբ ինծի* եւ այլն: Գոյական կապի խնդիրն ալ կրնայ նախադաս ու յետադաս գործածուիլ. *յայտագիրին հեպետողութեամբ կամ հեպետողութեամբ յայտագիրին*:

դ) **Բացառական** հոլովով խնդիր կ'առնեն, ինչպէս վերը տեսանք, *ասդին, անդին, հեռու, ի վեր, ետք* կապերը, նաեւ *վար, վեր, զար՝ ծառէն վար, փունէն վեր, քեզմէ՛ զար*: *Բացի* եւ *անկախ* կապերը ունին նախադաս եւ յետադաս գործածութիւն՝ *բացի քեզմէ՛ կամ քեզմէ՛ բացի, այս հարցերէն անկախ կամ անկախ այս հարցերէն*. կապը նախադաս գործածելու պարագային՝ կապական դարձուածքը նախադասութենէն բուծով կը բաժնենք. *բացի ինձմէ՛՛ մարդ չկար այնպեղ*:

դ) **Գործիական** հոլովով խնդիր կը պահանջեն *հանդերձ, մէկտեղ, միասին*: Օրինակ՝

Անով մէկտեղ գոհ չմնաց:

Այս **թերիներով մէկտեղ** գնահատուեցաւ:

Ամբողջ **գոյքով միասին** տունը ծախեցին:

Պարգեւատրուելով հանդերձ գոհ չմնաց:

Հանդերձ կապը ունի նախադաս եւ յետադաս գործածութիւն գրաբարածեւ հետեւեալ կապական դարձուածքին մէջ. կը մեկնին **հանդերձ ընտանեօք** կամ կը մեկնին **ընտանեօք հանդերձ**:

Ը.– ՇԱՂԿԱՊ

8.1.– Շաղկապը իբրև խօսքի մաս

Շաղկապները առանձին խօսքի մաս կը կազմեն: Անոնք անթեք բառեր են, չունին նիւթական իմաստ, կ'արտայայտեն քերականական յարաբերութիւններ եւ իրարու կը կապեն նախադասութեան երկու անդամներ կամ բառեր եւ նախադասութիւններ:

Մուկն **ու** կատուն, գարին **եւ** ցորենը, Արեւ **կամ** Արեգակ, ծառ **թէ** ծաղիկ (բառեր):

Գրեցի **եւ** գոց սորվեցայ: Չեմ գար, **որովհետեւ** ուշ է արդէն (նախադասութիւններ):

Ըստ գործածութեան՝ շաղկապները կ'ըլլան.

ա) Մենադիր շաղկապներ՝ *եւ, ու, բայց, սակայն, որովհետեւ, որպէսզի* եւայլն: Օրինակ՝ *Եկայ, բայց քեզ չտեսայ:*

բ) Կրկնադիր շաղկապներ՝ *եւ՛..., եւ, թէ՛..., թէ՛, թէ՛... եւ թէ, ո՛չ..., ո՛չ, ո՛չ... եւ ոչ, ալ..., ալ, կամ..., կամ, կամ... եւ կամ:* Օրինակ՝ **Թէ՛** կու լամ, **թէ՛** կ'երթամ:

գ) Զուգադիր շաղկապներ՝ *ո՛չ միայն..., այլեւ (այլ նաեւ), ո՛չ թէ..., այլ, թէեւ..., բայց (սակայն), որովհետեւ..., ուրեմն (ուստի), քանի որ..., ուստի (հետեւաբար), թէպէտ (թէպէտեւ)...*, բայց: Օրինակ՝ **Ոչ միայն** գոհ մնաց, **այլեւ** պարգեւատրեց լաւագոյնները:

Ըստ կազմութեան՝ շաղկապները կ'ըլլան.

ա) Պարզ՝ *եւ, ու, բայց, եթէ, թէ, ալ, սակայն, իսկ, կամ, մինչ, ուստի, ուրեմն, քանի* եւ այլն:

բ) Բարդ՝ *այսինքն, թէեւ, թէկուզ (եթէ կ'ուզես), թէպէտ, թէպէտեւ, միայն, մինչդեռ, մինչեւ, նաեւ, նոյնիսկ, այլեւ, որովհետեւ, որպէսզի, քանզի, վասնզի, (կցական բարդութիւն), քանի որ, մանաւանդ որ, մինչեւ որ, այնքան որ, ինչպէս եւ, ուստի եւ, նմանապէս եւ, իբրեւ թէ, միայն թէ, քան թէ, կամ թէ,*

կարծես թէ, թէ ոչ, ապա թէ ոչ, եւ ոչ թէ, քանի դեռ, եթէ նոյնիսկ (յարադրաւոր)...

Ըստ տեղի՝ շաղկապները առհասարակ կը դրուին երկրորդ կապուող անդամէն՝ բառէն կամ նախադասութենէն առաջ. *Գնա՛, սակայն մեզ մի մոռնար: Ըսաւ, թէ՛ գարունը մօտ է: Քանի մը շաղկապներ կը դրուին երկրորդ կապուող անդամէն ետք, այսինքն յետադաս են.*

Կը սպասէինք, Սարգիսն ալ եկաւ:

Մենք կը խաղայինք. անոնք եւս մասնակցեցան:

Յետադաս է նաեւ խօսակցական նէ (եթէ) շաղկապը, որ գրականէն մերժուած է. *Գաս նէ՛ հանդիպիր:*

Ըստ շարահիւսական դերի՝ կ'ըլլան.

ա) **Համադասական** շաղկապներ, որոնք իրարու կը կապեն համադաս կամ համագոր անդամներ ու նախադասութիւններ, ինչպէս՝ *եւ, ու, իսկ, բայց, սակայն, կամ, ալ, եւս, այլեւ, մինչդէռ, նաեւ, նոյնիսկ, անգամ, մինչեւ իսկ, մանաւանդ, այսինքն, բայց եւ այնպէս, ոչ թէ... , այլ, եւ ոչ թէ (թէ ոչ), կամ թէ, եւ կամ թէ, եւ կամ, թէ... , թէ՛ (թէ...եւ թէ), ո՛չ... , ո՛չ (ո՛չ... եւ ոչ), եւ... , եւ, կամ... , կամ (կամ...եւ կամ), ապա թէ ոչ, ոչ միայն... , այլ նաեւ: Օրինակ՝ *Մուկն ու կապրուն եղբայրացան: Կապրուն մլաւեց, իսկ շունը հաջեց:**

բ) **Ստորադասական** շաղկապներ, որոնք ստորադաս նախադասութիւնը կը կապեն գլխաւոր նախադասութեան, ինչպէս՝ *թէ, եթէ, որ, որպէսզի, որովհետեւ, մինչեւ որ (մինչեւ), մինչ, թէեւ, հակառակ անոր որ, մինչեւ անգամ եթէ, թէկուզ, թէպէտ, թէպէտեւ, քանի որ, քանի դեռ, քանի, նախքան որ, մանաւանդ որ, չէ՛ որ, վասնզի, քանզի, պայմանաւ որ, միայն թէ, եթէ նոյնիսկ, ուստի, ուրեմն, հետեւաբար, ուրեմն եւ, ուստի եւ, հետեւաբար եւ, այնպէս որ եւ այլն: Օրինակ՝ *Կը վերադառնամ, եթէ խաղադրութիւն ըլլայ:**

Յարաբերական դերանունը ստորադաս նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան կապող դեր ունենալով նախադասութեան անդամ է եւ կ'արտայայտէ գլխաւոր նա-

խաղասութեան մէկ անդամին՝ **յարաբերեալին** իմաստը, կ'ունենայ անոր թին ու դէմքը: Ստորադասական շաղկապը նոյն դերը կը կատարէ, բայց անթեք խօսքի մաս է եւ նախադասութեան անդամ չի կրնար ըլլալ:

Ըստ քերականական իմաստի՝ համադասական եւ ստորադասական շաղկապները տարբեր խումբեր կը կազմեն:

Համադասական շաղկապները կ'ըլլան.

1) **Միատրական** կամ **յաւելական** շաղկապներ (*եւ, ու, եւս, ալ, նաեւ, այլեւ, եւ...եւ, թէ...թէ, ո՛չ...ո՛չ, ալ...ալ, ոչ միայն...այլեւ, ինչպէս եւ, ինչպէս նաեւ*): Ասոնցմով կապուող նախադասութեան անդամներն ու նախադասութիւնները ներքին տրամադրութեամբ եւ իմաստներով կը շարակցին իրարու՝ առանց հակադրութեան կամ փոխադարձ ժխտման.

Թէ՛ աղան եմ, թէ՛ ծառան եմ մեր փան:

Ոչ միայն գոհացաւ, այլեւ շնորհակալութիւն յայտնեց:

2) **Տրոհական** շաղկապներ (*կամ, եւ կամ, կամ...կամ, կամ թէ, կամ թէ չէ, թէ*), որոնցմով կապուող նախադասութեան անդամներն ու նախադասութիւնները իրար կը բացառեն կամ երկընտրանք կը յայտնեն երկուստեք.

Եկրոր կամ հեռացիր:

Կամ փաստաբան կ'ըլլայ, կամ ստալինիստ:

Կը խղճահարուի՞, թէ՛ կը շողոքորթէ:

3) **Ներհակական** շաղկապներ (*իսկ, սակայն, բայց, մինչ, այնինչ, ոչ թէ, այլ ոչ թէ, ոչ թէ...այլ, եւ ոչ թէ*): Ասոնք կ'արտայայտեն կապակցուող բաղադրիչ նախադասութիւններու իմաստային այլեւալ հակադրութիւնները.

Ոչ թէ խաւարում է, այլ կէս գիշեր եղաւ:

Կ'ուզէի քեզի հետը ըլլալ ամռան, բայց պիտի չկրնամ ասկէ հեռանալ:

Քոյրը կ'երգէ, իսկ եղբայրը կը նուագէ:

4) **Բացայայտման** շաղկապներ (*այսինքն, այսինքն թէ, այն է, ըսել է թէ, իմն*): Ասոնք կ'արտայայտեն կապակցուող նախադասութեան անդամներուն կամ նախադասութիւններուն իմաստային նոյնականութիւնը.

Հիանդ ես, ըսել է թէ պիտի բացակայիս:

Բարձր գնահատուեցար, այսինքն լաւ պատրաստուած էիր:

Ստորադասական շաղկապները կ'ըլլան.

1) **Մեկնական** շաղկապներ՝ *որ*⁴², **թէ**: Ասոնցմով սկսող ստորադաս նախադասութիւնը կը մեկնէ կամ կը բացատրէ գլխաւոր նախադասութիւնը: Այս երկու շաղկապները նոյն դերը կը կատարեն, սակայն *որ* շաղկապով վկայուածը հաստատ տեղեկանք մըն է, իսկ **թէ**-ով փոխանցուածը՝ թէական, երկբայելի կամ ուրիշէն ստացուած:

Տնօրէնը յայտնեց, որ վաղը քննութիւնը կը սկսի:

Չհասկացայ, թէ ինչ կ'ըսես: Կ'ըսէին, թէ անտարին մէջ փախստականներ ապաստանած են:

2) **Նպատակի՝** *որպէսզի, որ*: Ասոնցմով սկսող ստորադաս նախադասութիւնը ցոյց կու տայ գլխաւոր նախադասութեան նպատակի պարագան.

Բարեկամիս դիմեցի, որպէսզի տեղեկութիւն ստանամ պատրահարի մասին:

Որ մեկնական շաղկապը նոր լեզուին մէջ ազատօրէն կը փոխարինէ նաեւ որպէսզի շաղկապը. Հիանդանոց մտաւ, որ գործողութիւն ըլլայ: Մկրապը տուր, որ վիրակապը կտրես: Ասիկա ընդհանրացած երեւոյթ մըն է, թէեւ նախընտրելի է որպէսզի շաղկապը գործածել:

Հակառակ երեւոյթն ալ նկատուած է. *որպէսզի* նպատակի շաղկապը գործածել որ-ի փոխան: Օրինակ՝ *Փաշինեան*

⁴² *Որ* ստորադասական մեկնական շաղկապը կը կապէ անուղակի խօսքը պատմողի խօսքին. *Հայրս ըսաւ, որ շուր վերադառնամ*: Նաեւ հանդէս կու գայ *որպէս զի* ստորադասական շաղկապի դերով, որ կը կապէ նպատակի պարագայ ստորադասական նախադասութիւնը գլխաւորին. *Կ'աճապարէի, որ (որպէս զի) շուր վերադառնամ*: Որ բառը նաեւ հարցական-յարաբերական դերանուն է: Յարաբերական դերանունը նոյն դերը կը կատարէ, սակայն ան նախադասութեան անդամ է, թէքուող խօսքի մաս, թիւով ու դէմքով կը համաձայնի իր յարաբերելիին. *Այս այն լեռն է / Որ ամենուս բիբին խորն է բեռտուած / Որմէ որքան կը հեռանանք այնքան կը զգանք թէ իրն ենք / Որուն որքան կը մօտենանք այնքան կը զգանք թէ ինչ ենք (Ձեռ)*:

պահանջեց, որպէսզի հանդիպումը ըլլայ թղթակիցներու ներկայութեան: Պէտք է ըլլայ՝ Փաշինեան **պահանջեց, որ** հանդիպումը ըլլայ թղթակիցներու ներկայութեան:

3) **Պայմանի՝ եթէ, միայն թէ, եթէ միայն, պայմանաւ որ:** Ասոնցմով սկսող ստորադաս նախադասութիւնը ցոյց կու տայ գլխաւոր նախադասութեան պայմանի պարագան.

Ներկայացման կ'երթանք, եթէ շուրջ վերադառնաս:

Մեծ մայրիկին կ'երթանք, պայմանաւ որ օրը Կիրակի ըլլայ:

4) **Պատճառի եւ հիմունքի՝ որովհետեւ, քանի (որ), վասնզի, քանզի:** Ասոնցմով սկսող ստորադաս նախադասութիւնը ցոյց կու տայ գլխաւոր նախադասութեան պատճառի կամ հիմունքի պարագան.

Տա՛ք հագուի՛ր, որովհետեւ կը ձիւնէ:

Գիրքը չկարդացի, քանի որ տեսողութիւնս տկարացեր է:

Մի՛ ջրեր բոյսը, քանի դեռ այս առաւօտ ջրեցի:

5) **Ժամանակային՝ մինչեւ որ, մինչ, քանի, քանի դեռ:** Ասոնցմով սկսող ստորադաս նախադասութիւնը ցոյց կու տայ գլխաւոր նախադասութեան կատարման ժամանակը, միջոցը, ընթացքը.

Քանի կ'երթայ՝ այնքան կը յամառի:

Մինչ դուն կը նուագէիր՝ ես կը հետեւե՛ի շարժումներուդ:

6) **Հետեւանքի՝ ուստի, ուրեմն, հետեւաբար:** Ասոնցմով սկսող ստորադաս նախադասութիւնը ցոյց կու տայ գլխաւոր նախադասութեան գործողութեան հետեւանքն ու արդիւնքը.

Ընթերցումդ կը կաղայ, հետեւաբար ամեն օր երկու էջ պէտք է կարդաս:

7) **Հակառակ հիմունքի՝ թէեւ, թէպէտ, թէպէտեւ, եթէ նոյնիսկ, մինչեւ անգամ եթէ, եթէ...ալ:** Ասոնցմով սկսող ստորադաս նախադասութիւնը ցոյց կու տայ գլխաւոր նախադասութեան հակառակ հիմունքի պարագան.

***Եթէ** աղաչէ **ալ՝** պիտի չվերադարձնեմ գումարը:*

*Պիտի չելլեմ փունէն, **եթէ նոյնիսկ** սպառնայ դատարան դիմել:*

Թէեւ ցուրտ է փակաւին, բայց ծովափին լողորդներ կ'երեւին:

8) **Ձեւի՝** ինչպէս, ինչպէս որ, կարծես, կարծես թէ: Ասոնցմով սկսող ստորադաս նախադասութիւնը ցոյց կու տայ գլխատոր նախադասութեան ձեւի պարագան.

Այնպէս կը գեղգեղէր, կարծես սոխակ մը ըլլար:

8.2.– Շաղկապին կէտադրութիւնը

Ստորակէտ կը դնենք.

ա) Զուգադիր շաղկապներու միջեւ. ասոնք կազմուած կ'ըլլան երկու իրարմէ անջատ եզրերէ. մէկը կը գործածուի առաջին նախադասութեան, իսկ երկրորդը՝ երկրորդ նախադասութեան հետ: Ստորակէտը կը դրուի երկրորդէն առաջ:

Համադասական զուգադիր շաղկապներ են *ոչ միայն... այլեւ, ոչ միայն..., այլ նաեւ, ոչ թէ..., այլ:* Օրինակներ՝

Ոչ թէ գիշեր եկաւ, **այլ** արեւի խաւարում պատահեցաւ:

Ոչ միայն հմուտ խմբավար էր, **այլեւ** յայտնի էր իբրեւ դաշնակահար:

Ոչ միայն քաջ զինուոր էր, **այլեւ՝** ճարտար ռազմագէտ:

Ստորադասական զուգադիր շաղկապներ են՝ *եթէ..., ապա, թէկուզ..., բայց (սակայն), թէեւ..., բայց (սակայն), հակառակ անոր որ..., բայց (սակայն), քանի որ..., ուստի, որովհետեւ..., ուստի (ուստի եւ):*

Թէեւ ժամանակը ուշ էր, **սակայն** զինք տեսնելը անյետաձգելի էր:

Եթէ եղանակը շարունակէ տաք մնալ, **ապա** կ'արժէ ծովափ մը երթալ:

Եթէ գործակալ մը չըլլար, **ապա** այդտեղ պատահաբար չէր կրնար յայտնուիլ:

Քանի որ պատճառ ունիս չգալու, **ուստի** յարմար է հանդիպումը յետաձգել:

Թէեւ խոստացեր էր ներկայ գտնուիլ, **բայց** չեկաւ:

Չուգադիր շաղկապներով առաջին եզրի նախադասութիւնը ստորադաս նախադասութիւնն է ու պարտադիր կերպով նախադաս է:

Չուգադիր շաղկապները ոճականօրէն յաճախ դիրք կը փոխեն: Ատիկա շեղում կը նկատուի. **Թէն ժամանակը ուշ էր, սակայն զինք տեսնելը անյերաձգելի էր:** > **Ժամանակը թէն ուշ էր, զինք տեսնելը սակայն անյերաձգելի էր:**

բ) Կրկնադիր շաղկապներու միջեւ՝ *եւ...*, *եւ*, *թէ...*, *թէ*, *կամ...*, *կամ*, *ո՛չ...*, *ո՛չ*, *ալ...*, *ալ*. ասոնք կազմուած կ'ըլլան նոյն շաղկապի կրկնութեամբ. մէկը կը գործածուի առաջին նախադասութեան կամ անդամին, իսկ երկրորդը՝ երկրորդ նախադասութեան կամ անդամին հետ: Ստորակէտը կը դրուի երկրորդէն առաջ:

Թէ կու լամ, թէ կ'երթամ:

Ո՛չ կը պարես, ո՛չ կ'երգես:

Ե՛ւ կ'երգես, եւ կը պարես:

Բացի վերջինէն՝ կրկնադիր շաղկապները կրնան ընդմիջուիլ *եւ* շաղկապով. այդ պարագային ստորակէտը աւելորդ կը դառնայ, երկրորդի շեշտն ալ.

Թէ կու լամ եւ թէ կ'երթամ:

Թէ կը խմէին եւ թէ տաք վիճաբանութեան մը բռնուած էին:

Ո՛չ կը պարես եւ ոչ կ'երգես:

Կամ կը վերադառնաս շուտով եւ կամ կը հեռաձայնես:

Կրնան ընդմիջուիլ **ալ** շաղկապով. այդ պարագային ստորակէտը կը մնայ, շեշտն ալ.

Թէ կու լամ, թէ ալ կ'երթամ:

Ու շաղկապի կրկնութիւնը կրկնադիր շաղկապներու օրինաչափութեան մէջ չի մտներ. ստորակէտով չի տրոհուիր, շեշտ չ'առներ.

Բոլոր միրգերն աշունի / ու մեղր ու կաթ ու զինի (ՄՄ):

Այլ շաղկապան ալ նման գործածութիւն ունի, բայց ստորակէտով.

*Եղածն **ալ**, չեղածն **ալ** աւարեց թշնամին:*

գ) Ստորակէտ կը դրուի ստորադաս նախադասութիւնը կապող մենադիր շաղկապէն առաջ: Ստորադասական շաղկապներն են՝ *որ, թէ, եթէ, որպէսզի (որ), որովհետեւ, զի, քանզի, վասնզի, քանի որ, մինչ, մինչեւ, մինչեւ որ, թէւ, հակառակ անոր որ, հետեւաբար, թէպէտ, թէպէտեւ* եւ այլն: Օրինակներ.

*Ըսի, **որ** լուրերուն հետեւին:*

*Հօրեղբայրս ըսաւ, **թէ** մեզի պիտի հանդիպի:*

*Ուսուցիչը բացատրութիւնը կրկնեց, **որովհետեւ** նիւթը բարդ էր:*

*Ձմեռը ուշացաւ, **այնպէս որ** վառելանիւթի փազնապ չ'ենթադրուիր:*

*Քեզի կայարանը կը սպասեմ, **հետեւաբար** մի՛ մտահոգուիր:*

*Անձրեանոց չվերցուց, **հակառակ անոր որ** եղանակը անձրեային էր:*

Մինչ, եթէ, քանի որ, մինչեւ որ, հակառակ անոր որ շաղկապներով ստորադասական նախադասութիւնները սովորաբար նախադաս գործածութիւն ունին. այս պարագային՝ ստորադասը գլխաւոր նախադասութենէն դարձեալ ստորակէտով կը բաժնուի.

***Մինչ եւ կ'երգէի**, ընկերս երգարանը կը պրպտէր:*

***Եթէ կը փափաքիս**, կրնաս մասնակցիլ մեր խնճոյքին:*

***Քանի դեռ ձմեռ է**, վերարկուն ուսէդ մի՛ հաներ:*

Ոմանք նախադաս ստորադաս նախադասութիւնը ստորակէտի փոխարէն բուրով կ'անջատեն.

***Մինչ եւ կ'երգէի**' ընկերս երգարանը կը պրպտէր:*

***Քանի դեռ ձմեռ է**' վերարկուն ուսէդ մի՛ հաներ:*

Սովորական շարադասութեամբ յետադաս ստորադաս նախադասութիւններն ալ կրնան, ըստ ցանկութեան, նախադաս ըլլալ: Այդ պարագային ստորադաս նախադասութիւնը բովոյժ կը տրոհուի գլխաւորէն.

Յուզուեցայ, որովհետեւ դէպքը տպաւորեց զիս: > **Որովհետեւ** դէպքը տպաւորեց զիս՝ յուզուեցայ:

Արագ մեկնեցայ, որպէսզի ընդունելութենէն չբացակայիմ: > **Որպէսզի** ընդունելութենէն չբացակայիմ՝ արագ մեկնեցայ:

Ստորադաս շաղկապներով կապակցուած նախադասութիւնն ալ, յարաբերականով կապակցուած ստորադաս նախադասութիւններուն նման, կարելի է փոխակերպել դերբայական դարձուածքով պարզ ընդարձակ նախադասութեան: Քանի որ ստորադաս նախադասութիւնը գլխաւորին համար պաշտօն մը կը կատարէ՝ կարելի է զայն լուծել գլխաւորին մէջ ու ունենալ պարզ ընդարձակ նախադասութիւն մը.

Բարեկամիս դիմեցի, որպէսզի տեղեակ ըլլամ պատահարին մասին: > **Պատահարին մասին տեղեակ ըլլալու համար** դիմեցի բարեկամիս:

Չհասկցայ, թէ ինչ կ'ըսես: > **Չհասկցայ ըսածդ:**

Հասկցայ, որ շուարած էի: > **Շուարած ըլլալս** հասկցայ:

Քանի դեռ ձմեռ է՝ վերարկուն ուսէդ մի՛ հաներ: > **Դեռ ձմեռ ըլլալուն պարճառով** վերարկուն ուսէդ մի՛ հաներ:

Եթէ կը փափաքիս, կրնաս մասնակցիլ մեր խնճոյքին: >

Փափաքելու պարագային կրնաս մասնակցիլ մեր խնճոյքին:

Բացակայեցայ, որովհետեւ հիւանդ էի: > **Հիւանդ ըլլալու պարճառաւ** բացակայեցայ:

Պարզ նախադասութեան վերածուած բարդ ստորադասական նախադասութիւնը կ'ենթարկուի հետեւեալ փոփոխութիւններուն.

1) Կը կորսնցնէ կապակցող շաղկապները:

2) Ստորադաս նախադասութեան ստորոգիչը կը վերածուի դերբայի կամ դերբայական դարձուածքի:

3) Ստորակէտը կամ բուօթը աւելորդ կը դառնայ:

Պարզ շարայարութեամբ, այսինքն առանց ստորադասական շաղկապներու՝ բարդ ստորադասական բնոյթի նախադասութիւններ ալ կան: Ասոնք գլխաւորաբար կը հանդիպին խօսակցական կամ ժողովրդական բառ ու բանին մէջ: Նախընտրելի է բուօթով բաժնել.

Կ'ուզես՝ հասկցիր, կ'ուզես՝ մի՛ հասկնար (Եթէ կ'ուզես...):

Գող՝ սիրտը դող (Քանի որ գող է՝ սիրտը դող է):

Ուշ եկաւ Սասուն՝ շուտ եղաւ հասուն (Թէ՛ւ ուշ եկաւ Սասուն, սակայն շուտ եղաւ հասուն):

Դուն քուն, բախտդ արթուն (Թէ՛ւ դուն քունի մէջ ես, բայց բախտդ արթուն է):

դ) Ստորակէտ կը դրուի համադաս նախադասութիւնները կապող մենադիր շաղկապներէն առաջ: Այդ շաղկապներն են՝ *ալ, եւս, նաեւ, այլ, այլեւ, անգամ, մանաւանդ, նամանաւանդ, կամ ալ, եւ կամ, իսկ, բայց, բայց եւ այնպէս, սակայն, մինչդեռ, նոյնիսկ, այնուամենայնիւ, այսուհանդերձ, եւ ոչ թէ, ապա թէ ոչ եւ այլն.*

*Երկրասարդները պարեցին, **իսկ** մեծերը հիացան:*

*Գնա, **սակայն** դուռը ետեւէդ փակել մի՛ մոռնար:*

*Ինք դժոյհ կը թուէր, **մինչդեռ** ներկաները հիացած էին իրմով:*

Շարադասօրէն շեղում ըլլալով մէկտեղ՝ շաղկապը կրնայ նախադասութեան մէջ իր տեղը փոխել.

*Հոգիս **սակայն** կը յիշէ քեզ, դուն՝ ծաղկաւէտ գիւղիս ճամբան* (ՌՌ):

Կը պատահի, որ նախադասութիւնը սկսի համադասական շաղկապով, որ անուղղակի կերպով կը կապուի նախապէս ըսուած կամ լռելեայն հասկցուող միտքի մը.

Բայց լոյսն իմ հոգոյս քիչ-քիչ կը մաշի,

Շրթունքս են ծարաւ միակ համբոյրին (ՄՍ):

(Զանգակը մնաց:) Եւ ես այնպէս կը զգամ որ միշտ պիտի մնայ ինծի հետ (ԳԿՍ):

Նախադասութեան համադաս անդամները եւ յաւելական բնոյթի համադասութիւնները կը տրոհուին ստորակէտով, շարքի համադաս անդամներէն վերջին երկուքը սովորաբար կը կապուին **ու** կամ **եւ** շաղկապով: Ասոնցմէ առաջ ստորակէտ չի դրուիր:

Սոխակը, աղաւնին, անգղն ու արծիւը թռչուններ են:

Բարձրայարկ, քարաշէն եւ մաքուր շէնք մը կայ այդ փողոցին մէջ:

Կը սիրեմ ծնողքս, քոյրերս, եղբայրներս եւ ընկերներս:

Ձուկերը կը լողան, / օձերը կը սողան, / բադերը կը թռչին / ու կը քալեն:

Ելայ տեղէս, / պապուհանը գոցեցի / եւ լոյսը մարեցի:

Սովորաբար վերջին բաղադրիչէն առաջ դրուող շաղկապը կ'ազդարարէ նախադասութեան եւ միտքի աւարտը:

Ալ եւ եւս շաղկապները կու գան խօսքին մէջ. այդ պարագային ստորակէտը կը դրուի վերջին նախադասութենէն կամ համադաս անդամէն առաջ.

*Աշակերտները մեկնեցան, մենք **եւս** ճամբայ ելանք:*

*Երեքով որսի գացինք, յետոյ Պետրիկն **ալ** միացաւ մեզի:*

Ստորակէտ չի դրուիր նաեւ *եւ* այլն կապակցութենէն առաջ, ուր թուումը կ'ընդհատուի.

Գարնանային ծաղիկներ են մանուշակը, նունուֆարը, նարգիսը, սմբուլը եւ այլն:

Շարայարութեամբ, այսինքն միայն ստորակէտով, առանց յաւելական շաղկապներու կը կապակցուին գլխաւորաբար միաւորական եւ յաւելական յարաբերութեամբ նախադասութիւնները. *Աստուծին ականջին կարգուիլ բառը պահ մը կախուեցաւ, մեծցաւ, ծաւալեցաւ, գնաց երերցուց ներսը քնացող զգացումները (ՅՕ):*

Ես ինչո՞ւ չկարենամ երթալ Պոլիս, ո՞վ եմ ես, ի՞նչ եմ, ո՞ր պեպոթիւնը պիտի գրադի ինձմով, մեզմով (ՇՇ):

Ծաղիկներէն յուշիկ թերթեր կը թափէ
Բուրումներով օծուն հովիկն իրիկուան,
Հոգիներուն կ'իջնէ երազ մը բուրեան,
Ի՛նչ հեշտին է մթնշաղն այս սաւրափէ (ՄՄ):

Ու եւ եւ շաղկապներէն առաջ ստորակէտ կը դրուի, երբ յաջորդ նախադասութեան ենթական կը փոխուի.

Հասկեր կ'իյնան շարուէ շարան, **եւ** կ'արիւնին կակաչներ լուռ (ԴԿ):

Մեռաւ խանդավառ սէրերն երգելէն,
Ու պիտի յաւէտ միտքերն հմային
Իր թունդ քնարէն, **ու** երգերն ալ հին
Պաշտումով զմեզ միշտ պիտի գերեն (ՄՄ):

Ու եւ եւ շաղկապները վերացարկուած իմաստ ունին ու կրնան փոխարինել տարբեր խումբերու պատկանող շաղկապներ եւս.

Գիւղ գացի, **ու** չուզեցի տեսնել զինք: > Գիւղ գացի, **բայց** չուզեցի տեսնել զինք:

Իր հնամենի տոհմին անունը մշտավառ կանթեղի պէս պիտի փայլէր սերունդէ սերունդ, **եւ** ալ իր մահը պիտի չըլլար գերեզմանը իր տոհմին (ՄՄ): > Իր հնամենի տոհմին անունը մշտավառ կանթեղի պէս պիտի փայլէր սերունդէ սերունդ, **որովհետեւ** ալ իր մահը պիտի չըլլար գերեզմանը իր տոհմին:

Կամ շաղկապը ստորակէտ չ'առնէր, երբ կը տրոհէ երկու տարբեր բաներ, որոնց միջեւ ընտրութիւն պէտք է կատարուի, ինչպէս մարտիրոս կամ գրիչով գրել, նաւով կամ օդանաւով ճամբորդել, բայց ստորակէտ կը դնենք, երբ երկրորդը առաջին անդամին բացայայտումն է, ինչպէս՝ Հրազդանը, կամ Զանգուն Սեւանայ լիճէն սկիզբ կ'առնէ, կամ յաջորդ նա-

խաղասութեան ենթական կը փոխուի՝ *Դուն կու գաս, կամ եղբայրդ կը հանդիպի: Յանկարծ թուփեր կը յայրնուին, կամ կը ցցուի քար մը ճերմակ (ԴԿ):*

Թէ բառը բազմարժէք շաղկապ է.

- Համադասական յաւելական շաղկապ է՝ *Մարդ թէ կին, մեծ թէ պզտիկ դժգոհ մնացին: Սեւ թէ ճերմակ, հաւատացեալ թէ անհաւատ, հարուստ թէ աղքատ մարդիկ հաւասար են օրէնքին առջեւ:* Այս յաւելական շաղկապը կը կապակցէ երկու հականիշ բառեր: Ստորակէտ չ'առնէր:

- Համադասական տրոհական շաղկապ է՝ *Կը խղճահարուի, թէ կը շողոքորթէ. մարդ է, թէ զարդ.* ստորակէտ կ'առնէ: Տարածուած է հարցական բառեր ու նախադասութիւններ կապող *թէ* շաղկապն ալ պարոյկով օժտել՝ *մարդ է, թէ՛ զարդ:* Պէտք չէ. *Մարդ է, թէ զարդ: Տին է, թէ պալատ: Մայրը, թէ մօրաքոյրը եկաւ.* այս նախադասութիւններուն մէջ *թէ* շաղկապը ունի թէական իմաստային արժէք, այսինքն՝ առաջին հարցականէն ետք եկող բառը բնականաբար թէական կը դառնայ, առանց հարցական երանգ ընդունելու: Հարցումէն ոչինչ կը փոխուի, եթէ եզրերը տեղափոխուին՝ *զմարդ է, թէ մարդ:* Այդպէս է նոյնիսկ, եթէ հարցումին երկրորդ եզրը զեղջուած է. *վիրաւոր է, թէ...:*

- Ստորադասական մեկնական շաղկապ է՝ *Հարցուց, թէ բարեկամս ո՞ր է:*

- Կը գործածուի նաեւ *եթէ* ստորադասական շաղկապի փոխարէն. *Թէ մօրդ անգամ մտքից հանես՝ /Քո մայր լեզուն չմոռանաս (ՍԿ):* Արեւմտահայերէնի մէջ չէ թոյլատրուած:

Թ.- ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՄ ԵՂԱՆԱԿԱՒՈՐԻՉ ԲԱՌԵՐԸ

9.1.- Վերաբերականները իբրև խօսքի մաս

Վերաբերական բառերը (եղանակաւորիչ բառեր) առան-
ծին խօսքի մաս կը կազմեն: Անոնք կ'արտայայտեն խօսողին
վերաբերմունքը որեւէ միտքի կամ գաղափարի նկատմամբ:

Արդեօք *ի՞նչ էր անունը:*

Միթէ *շա՛մ ք եղաւ ուզածս:*

Հոս *արդեօք* եւ *միթէ* բառերը կ'եղանակաւորեն հարցու-
մը, անոր կու տան երկբայական երանգ, բայց հարցումէն
բան չեն փոխեր՝ *Ի՞նչ էր անունը: Շա՛մք եղաւ ուզածս:*

Շունը կարծես *կապողեցաւ:*

Շունը անշուշտ *կապողեցաւ:*

Հոս *կարծես* եւ *անշուշտ* բառերը նոյնպէս կ'եղանակաւոր-
են միտքը, *կարծես*-ը թէական, իսկ *անշուշտ*-ը՝ հաստատա-
կան շեշտ մը կու տան միտքին:

Վերաբերական բառերը կը նմանին ձեւի մակբայներուն,
բայց էապէս կը տարբերին անոնցմէ. այսպէս՝

Թռչունները մեղմիւ կ'երգեն:

Թերեւս գիւղը ամբողջ արթուն է հիմա:

Հոս *մեղմիւ* բառը մակբայ է, որովհետեւ *կ'երգեն* ստորո-
գիչին լրացումն է, ձեւի մակբայ է. *ի՞նչպէս կ'երգեն – մեղմիւ
կ'երգեն:* Բայց *թերեւս* բառը ստորոգիչին լրացումը չէ, այլ կը
վերաբերի ամբողջ նախադասութեան, ամբողջ միտքին, ան
խօսողին թէական վերաբերմունքը կ'արտայայտէ արտայայ-
տած միտքին նկատմամբ:

Վերաբերականները նախադասութեան անդամ չեն ըլ-
լար, նիւթական իմաստ չունին, խօսողին վերաբերմունքը
կ'արտայայտեն. անով եւս կը տարբերին ձեւի մակբայներէն:

Եթէ մակբայները սովորական շարադասութեամբ կը
դրուին բայէն առաջ, ապա եղանակաւորիչ բառերը կրնան
դրուիլ նախադասութեան մէջ որեւէ տեղ՝ տարբեր ուժգ-
նութեամբ արտայայտելով խօսողին վերաբերմունքը.

Հարկաւ ան տրուն վերադարձաւ:

Ան **հարկաւ** տրուն վերադարձաւ:

Ան տրուն վերադարձաւ **հարկաւ**:

9.2. – Վերաբերականները՝ ըստ իրենց արտայայտած վերաբերմունքի

Վերաբերական բառերը, ըստ իրենց արտայայտած վերաբերմունքին՝ կ'ըլլան.

Հաստատական՝ *ապաքէն, արդարեւ, յիրաւի, անշուշտ, ի հարկէ, անպայման, իսկապէս, հարկաւ, իրօք, իրաւ, անտրականկոյս* եւ այլն:

Երկբայական կամ թէական՝ *կարծեմ, կարծես, թերեւս, երեւի, իբր, իբր թէ, գուցէ, մի գուցէ, միթէ, արդեօք* եւ այլն:

Ցուցական՝ *ահա, ահաւասիկ:*

Զիջական՝ *ինչեւիցէ, ինչ որ է, յամենայն դէպս:*

Սաստկական՝ *նոյնիսկ, անգամ, մինչեւ իսկ, մինչեւ անգամ, մանաւանդ* եւ այլն:

Սահմանափակման՝ *գէթ, գոնէ, լոկ, սոսկ, միայն, մի-միայն:*

Կամային՝ *թող:*

Պատասխանական՝ *ո՛չ, չէ՛, այո՛:*

Բոլոր վերաբերականները կրնան պատասխան նախադասութեան տեղ գործածուիլ՝ տրուած լուրին կամ հարցումին հանդէպ միայն վերաբերմունք մը արտայայտելով, հարցական կամ հաստատական ձեւով: Օրինակ՝ *Տնօրէնը եկաւ* նախադասութեան պատասխան կրնան ըլլալ *միթէ, իրաւ, արդեօք* բառերը: *Երբեք* եւ *բնաւ* վերաբերական բառերը կրնան ընկերանալ ժխտական նախադասութեան: Օրինակ՝ *Չեմ տեսած զինք* նախադասութիւնը կրնանք եղանակաւորել ըսելով՝ *Երբեք չեմ տեսած զինք* կամ *Բնաւ չեմ տեսած զինք*, բայց անոնք չեն ժխտեր, ինչպէս ժխտական դերանունները կ'ընեն: Նոյնիսկ իբրեւ պատասխանական բառ կարելի չէ առանձին գործածել, պէտք է նախադասութիւնը հետեւի կամ նա-

խորդէ անոնց. *Տեսա՞ծ ես զինք* հարցումին պատասխանը
կ'ըլլայ.

Երբեք, չեմ տեսած:

Չեմ տեսած, երբեք:

Երբեք չեմ տեսած:

Ժ.- ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ (ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ)

Ձայնարկությունը առանձին խօսքի մաս է: Բնաձայնություններն ու զգացում եւ կոչ արտայայտող բացականչությունները կը կոչուին ձայնարկություններ (միջարկություն): Ձայնարկությունները նախադասութեան մէջ կը մտնեն, բայց նախադասութեան անդամ չեն ըլլար եւ սովորաբար միւս անդամներէն կը բաժնուին ստորակէտով.

Է՛հ, մնաք բարով, Աստուած եւ արեւ (ՊԴ):

Ո՛հ, ինչ անուշ եւ ինչպէս զով / Առաւօտուց փչես, հովիկ (ՄԴ):

Սակայն կը պատահի, որ ձայնարկությունը նախադասութեան անդամ ըլլայ նիւթական իմաստ մը առնելով.

Ախ ըսելով կորուստը ետ չես բերեր:

Վայ եկեր է այն մարդու գլխուն, որ այս պատուիրանը կը մոռնայ:

Հակառակն ալ կը պատահի. որեւէ նիւթական իմաստ ունեցող բառ կրնայ միայն զգացում արտայայտող բացականչութեան վերածուիլ. **մեղք գործեցիր՝** գոյական, **մեղք, երիտասարդ էր փակալին՝** ձայնարկութիւն:

Ձայնարկություններ կ'ըլլան երեք տեսակ.

ա) Բնաձայնական ձայնարկություններ, ինչպէս՝ *ծիւ-ծիւ, միահն, բըզզ, փըզզ, ճըռռ, մըռռ, մըրթ, թըխկ, շրըխկ, չըփ..*

Բնաձայնություններէն կը կազմուին սովորական բառեր՝ գոյականներ, ածականներ, բայեր, ինչպէս՝ *շահ՝ շահին, շահուն, շահել. խըճճ՝ խճիւն, խճուն, խճայ. բըզզ՝ բզզին, բզզան, բզզայ. միահն՝ մլալին, մլալան, մլալել եւ այլն: Բնաձայնություններէ կազմուած բառերը կրնան ըլլալ պարզ ու կրկնաւոր, ինչպէս՝ տըզզ՝ փզզայ, փզզայ, կըռո՝ կոռայ, կոկոռայ, ճըռո՝ ճոռայ, ճոճոռայ, մըռո՝ մոռայ, մոմոռայ...: Բնաձայնական գոյականները կը կազմուին գլխաւորաբար *իւն, ոց* ածանցներով՝ *խշրփոց, թխկոց, ոռնոց, բզզին, բառաչին, կարկաչին* եւ այլն, իսկ ածականները *ան* եւ *ուն* ածանցներով՝ *հաջան, մլալան, զոռան, շահուն, կարկաչուն, սօսափուն* եւ այլն:*

բ) Զգացական ծայնարկություններ, ինչպես *վախ, ռյ, վրյ, ախ, այ* (ցալի), *օհ, օֆ, աման, իւֆ* (դժգոհանքի), *հա, հը* (ծաղրի), *օխ, կեցցէ, կեցցես* (հրճուանքի), *ամա, հը, ըհը* (զարմանքի), *թոհ, փոհ, փիւֆ* (զգուանք), *ամօթ, աւաղ, ափսոս, մեղք, եղոկ* (ափսոսանքի) եւ այլն:

գ) Կոչական ծայնարկությունները կ'ըլլան.

– Դիմումի՝ *օն, օժ, քա, հէ, է, ռվ* (առանձին մարդոց եւ բազմութեան):

– Կանչի՝ *ջոհ* (հաւերու), *փիւ-փիւ* (կատուի), *հօ* (նախիրի) եւ այլն:

– Սաստի՝ *փըստ* (կատուի), *օշտ* (շան), *քըշ* (հաւու), *հու* կամ *սու* (լռեցնելու) եւ այլն:

Զայնարկություններ կարելի է համարել մանկական լեզուի տարբեր արտայայտությունները՝ *ամ* (կերակուր, ուտել), *օժ* (քնացիր, քուն), *փայտի* (քալել), *ընղա* (լաց, լալ) եւ այլն:

Զայնարկություններու գործածութեան օրինակներ հայ բանաստեղծութենէն.

Իմ մէկ հատիկս...օհ, ինչպէս սիրտս վրադ կը դողայ (ՎԹ):

Աւաղ, ապարանքի մը պէս մեծ էիր ու շքեղ (Ս):

Հօյհօյ, գեպը կը թրջէ ցայգուն քամակն արծաթուած (ՄՄ):

Օ՛հ, աս ինչ գրգանք, օ, աս ինչ անուրջ,

Կու տաս դուն ինծի, անձրեւոյ գիշեր (ՄՄ):

էհէ, էհէ, արտերուն մէջ մարդ մարդածայն չմտնէ (ԴՎ):

ՅԱՊԱԻՈՒՄՆԵՐ

ԱԱ	Արփիար Արփիարեան
ԱԳ	Արմէն Գարո
Ազդ	Ազդակ օրաթերթ
Ակօս	Ակօս ամսաթերթ
ԱՅ	Արտ. Յարութինեան
Ասպ	Ասպարէզ օրաթերթ
Արրտ	Արարատ շաբաթաթերթ
Բ	Բազմավէպ
Արեւելք	Արեւելք լրատ.կայք
Գ.	Գանձասար շաբաթաթերթ
ԳԶ	Գրիգոր Զոհրապ
ԳՊ	Գրիգոր Պլտեան
ԳՊ*	Գէորգ Պետիկեան
ԴՎ	Դանիէլ Վարուժան
Ե	Երուխան
Եո	Եռագոյն լրատ. կայք
ԵՏ	Եղիա Տեմիրճիպաշեան
ԵՕ	Երուանդ Օտեան
Զ	Զահրատ
ԶԽ	Զարեհ Խրախունի
ԶԵ	Զապէլ Եսայեան
Թ	Թորոնթահայ կայք
ԹՏԳ	Թամար Տօնապետեան-Գուգուեան
Ժ	Ժողովրդական
Ժմկ	Ժամանակ օրաթերթ
ԼՄՄ	Լալա Միսկարեան-Մինասեան
ԼԶՍ	Լեւոն Զ. Սիւրմէլեան
Հ	Համաստեղ
Ծ	Ծերենց
Հայր	Հայրենիք շաբաթաթերթ
ՀՍ	Համո Սահեան
ՄԶ	Մատթէոս Զարիֆեան

ՄԻ	Մուշեղ Իշխան
ՄՀԳ	Մ. Հ. Գնաճեան
ՄՄ	Միսաք Մեծարենց
ՄՄ*	Մատթէոս Մամուռեան
ՄՊ	Մկրտիչ Պեշկկթաշլեան
ՄՊ	Մովսէս Պչաքճեան
ՄՕ	Մաղաքիա Օրմանեան
ՅՆ	Յակոբ Նալպանտ
ՅՊ*	Յակոբ Պալեան
ՅՊ	Յակոբ Պարոնեան
ՅՕ	Յակոբ Օշական
ՆՀ	Նշան Հեքիմեան
ՆՕ	Նոր Օր օրաթերթ
ՇՇ	Շահան Շահնուր
ՊԴ	Պետրոս Դուրեան
Ռակ	Ռակ մամուլ կայք
ՌԶ	Ռուբէն Զարդարեան
ՌՀ	Ռոպերթ Հատտէճեան
ՌՈ	Ռուբէն Որբերեան
ՌՍ	Ռուբէն Սեակ
ՊԴ	Պետրոս Դուրեան
Ս	Սիամանթո
ՍԱ	Սազո Արեան
ՍԳ	Ս. Գիրք
ՍԿ	Սիլվա Կապուտիկեան
ՍՍ	Սիմոն Սիմոնեան
ՍՏ	Սրբուհի Տիսաբ
ՎԹ	Վահան Թէքէեան
ՎԹ*	Վեհանոյշ Թեքեան
ՎՇ	Վազգէն Շուշանեան
ՎՎ	Վահէ Վահեան
ՎՏ	Վահան Տէրեան

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

- Աբրահամեան Ս. Գ., Վերդեան Բ. Յ., Քոսեան Վ. Ա., Հայերէն լեզուի դասագիրք, Բ. հրատարակութիւն, Երեւան, 1968:
- Աղայան Էդ., Մեղրու բարբառը, Երևան, 1954:
- Աճառեան Հր., Հայերէն արմատական բառարան, 1971-1979, Երեւան:
- Այտընեան Արսէն, Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Բ. տպագրութիւն, Վիէննա, 1883:
- Առաքելեան Կարօ, Արդի հայերէնի քերականութիւն, Ա. գիրք, Պէյրութ, 1997:
- Առաքելեան Կարօ, Արդի հայերէնի քերականութիւն, Բ. գիրք, Պէյրութ, 1998:
- Ավետիսյան Յու. Ս., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգահրական քերականություն, Երևան, 2007:
- Աւետիքեան հայր Գաբրիէլ, Սիրմէլեան հայր Խաչատուր, Աւգերեան հայր Մկրտիչ, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1836-1867:
- Գաբամաճեան Սիմոն, Նոր բառգիրք հայերէն լեզուի, Կ. Պօլիս, 1910:
- Գայայան Յ. Թ. (Մխիթար Պոնտացի), Բառարան գանձարան հայերէն լեզուի, Բ. տպագրութիւն, Պէյրութ. 1967:
- Եղիայեան Արմենակ, Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց, ձեռնարկ՝ Արեւմտահայերէնի պաշտպանութեան յանձնաժողովի, Պէյրութ-Լիբանան (Մեր տրամադրութեան տակ կայ պատճենեալ օրինակ մը. ՀՀ ԳԱԱ Հր. Աճառեանի անուան ինստիտուտ):
- Զաքյան Հրանուշ, Հին հայերենի կրկնասեռ բայերը, տարժամանակյա քննություն, Գյումրի, 2015:
- Խաչատրյան Հ. Ռ., Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների բայական համակարգերի առնչությունները»․ տե՛ս Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների առնչությունները, Երևան, 2016:

- Կռանեան Անդրանիկ վրդ., Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրուֆ, 1998:
- Ճէրէճեան Գնէլ արքեպիսկոպոս, Տօնիկեան Փարամազ Կ., Տէր Խաչատուրեան Արտաշէս. Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուֆ, 1992:
- Ճիզմէճեան Պետրոս վարդ., Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Հալէպ, 1954-1957:
- Մալխասեանց Ստեփան, Հայերէն բացատրական բառարան, Երեւան, 1944-1945:
- Պետրոսյան Հրանտ Զ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 184:
- Սաքապետոյան Ռ. Կ., Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006:
- Տէր Խաչատուրեան Արտաշէս, Գանգրունի Հրանդ, Տօնիկեան Փարամազ Կ., Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուֆ, 1968:
- Քոսյան Վ., Արևմտահայերենի բառակապակցությունները, Երևան, 1986:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ե.- ԲԱՅ

5.1.- Բայը իբրև խօսքի մաս.....	3
5.2.- Բայական սկզբնաձև, լծորդություն և խոնարհիչ.....	3
5.3.- Աններածանց և ներածանցաւոր բայեր.....	6
5.4.- Սոսկածանցներ.....	7
5.5.- Կրկնաձև աներեւոյթներ	14
5.6.- Բազմապատկական ածանցներ.....	16
5.7. Պատճառական ածանցներ.....	17
5.8.- Կրաւորական ածանց.....	19
5.9.- Բային սեռերը.....	19
5.10.- Ներգործական սեռի բայեր.....	20
5.11.- Կրաւորական սեռի բայեր.....	24
5.12.- Անդրադարձ և փոխադարձ բայեր.....	28
5.13.- Չէզոք սեռի բայեր.....	30
5.14.- Պատճառական բայեր.....	33
5.15.- Բայական կրկնասեռություն և սեռափոխություն.....	35
ա) Երկսեռ բայեր՝ ներգործական և չէզոք.....	36
բ) Երկձեռութեամբ կրկնասեռ բայեր՝ ներգործական և չէզոք	43
գ) Դիմաւոր բայ-աներեւոյթ կապակցություններու խնդրառությունը.....	46
5.16.- Բայական յարադրություններ.....	52
ա) Զուգադրական բայեր.....	52
բ) պատճառական յարադրություններ.....	53
գ) Յարադրաւոր բայեր	53
5.17.- Դիմաւոր և անդէմ բայեր, խոնարհում.....	56
5.18.- Պարզ ժամանակներու խոնարհումը.....	58
ա) Ներկայ և անցեալ անկատար ժամանակներու խոհարհումը.....	58
բ) Անցեալ կատարեալ ժամանակի հիմքերը և վերջաւորությունները	61
գ) Հրամայականը	63

5.19.- Դերբայները եւ բաղադրեալ ժամանակները	65
ա) Աներեւոյթ կամ անորոշ դերբայ	65
բ) Ելու/ալու ապառնի դերբայի խնդիրը.....	67
գ) Ընթացակցական դերբայի խնդիրը.....	71
դ) Ներկայ կամ ենթակայական դերբայ.....	81
ե) Անցեալ դերբայներ.....	83
զ) Ապառնի դերբայ.....	87
է) Ժխտական դերբայ	88
5.20.- Ժխտական խոնարհում	90
ա) Սահմանական եղանակի ներկայ եւ անկատար ժամանակներու ժխտականը.....	90
բ) Արգելականի կազմութիւնը.....	92
գ) Ժխտականի կազմութիւնը միայն չ-ով.....	92
դ) Ժխտական խոնարհումի համանունութիւնները.....	94
5.20.- Զարտուղի բայեր	96
5.21.- Պակասաւոր բայեր.....	98
5.22.- Տարահիմք բայեր.....	100
5.23.- Բային շարահիւսական պաշտօնները.....	101
Զ.- ՄԱԿՔԱՅ	105
6.1.- Մակբայը իբրեւ խօսքի մաս.....	105
6.2.- Մակբայները ըստ իմաստի.....	107
6.3.- Մակբայներուն կազմութիւնը.....	109
Է.- ԿԱՊ	113
7.1.- Կապը իբրեւ խօսքի մաս.....	113
7.2.- Կապերուն տեսակներն ու քերականական իմաստները.....	114
7.3.- Կապերուն խնդրառոյթիւնը.....	121
Ը.- ՇԱՂԿԱՊ	127
8.1.- Շաղկապը իբրեւ խօսքի մաս.....	127
8.2.- Շաղկապին կէտադրութիւնը.....	132
Թ.- ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՍ ԵՂԱՆԱԿԱԻՈՐԻՉ ԲԱՌԵՐԸ	140

9.1.– Վերաբերականները իբրև խօսքի մաս.....	140
9.2. – Վերաբերականները՝ ըստ իրենց արտայայտած վերաբերմունքի	141
Ժ.– ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ (ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ)	143
ՅԱՊԱՒՈՒՄՆԵՐ	
ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.....	147

**ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ԼԵԶՈՒԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՅԱԿՈՒՔ ԶՈՒԱՔԵԱՆ

**ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**
(Կանոնակարգ եւ խնդիրներ)
Բ. Գիրք



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Սալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

